

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

* * * — Դպրեվանքը՝ հոգե-մտաւորման կազմաւորման դարբնոց 575

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ 578

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ
(Turning to God)..... 582

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Սեկսուալիս
Մատթէոս Աւետարանի (1.1-25) 588

ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ — Հայր Պաւել Ֆլորենսկի 602

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱԵԱՆ — Կանտի բարոյագիտութեան
նորարարութիւնը 616

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐՈՒԱՆԴ ՏԵՐ-ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ — Վեհափառին նուիրուած գիրքը..... 631

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ 635

ՀԱՅ ԴԱՏ 636

ՏՕՆԱԿԱՆ 642

ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ 646

ԴՊՐԵՎԱՆՔ 656

ՍՓԻՈՔԻ ՏԱՐԻ 660

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ 662


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ..... 665

Հ.Ե.Հ.Ո.Մ. 668

ՆԱՐԵԿԱՅԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ 670

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ..... 671

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ..... 676



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՄԱԿԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ
ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԿԿԻՈՅ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ԴՊՐԵՎԱՆՔԸ՝ ՀՈԳԵ-ՄՏԱԲՈՐՄԱՆ
ԿԱԶՄԱԲՈՐՄԱՆ ԴԱՐԲՆՈՑ***

Երեկ, եկեղեցական արարողություններով, այսօր, սուրբ եւ անմահ պատարագով, մեր եկեղեցին Նշեց Սրբոց Թարգմանչաց տօնը: Մեր եկեղեցւոյ օրացոյցին մէջ, այս տօնը բնորոշուած է որպէս ազգային-եկեղեցական տօն: Ես պիտի ուզէի այս բառերուն շարքին նաեւ անելցնել մշակոյթի եւ կրթութեան տօն: Մեր ժողովուրդի կեանքին մէջ, եկեղեցի, մշակոյթ, կրթութիւն եւ հայրենիք դարձած են մէկ ամբողջութիւն: Այս անբաժան ու անբաժանելի ամբողջութեան նպատակը եղած է հայ ժողովուրդի ինքնութեան պահպանումը: Այս տեսլականով եւ այս առաքելութեամբ, թարգմանչաց սերունդի հոգեմտաւոր հսկաները Ե. Դարուն Ա.Բ.Գ. ստեղծեցին. գիր, գրականութիւն, դպրութիւն ծաղկեցուցին. այլ խօսքով՝ հայու ինքնութեան արմատները ամրացուցին: Անոնք քաջ գիտէին, թէ ազգ մը իր ինքնութեամբ կը գոյատեւէ, իր ինքնութեամբ կը հզօրանայ, իր ինքնութեամբ կը ծաղկի ազգերու անդաստանին մէջ: Մեր

* Սոյն գրութիւնը խտացումն է Դպրեվանքի 91-րդ կրթական տարեշրջանի բացման առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանին մէջ, Կիրակի, 9 Հոկտեմբեր 2022-ին:

ժողովուրդի պատմությունը պերճախօս վկայություն մըն է, թե պատմութեան ընթացքին կորսնցուցիւք մեր անկախութիւնը, մեր եկեղեցիները, մեր դպրոցները, նոյնի՛սկ մեր հայրենիքը: Սակայն, չկորսնցուցիւք մեր ինքնաճանաչումը, պարզ բառով՝ մեր ինքնութիւնը:

Ե. Դարուն, Թարգմանչաց Սերունդը հիմքը դրաւ հայ դպրոցին, ո՛չ սովորական հասկացողութեամբ շէնք մը շինելով, այլ՝ գիր ու մշակոյթ ստեղծելով: Ոսկեդարը, քրիստոնէական հաւատքին հայացման դարն է: Քրիստոնէական հաւատքը հայացաւ եւ հայութիւնը՝ հայու ինքնութիւնը, հայու արժէքները քրիստոնէական սկարագիր ստացան: Հայութիւն եւ քրիստոնէութիւն երկխօսութեան ճամբով միաձուլուեցան եւ դարձան հայու իւրայատուկ ինքնութիւնը: Ե. Դարուն, հիմքը դրուեցաւ հայ դպրոցին: Ոսկեդարը, հայու ինքնութեան կազմաւորման եւ այդ ինքնութիւնը պահպանող ու պաշտպանող հայ դպրոցին դարն է: Հայ դպրոցը, որպէս հայու ինքնութեան կերտման դարբնոց, մեր պատմութեան ընթացքին մնաց տիրական ներկայութիւն մեր ժողովուրդի կեանքի մա՛յր էջին վրայ:

Դա՛րձեալ նայինք մեր պատմութեան: Մեր ժողովուրդը եկեղեցի շինեց, որպէս աղբիւր հայ մշակոյթի, եկեղեցւոյ կողքին նաեւ դպրո՛ց շինեց: Եկեղեցի եւ դպրոց միասնաբար լծուեցան հայու ինքնութեան կերտման, կազմաւորման, ծաղկման ու պահպանման: Տեղասպանութենէն ետք, եթէ եկեղեցւոյ կողքին չունենայինք հայ դպրոցը, Սփիւռքը պիտի հեռանար հայու արժէքներն, իր արմատներէն ու ինքնութենէն:

Այսօր եւս, ճակատագրական է հայ դպրոցին դերը մեր ժողովուրդի կեանքէն ներս: Բոլոր ա՛յն ծնողները, որոնք իրենց զաւակները օտարին օտարացող գիրկը կը նետեն՝ կարծելով որ օտար դպրոցին մակարդակը շատ աւելի բարձր է հայ դպրոցի մակարդակէն, կը սխալի՛ն: Բոլոր ա՛յն ծնողները, որոնք կը կարծեն, թէ օտար դպրոցին մէջ, իրենց զաւակները օտար լեզուներ աւելի լաւ կը սորվին, դարձեա՛լ ու մի՛շտ կը սխալին:

Մենք հպա՛րտ ենք հայ դպրոցով: Հայ դպրոցէն շրջանաւարտներ, օտար համալսարաններ գացած եւ բարձր վկայականներ ստացած են: Այսօր, հայ դպրոցը մեր բոլոր գաղութներէն ներս հսկայ նուաճումներ կ'արձանագրէ: Սակայն անհրաժեշտ է նոր մղում տալ հայ դպրոցի հայակերտումի առաքելութեան՝ նոր ուսուցիչներ պատրաստելով եւ մեր աշակերտները հայ դպրոց առաջնորդելով: Սա մեր հաւաքական պարտաւորութիւնն է:


Դպրե՛վանքը եւս, հայ դպրոցներու կարգին, իր իւրայատուկ տեղը եւ դերը ունի մեր կրթական-ուսումնական կեանքէն ներս: Եթէ հայ դպրոցը շէշտը կը դնէ հայակերտումի վրայ, Դպրե՛վանքը՝ հայակերտումի առընթեր հոգեմտաւոր կազմաւորման վրայ: Դպրե՛վանքի կեանքին մէջ հոգեւոր ու մտաւոր տարածքները մէ՛կ ամբողջութիւն կը կազմեն. Դպրե՛վան-

քին մէջ կը պատրաստենք, կը կազմաւորենք ա՛յնպիսի պատանիներ եւ երիտասարդներ, որոնց կեանքին մէջ հաւատքը, յոյսը, ազգին ու եկեղեցւոյ ծառայելու նուիրումը, կը դառնան ամենօրեայ ապրում: Դպրեվանքին մէջ կը կազմաւորենք ա՛յնպիսի անձեր՝ հոգեւորականներ, մտաւորականներ, կրթական մշակներ, ազգային գործիչներ, որոնց կեանքին մէջ իրենց անձը, իրենց կեանքին ու գործին կեդրոնը չդառնա՛յ, այլ՝ ազգը, եկեղեցին, համայնքը: Ա՛յս է ծառայութեան ճշմարիտ, հարազատ իմաստն ու նպատակը: Ապրիլ, գործել, տազնապիլ եւ պայքարիլ. մեր անձերէն վե՛ր ու վե՛հ. մեր անձերէն աւելի՛ մեծ, աւելի նուիրական նպատակներու համար: Դպրեվանքէն դուրս ելած հոգեւորականներուս համար, ծառայութիւնը մեր կեանքին դո՛շն է, ծառայութիւնը մեր կեանքին նպատա՛կն է, ծառայութիւնը մեր կեանքին ճամբան է ու կոչումը:

Դպրեվանքին մէջ մենք միայն ուսում չենք տար, այլ՝ նկարագիր կը կերտենք: Ուսումը կարելի է ամէն տեղ ստանալ, վկայականը կարելի է ամէն տեղ ստանալ. սակայն, նկարագի՛րն է եականը: Մենք Դպրեվանքին մէջ մա՛րդ կը կերտենք. այն մարդը որ նկարագիր չունի, մարդ չէ. եւ այսօր, մեր ժողովուրդը, Հայաստանէն սկսեալ ամէն տեղ, մարդո՛ւ պետք ունի, գլխաւոր մարդու: Մարդո՛ւ պակաս կայ. «Հունձք բազում են, սակայն մշակները՝ սակաւ», եւ այդ մշակները, մարդեր են, որոնց կեանքին մէջ Աստուծոյ ներկայութիւնը կայ, որոնց կեանքին դիմաց ազգին, եկեղեցւոյ ծառայութիւնը կայ, որպէս տեսիլք, որպէս նպատակ եւ որպէս յանձնառութիւն:

Հետեւաբար, երբ Դպրեվանքը իր դռները բանայ մեր աշակերտներուն առջեւ, ես վստահ եմ, որ Տեսչութիւն, Ուսուցչական Կազմ, Միաբանութիւն, ա՛յս գիտակցութեամբ պիտի լծուին հոգեմտաւոր կազմաւորման սրբազան առաքելութեան: Թող Աստուած օրհնե՛ հայու գոյութեան ու ամրութեան հզօր ամրոցներէն Հայ Դպրոցը: Թող Աստուած օրհնե՛ մեր Դպրեվանքը, որ միշտ եղած է ու կը շարունակէ մնալ առանցքը ու մղիչ ուժը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ
ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ***

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Ռաֆֆի Արսլանեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական սիրով կ'ողջունենք ձեզ: Հոգեկան խոր գոհունակութեամբ իմացանք *Համազգայինի* կեդրոնական վարչութենէն եւ *Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանի* տնօրէնութենէն, որ յատուկ սէր եւ նախանձախնդրութիւն կը շարունակէք տաժել կրթական այս օճախին նկատմամբ:

Արդարեւ, անձնապէս ծանօթ ըլլալով ձեր ընտանիքին, կ'ուզենք ուրախութեամբ հաստատել, թէ Արսլանեան գերդաստանի ազգանուէր ու մշակութանուէր ոգին կը շարունակէ մնալ արծարծ՝ նահապետական այս ընտանիքի բոլոր անդամներու կեանքին մէջ: Ահա այդ ոգին անգամ մը եւս գործնական արտայայտութիւն կը գտնէ ձեր նիրթական յանձնառութեամբը՝ Ճեմարանի մէջ նոր մանկամտորի կառուցման:

Արդ, ի գնահատութիւն ընդհանրապէս ձեր կատարած բարերարութեանց ու յատկապէս *Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանին* նկատմամբ ձեր ցուցաբերած սիրոյն, եւ անոր առաքելութեան առաւել արդիւնաւորման ի

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

խնդիր ձեր ունեցած ներդրումին, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի եւ ձեր ընտանիքին պարգեւէ քաջատոյժութիւն, եւ նորանոր իրագործումներով հարուստ երկար տարիներ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 23-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԷ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Զաւէն Ինճեճիկեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Ուրախութեամբ կարդացինք Քանատայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի վկայութիւնը՝ Քանատայի հայութեան կեանքէն ներս ձեր ունեցած երկար տարիներու անձնուէր ու անսակարկ ծառայութիւններուն մասին:

Արդարեւ, որպէս անդամ Քանատայի թեմի Ազգային Վարչութեան եւ Ազգային Երեսփոխանական Ժողովին, դուք գործօն մասնակցութիւն բերիք թեմի կազմաւորման ու բարգաւաճման մէջ: Կարելոր ներդրում ունեցաք նաեւ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային ու ընկերային կեդրոններու գործունէութեան մէջ: Բժախնդրութեամբ հետեւեցաք ձեզի վստահուած ծրագիրներու գործադրման ու իրագործման՝ ի խնդիր Քանատայի հայութեան հաւաքական կեանքի առաւել զարգացման ու արդիւնաւորման՝ գանազան բնագաւառներէ ներս:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի եւ Ազգային Իշխանութեան խընդրանքին, եւ ի գնահատութիւն ձեր ազգանուէր ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի եւ ձեր ընտանիքի անդամներուն պարգեւէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային անսպառ բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԸ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Արթօ Գապասագալեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Քանատայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իրազեկ դարձանք թեմի գործունէութեան մէջ երկար տարիներէ ի վեր ձեր բերած գործօն մասնակցութեան մասին:

Արդարեւ, Ազգային Վարչութեան եւ Ազգային Երեսփոխանական ժողովին որպէս անդամ ձեր մատուցած ծառայութիւններու կողքին, դուք ձեր մասնակցութիւնը բերիք նաեւ Քանատայի հայութեան հաւաքական կեանքը արժարժ պահելու կոչուած ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային ու ընկերային զանազան կեդրոններու գործունէութեան: Աշխատեցաք անխոնջ ազգին ու եկեղեցւոյ նկատմամբ ձեր պարտաւորութիւններու ամբողջական գիտակցութեամբ, հաւատալով, որ ժողովուրդի մը գոյատեւումն ու վերելքը անհատներու նուիրումով կ'իրագործուին:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի եւ Ազգային Իշխանութեան փափաքին, եւ անոր միացնելով մեր բարձր գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ ձեզի եւ ձեր ընտանիքի անդամներուն պարգեւէ քաջառողջ ու երջանիկ տարիներ, եւ առատ արդիւնատրութեամբ պսակէ ձեր ազգանուէր ծառայութիւնները:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԹ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիկին Շուշան Ճիզմեճեանին, «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ:

Յունաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խորէն Եպս. Տողրամաճեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ թեմի ազգային իշխանութիւնը բարձր կը գնահատէ «Լ. եւ Ս. Յակոբեան» վարժարանէն ներս որպէս մանկապարտիզպանուհի ձեր ունեցած երկար տարիներու վաստակը: «Կրթէ մանուկը իր ճամբան սկսած աստենը» (Առակ. ԻԲ.6) կ'ըսէ Աստուածաշունչը: Արդարեւ, մանկապարտեզի մէջ սկիզբ կ'առնեն հայ մանուկին անդրանիկ քայլերը՝ դէպի կեանքի ճանապարհ: Ուստի, հոն կատարուած աշխատանքը աստուածահաճոյ ծառայութիւն է, որուն նուիրուած իւրաքանչիւր անհատ արժանի է խոր յարգանքի ու բարձր գնահատանքի:

Արդ, ընդառաջելով Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Վարչութեան խընդրանքին, եւ ի գնահատութիւն ձեր երկարամեայ կրթական-դաստիարակչական ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ ձեզի շնորհէ առողջութիւն եւ Իր օրհնութիւնը անպակաս ընէ ձեր վրայէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԽԳ.*

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ (Turning to God)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ուրբաթ, 8 Մայիս 2020

Կաթողիկոսարանէն ներս, նախասիրած անկիւնս իմ անձնական գրադարանն է: Ես գիրքը կը նկատեմ սիրելի բարեկամ մը եւ հաճոյք կը զգամ, երբ «սիրելի բարեկամներու» հետ հարստացուցիչ պահեր ապրիմ: Միջ-եկեղեցական գրականութիւնը կարեւոր տեղ կը գրաւէ գիրքերու հաւաքածոյիս մէջ:

Այս առաւօտ, մինչ գրադարանիս մէջ ստուգում մը կ'ուզէի կատարել, պահ մը կանգ առի միջ-եկեղեցական հրատարակութիւններու բաժնին դիմաց. համաժողովներու, խորհրդաժողովներու եւ մասնագիտական սէմինարներու վաւերագրեր, յայտարարութիւններ ու տեղեկագրեր, ուսումնասիրութիւններ որոշ թեմաներու մասին, անձնական յօդուածներ՝ միջ-եկեղեցական նիւթերու եւ օրակարգերու մասին: Ի՛նչ տպաւորիչ գրականութիւն: Միջ-եկեղեցական հաւաքական յիշողութիւնը՝ իր յատկանշական դէպքերով եւ նշանակալից նախաձեռնութիւններով ներկայ է այս հրատարակութիւններուն մէջ: Աստուածաբանական խորք եւ հմտութիւն ունեցող բազմաթիւ աստուածաբաններու եւ գիտնականներու գործերը կան այս ժառանգին մէջ, իրենց հարուստ փորձառութիւններով, վերլուծումներով եւ տեսլականով:

Շատ յաճախ չենք անդրադառնար, որ ունինք հսկայ ժառանգ մը՝ միջ-եկեղեցական, աստուածաբանական եւ մտաւորական, ինչպէս նաեւ խորհրդածական եւ ուսումնասիրական աշխատասիրութիւններու: Չենք անդրադառնար որ «այսօրան բազմաթիւ վկաներով շրջապատուած եմք» (Եբր 12.1), որոնք իրենց տքնաջան աշխատանքով եւ հոգեմտաւոր իրագործումներով զինած են մեզ՝ զանոնք աւելի հարստացնելու, եւ միջ-եկեղեցական հսկայ ժառանգ մը փոխանցելու գալիք սերունդներուն, որպէսզի անոնք եւս իրենց կարգին կարենան եռանդով եւ նուիրուածութեամբ շարունակել միջ-եկեղեցական ճանապարհորդութիւնը: Մենք պէտք է երախտապարտ ըլլանք «միջ-եկեղեցական բազմաթիւ վկաններուն», յօգուտ միջ-եկեղեցական շարժումին իրենց բերած անգնահատելի նպաստին համար:

Ո՞ւր ենք մենք, այսօր: Եկե՛ք ըլլանք անկեղծ ու իրապաշտ: Միջ-եկեղեցական յիշողութիւնը եւ այս ծիրէն ներս եկեղեցիներու յանձնառութիւնը նկատելիօրէն անկում արձանագրած է, որուն հետեւանքով վտանգուած է միջ-եկեղեցական շարժումի ապագան: Պատճառները բազմաթիւ են՝ ներքին եւ արտաքին, առարկայական ու ենթակայական, շրջանային եւ համաշխարհային: Յանուն միջ-եկեղեցական շարժումի փայլուն ապագային, մենք պէտք է գիտակցութիւնը, քաջութիւնը ու պատասխանատուութիւնը ունենանք, անկեղծութեամբ ընդունելու ներկայ միջ-եկեղեցական շարժումին թերութիւնները: Արդարեւ, հարկ է ներկայ միջ-եկեղեցական իրավիճակը լուրջ վերատեսութեան ենթարկել՝ միջազգային թէ՛ շրջանային ծիրէն ներս: Ես համոզուած եմ, որ նոյնիսկ կազմակերպ վարչական աշխատանքներն ու տնտեսական ազդու միջոցները չեն կրնար երաշխաւորել հաստատութեան մը, ընկերութեան մը եւ կամ շարժումի մը գոյատեւումը առանց տեսիլք ունեցող յանձնառու մարդոց: Մենք պէտք է քաջալերենք եւ նեցուկ կանգնինք մեր երիտասարդներուն, որպէսզի նոր շունչ, վերանորոգ ուժ եւ ստեղծագործական ոգի բերեն միջ-եկեղեցական շարժումին, յատկապէս համաշխարհայնացման ներկայ ժամանակներուն երբ մեծ է կարիքը եկեղեցիներու եւ միջ-եկեղեցական շարժումի հոգեւոր առաջնորդութեան ու բարոյական հեղինակութեան:

Շաբաթ, 9 Մայիս 2020

Յաղթապանծութիւնը մէկ այլ երեսն է մարդակեղրոնութեան: Ան այլազան ձեւերով, կանոններով, ոճերով եւ արտայայտութիւններով իր դրոշմը դրած է ժամանակակից ընկերութեան կեանքի գրեթէ բոլոր մակարդակներուն, մարգերուն եւ երեւոյթներուն վրայ: Միջ-կրօնական հաւաքի մը ընթացքին, մինչ կը քննարկէինք յաղթապանծութեան անդրադարձը հասարակական կեանքին վրայ, մասնակից մը հետեւեալ նկատողութիւնը ըրաւ. «Մենք միշտ ուրիշներու մասին կը խօսինք, պէտք է քաջութիւնը ունենանք նախ մենք մեր մասին խօսելու: Միշտ կը միտինք ուրիշները քննադատել եւ մեղադրել, ես կ'առաջարկեմ, որ առարկայականօրէն եւ անկեղծութեամբ նայինք մեր կրօններուն ու իրենց պատմութեան. յաճախ մեր հաստատութիւնները եւ առաջնորդները յաղթանակատենչ տեսակէտներ կ'արտայայտեն եւ կեցուածքներ կ'որդեգրեն իրենց կեանքին ու գործին մէջ, որոնք խոտոր կը համեմատին իրենց կրօնական ուսուցումներուն եւ արժէքներուն...»:

Չէի կրնար համաձայն չըլլալ:

Աննախընթաց գիտական եւ ճարտարագիտական նորարարութիւնները, ընկերութիւններուն տուին անպարտելի ըլլալու գոռոզութեան զգացումը: Մարդ արարածը գրեթէ համոզուած է, որ ինքն է սեփականատէրն ու ճարտարապետը իր կեանքին ու աշխարհին եւ տէրը՝ իր ճակատագրին: Աստ-

ուած գրեթէ բացակայ է մեր խօսքերուն ու գործերուն մէջ: Աստուածաշունչը յստակօրէն ցոյց կու տայ, որ հոն, ուր եւ երբ Աստուած մարդ արարածներուն ամբարտաւանութիւնն ու հպարտութիւնը տեսաւ, միջամտեց եւ խոնարհութեան, հնազանդութեան ու հաշուետուութեան հրաւիրեց զանոնք, որովհետեւ «Տէրը հակառակ է ամբարտաւաններուն, մինչդեռ շնորհք կու տայ խոնարհներուն» (Յկ 4.6): Քրիստոս ո՛չ միայն գերագոյն խոնարհութեան ու հեզութեան տիպարը դարձաւ իր երկրաւոր կեանքին ու առաքելութեան ընթացքին, այլ նաեւ սորվեցուց իր հետեւորդներուն, որ հեզ եւ խոնարհ ըլլան (Ղկ 22.27, Մտ 11.29) եւ երանի՛ տուաւ անոնց, «որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը» (Մտ 5.5): Մեր եկեղեցւոյ խոստովանութեան մէջ, հպարտութիւնը «մահացու մեղք» կը համարուի:

Հակառակ ներկայ դարու բժշկագիտութեան կատարած գիւտերուն եւ լայն նուաճումներուն, համաճարակի ընթացքին առողջապահութեան մասնագէտներու կողմէ յաճախակիօրէն արտասանուող խօսքը «չենք գիտեր»ը եղաւ: Մարդ արարածը, որուն տրուած էր երկնային շնորհքը եւ պատուէրը «տիրելու» երկրին (Ծնն 1.28), վիրուսի մը սպառնալիքին ենթարկուեցաւ: Արդարեւ, քորոնա վիրուսը մարտահրաւէր մըն է մարդկային յաղթապանծութեան, ամբարտաւանութեան եւ մեծ պետութիւններու յոխորտանքներուն դէմ: Համաճարակին դէմ յանդիման, հզօր ազգեր, հակառակ իրենց ունեցած զինուորական ուժին, ճարտարարուեստական նուաճումներուն եւ տնտեսական հարստութեան, յանկարծ անդրադարձան իրենց կարողութիւններու սահմանափակութեան. մարդկային ինքնա-վստահելիութիւնը հարցականի տակ առնուեցաւ, անփաստօրէն փշրուեցաւ եւ մարդկութիւնը անօգնական դարձաւ անծանօթին դէմ իր պայքարին մէջ:

Քովիտ-19 համաճարակը բացայայտեց, որ ո՛չ մէկ անձ, ընկերութիւն կամ ազգ անյաղթահարելի է, թէ՛ ուժը չի կրնար արդարութիւն հաստատել, եւ թէ՛ մարդկութեան ապագան չափազանց անորոշ ու անկայուն է: Հպարտութեան մշակոյթը մարդկութիւնը կ'օտարացնէ Աստուծմէ եւ իր հարազատ ինքնութենէն. ամբարտաւանութիւնը նոյնիսկ մարդկութիւնը անապահով կը դարձնէ: Մարդուն մօտ յաղթելու, տիրելու յաղթապանծ տենչը՝ խոնարհութեամբ ու հեզութեամբ պէտք է փոխարինուի:

Կիրակի, 10 Մայիս 2020

Արդի ընկերութեանց ամենամեծ չարիքներէն մէկը սպառողականութիւնն է, որ իր բազմատեսակ արտայայտութիւններուն մէջ կ'ընդգրկէ ընկերութեան բոլոր հատուածները: Շատերու համար, անիկա ո՛չ միայն կենցաղակերպ մը, այլ՝ կեանքի նպատակ է: Սպառողականութեան մշակոյթը, յաղթելու եւ տիրելու ցանկութեամբ խթանուած՝ կ'անմարդկայնացնէ ժողո-

վուրդները: Սպառողական մշակույթին մէջ, մարդ կ'արժեւորուի իր նիւթական ունեցուածքով եւ ոչ թէ մարդկային արժանիքներով. իր իւրացուցածով եւ ոչ թէ ուրիշին հետ բաժնածով: Սպառողականութիւնը ժողովուրդները կը սահմանափակէ ներկային մէջ: Անոր ազդեցութեան ներքեւ մարդիկ ներկայ աշխարհի նիւթական բարիքները աւելի գերադաս կը նկատեն, քան իրենց հոգիի փրկութիւնը՝ երկնային արքայութեան մէջ: Անոնք Աստուածաշունչի մէջ յիշուած մեծահարուստի օրինակին կը հետեւին, որուն մասին Յիսուս կը նշէ. «Պարանը (յուն.՝ ուղտը) շատ աւելի դիւրին ասեղի ծակէն կը մտնէ, քան հարուստը՝ Աստուծոյ արքայութիւնը» (Մտ 19.24):

Սպառողականութիւնը նոր կենսաոճ ստեղծած է, յարաբերութեան նոր կանոններ եւ մտածողութեան ու աշխատանքի նոր յարացոյցեր: Նոր մշակույթ մըն է ան, որ կը քաջալերէ անձնական շահի գերադասումը ընդհանուրի շահէն եւ ազահոութիւնը՝ կարիքէն: Արդիականութեան եւ ճարտարարուեստի կողմէ խրախուսուած սպառողականութիւնը թափ ստացաւ 20-րդ դարու վերջերը, աւելի խորացնելով խրամատը հարուստներուն եւ աղքատներուն միջեւ: Նոյնիսկ կրօնը, զանազան կերպերով ազդուեցաւ սպառողական մշակույթին: Սովետական Միութեան անկումը, աշխարհը, ներառեալ նախկին Սովետական երկիրները, առաջնորդեց դրամատիրութեան ու յարձակողապաշտ սպառողականութեան, առաւել եւս շեշտելով ընկերա-տնտեսական անհաւասարութիւնները եւ ստեղծելով օլիգարքերու համաշխարհային ցանցեր:

Սպառողականութեան յարացոյցներն, չարաչահող կառոյցներն ու համակարգերը կը ստրկացնեն, չքաւորութեան կը մատնեն եւ կը կործանեն մարդը: Անոնք կեանքի որակ, հաւաքականութեան պահպանում, ինչպէս նաեւ բնութեան հետ սիրալիր յարաբերութիւն չեն ապահովեր, բացի այն պարագայէն, երբ բարոյագիտութեան ճամբով խիստ առարկութեան ենթարկուին: Կրօնը առանցքային դեր ունի այդ մարտահրաւէրը կատարելու: Եթէ Քովիտ-19 համաճարակը կը սպառնայ մարդու Ֆիզիքական առողջութեան, սպառողականութեան համաճարակը իր կարգին կը վտանգէ անհատին եւ ամբողջ ընկերութեան հոգեւոր եւ բարոյական առողջութիւնը:

Սպառողականութեան արձանագրած աճին պատճառով, միլիոնաւոր մարդիկ զրկուած են ջուրէ, էլեկտրական հոսանքէ եւ սննդանիւթերէ: Միլիոնաւորներ կը տառապին դարմանումի առողջապահական կարելիութիւններու չզոյութեան պատճառով: Այժմ, սպառողականութեան թողած ժխտական ազդեցութեանց կողքին, Քովիտ-19 համաճարակը ունի իր կործանարար դերը, որուն հետեւանքով կ'աւելնայ զոհերու թիւը, անգործութիւնը կը բազմանայ, անօթութիւնը կը տիրէ եւ անօթեւան մարդոց թիւը կ'աւելնայ, նոյնիսկ տնտեսապէս հզօր երկիրներու մէջ: Ինչպէս Paulo Freireը գրած է (Pedagogy of the Oppressed գիրքին մէջ, 1968, Նիւ Եորք), «հարուստը պէտք է պարզութեամբ ապրի, որպէսզի աղքատը կարենայ պարզապէս ապրի»:

Յստակ է, որ եթէ ներկայ սպառողական մշակույթը նույն թափով շարունակէ իր ընթացքը, կործանարար հետեւանքներ պիտի ունենայ կենսոլորտին եւ ընկերութեան կեանքին վրայ: Համեստ ապրելակերպը հիմնական արժէք մըն է քրիստոնէական, ինչպէս նաեւ գրեթէ բոլոր կրօններուն բարոյագիտութեան մէջ: Կը յուսամ, որ արդի ընկերութիւնները զգալիօրէն կը կրճատեն սպառումի եւ վատնումի հսկայ քանակը եւ կը չափաւորեն իրենց շուշկ կենցաղը: Նման նպատակասլաց ճիգեր վստահաբար պիտի նպաստեն խթանելու ընկերային արդարութիւնը, նուազեցնելու չքաւորութիւնը եւ սահմանափակելու կենսոլորտին սպառնացող վտանգը:

Երկուշաբթի, 11 Մայիս 2020

Վախը անբաժան մասը եղած է մարդկային կեանքին.— բնութեան ուժերու վախը, անասունի եւ մարդու վայրագութեան ու բռնութեան վախը եւ անծանօթին վախը: Ամէն մարդ իր կեանքին մէջ, որոշ աստիճանի վախի մը փորձառութիւնը ապրած է: Ես կը յիշեմ այն վախը, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմին (1975–1990) ապրեցայ, երբ իբրեւ Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ, Առաջնորդարան երթալու համար պէտք էր անցնէի ականներով լեցուն սահմանագիծը, որ կը բաժնէր պատերազմող կողմերը, ինչպէս նաեւ ծանր զէնքերու տարափին տակ:

Արագօրէն տարածուող, վարակիչ եւ մահացու Քովիտ-19 համաճարակին ստեղծած վախը համաշխարհային է, սարսափազդու եւ դժուար նուաճելի: Արդարեւ, վաղուան անորոշութեան կողքին, տնտեսական, ապահովական եւ առողջապահական համակարգերու փլուզումով յառաջացած վախը ծնունդ տուած է այլ տեսակի համաճարակի մը՝ որով հզօրը անզօր կը զգայ, հարուստը՝ աղքատ, առաջնորդը՝ շփոթած, բժիշկը՝ անօգնական: Մինչ քորոնա վիրուսը սրընթաց կը յառաջանայ Չինաստանէն դէպի Հարաւային Աֆրիկէ, Եւրոպայէն դէպի Աւստրալիա եւ դէպի հեռուոր անկիւնները աշխարհի, համամարդկային անորոշութիւնը շատ աւելի արագ կ'աճի եւ վախը արմատ կը նետէ մարդոց կեանքին մէջ: Այս է ներկայ վախազդու կացութիւնը:

Վախը մարդկային կեանքին մէջ մնայուն ներկայութիւն մըն է եւ կրնայ հակասական հետեւանքներ ունենալ: Այսպէս, գոյատեւելու վախը կրնայ ստիպել մարդիկը ստեղծելու բժշկական նոր սարքեր եւ սպառազինութիւններ. ան կրնայ ազգեր իրար մօտեցնել եւ կամ՝ զանոնք առճակատումի տանիլ. ան կրնայ փոխադարձ վստահութեան եւ հանդուրժողութեան ճամբան հարթել եւ կամ՝ օտարացում եւ բռնութիւն յառաջացնել:

Աստուածաշունչին մէջ, վախը թէ՛ դրական եւ թէ՛ բացասական նշանակութիւն ունի. «Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է» (Առ 1.7): Կը հաստատէ Աստուածաշունչը:

Արդարեւ, Աստուծոյ վախին դիմաց, մարդ կը զգայ իր անկատարութիւնը եւ կը մօտենայ Աստուծոյ: Վախը մնայուն կերպով առկայ է աշխարհի

տազնապներուն ենթակայ մարդու կեանքին մէջ: Մակայն, իրեն հաւատացող ժողովուրդին տուած Աստուծոյ ապահովութիւնը զօրեղ կերպով կը յայտնուի վճռական պահերուն: մի՛ խռովիք ու մի՛ վախնաք, որովհետեւ ես միշտ ձեզի հետ եմ (տե՛ս Մղ 23.4, 55.22, Ես 41.10, Ղկ 12.22–26, ՅՅ 14.27, Փլպ 4.6–7): Աստուածավախութիւնը կը զօրացնէ մեզ, որպէսզի տեղի չտանք վախին: Քրիստոս, հիւանդին, ճնշուածին, չքաւորին եւ հալածուածին ըսաւ՝ մի՛ վախնար, միայն հաւատա՛ (Մր 5.36):

Քովիտ-19 համաճարակը, որ աննախատեսելի էր, փաստօրէն դարձաւ անհակակշռելի եւ ստիպեց որ մարդիկ նաեւ ապրին վախը՝ ապագայի նման համաճարակներու հաւանականութենէն: Անորոշութիւնը մեծագոյն վախն է, որ մարդկութիւնը կը դիմագրաւէ: Բայց վախը պէտք է ընկճէ մեզ կամ իշխէ մեր վրայ. ընդհակառակը, ան պէտք է զօրացնէ մեզ, մաքառելու մեզ շրջապատող չար ուժերուն դէմ:

Մեր շուրջը ապահովութիւն հաստատելը, վախէն ձերբազատելու ազդու միջոց մը չէ: Եթէ հաւատքով ու յոյսով զօրացած ենք, ապա կրնանք անորոշութիւններէն եւ մտահոգութիւններէն յառաջացած վախը քաջութեան վերածել: Առաքեալը կ'ըսէ՝ «կատարեալ սերը ամէն վախ կը փարատէ» (Ա. ՅՏ 4.18): Իրապէս, հոն՝ ուր Աստուծոյ նկատմամբ սէր, հաւատք եւ յոյս կայ, վախը կը չքանայ: Վախը կը յառաջանայ Աստուծոյ գօտեպնդող ներկայութեան բացակայութենէն:

Եկէք, միշտ յիշենք եւ չմոռնանք Մեր Տիրոջ պատգամը՝ «մի՛ վախնար, միայն հաւատա՛» (Մր 5.36), որովհետեւ «ես յաղթեցի աշխարհին» (ՅՏ 16.33): Ա՛յս է առանցքը Աստուածաշնչական պատգամին: Հաւատքով մղուած աստուածավախութիւնը պիտի զօրացնէ մեզ եւ լուսաւորէ մեր ճամբան, որովհետեւ «Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ» (Մղ 103.13): Աստուծոյ ներկայութեան ամէն տեսակ վախ կը փարատի: Միայն Աստուծոյ ապաւինելով է, որ մենք ապաստան կը գտնենք աշխարհի մահացու հարուածներուն դէմ, որովհետեւ Աստուած է մեր հովիւն ու առաջնորդը: Վախի եւ անձկութեան պահերուն, եկէք Դաւիթ մարգարէին հետ աղօթենք՝ «Տէ՛րն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախնամ ես. Տէ՛րն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ ես: Զար մարդիկ, որոնք հետս քշուամացած՝ զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրե՛նք տկարացան եւ ինկան: Նոյնիսկ եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ. նոյնիսկ եթէ ինծի դէմ ճակատամարտ յարդարուի՝ դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ» (Մղ 27.1–3):

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 8)

Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Մ Ե Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ա Տ Թ Է Ո Ս Ա Բ Ե Տ Ա Ր Ա Ն Ի (1.1-25)

«Այս է ազգաբանութիւնը Յիսուս Քրիստոսի, որ Դաւիթի Որդին է եւ Աբրահամի Որդին: Աբրահամ ծնաւ Իսահակը, Իսահակ՝ Յակոբը, Յակոբ՝ Յուդան եւ անոր եղբայրները, Յուդա իր Թամար կնոջմէն՝ Ֆարէսն ու Զարան, Ֆարէս ծնաւ Եզրոնը, Եզրոն՝ Արամը, Արամ՝ Ամինադաբը, Ամինադաբ՝ Նասսոնը, Նասսոն՝ Սալմոնը, Սալմոն իր Ռախաբ կնոջմէն ծնաւ Բոոսը, Բոոս իր Հուլի կնոջմէն՝ Օբէդը, Օբէդ՝ Յեսսէն, Յեսսէ՝ Դաւիթ թագաւորը: Դաւիթ թագաւոր ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնոջմէն, Սողոմոն ծնաւ Բոբոամը, Բոբոամ՝ Աբիան, Աբիա՝ Ասաֆը, Ասաֆ՝ Եոսաֆատը, Եոսաֆատ՝ Եորամը, Եորամ՝ Ոզիան, Ոզիա՝ Եոաթամը, Եոաթամ՝ Աքազը, Աքազ՝ Եզեկիան, Եզեկիա՝ Մանասէն, Մանասէ՝ Ամոսը, Ամոս՝ Եոսիան, Եոսիա՝ Եքոնիան եւ անոր եղբայրները, Բաբելոնեան գերութեան շրջանին: Բաբելոնեան գերութենէն ետք Եքոնիա ծնաւ Սալաթիէլը, Սալաթիէլ՝ Զօրաբաբէլը, Զօրաբաբէլ՝ Աբիուդը, Աբիուդ՝ Եղիակիմը, Եղիակիմ՝ Ազորը, Ազոր՝ Սադոկը, Սադոկ՝ Աբինը, Աբին՝ Ելիուդը, Ելիուդ՝ Եղիազարը, Եղիազար՝ Մատթանը, Մատթան՝ Յակոբը, Յակոբ ծնաւ Յովսէփը, որ Մարիամի նշանածն էր, եւ Մարիամէն ծնաւ Յիսուս, որ կոչուեցաւ Քրիստոս» (Մտ 1.1-16):

1) Մատթէոսի կողմէ Քրիստոսի ազգաբանութեան ներկայացումը կը հետապնդէ մէկ հիմնական նպատակ՝ ցոյց տալ Հրեաներուն, որոնց կ'ուղղէ իր Աւետարանը, թէ Յիսուս Աբրահամի եւ Դաւիթի սերունդէն է, եւ ուստի՝ Խոստացեալ Մեսիան է:

Շատ կարեւոր էր որ Մատթէոս ցոյց տար, թէ Քրիստոս Աբրահամի Որդին է, այլ խօսքով՝ անոր սերունդէն, որովհետեւ Աբրահամին էր որ խոստացուած էր թէ իրմով եւ իր սերունդով պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը (Ծն 12.3, 22.18): Առաջին համարին մէջ կ'ըսուի թէ Աբրահամով պիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը, իսկ երկրորդին մէջ կ'ըսուի՝ Աբրահամի սերունդով. Աբրահամի սերունդը Քրիստոս ինքն է: Նոյնքան կարեւոր էր որ Մատթէոս ցոյց տար, թէ Քրիստոս Դաւիթի Որդին էր, այլ խօսքով՝ անոր սերունդէն, որովհետեւ Դաւիթին էր որ խոստացուած էր թէ իր սերունդէն

պիտի գայ այն թագաւորը, որուն թագաւորութեան աթոռը յաւիտեան պիտի ըլլայ (Մդ 89.3-4, 132.11: Մր 11.10): Այս իմաստով, Աստուած Աբրահամի սերունդով՝ Քրիստոսով կ'օրհնէ բոլոր ազգերը, իսկ Դաւիթի սերունդով՝ Քրիստոսով կը թագաւորէ բոլոր ազգերուն վրայ: Ուրեմն, Աստուած նախ իր օրհնութիւնը կու տայ, եւ անկէ ե'տք միայն իր թագաւորութիւնը կը շնորհէ: Սա ցոյց կու տայ, թէ Աստուած կ'օրհնէ մեզ ու մեր կեանքը, եւ անկէ ե'տք միայն կը թագաւորէ մեր սրտին ու կեանքին մէջ: Իսկ այդ օրհնութիւնը Աստուած կը շնորհէ միայն անոնց՝ որոնք իր Որդիին խաչին ներքեւ ծնրադիր կ'արտասուեն իրենց մեղքերուն համար:

2) Քրիստոսի ազգաբանական ցանկին մէջ յիշուած են չորս կիներ: Ռախաբ որ Քանանացի էր, եւ Հուլիթ որ Մովաբացի էր (5-րդ համար): Ռախաբ հեթանոս ըլլալուն կողքին՝ նաեւ պոռնիկ մըն էր: Իսկ միւս երկուքը՝ թամար եւ Բերսաբէ, շնացողներ էին: Աստուածային կամքը ամօթ կամ նախատինք չհամարեց իր Որդիին ազգաբանական ցանկին մէջ յիշուած տեսնել հեթանոսներ ու շնացողներ, եւ ասիկա դիտամբ տեղի ունեցաւ, որպէսզի ցոյց տրուի մեզի, թէ Մեսիան կատարեալ մարդոց սերունդէն չէր որ եկաւ, այլ ընդհակառակը, եկաւ մեղաւորներուն սերունդէն ու մեղաւորներուն համար: Արդա՛ր է Տէրը, բայց ան աշխարհ չեկաւ արդարներուն համար, այլ՝ ինծի եւ քեզի պէս մեղաւորները արդարացնելու համար:

3) Մատթէոսի յիշած Քրիստոսի ազգաբանութեան մէջ յիշուած են 42 անուններ: Աբրահամէն մինչեւ Դաւիթ 14 սերունդ կայ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն՝ 14 սերունդ, եւ Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ 14 սերունդ: Արդ, իսկապէ՞ս միայն 42 անձեր ապրած են Աբրահամէն մինչեւ Քրիստոս, որ կ'ընդգրկէ աւելի քան 2000 տարուայ ժամանակամիջոց մը: Տրամաբանական չէ որ 42 անձեր լեցուցած ըլլան այս ընդարձակ ժամանակամիջոցը, որ կ'ընդգրկէ 42 անձերէ աւելի: Փաստօրէն, երբ համեմատենք Մատթէոսի յիշած ազգաբանութիւնը Հին Կտակարանին մէջ յիշուած որոշ ազգաբանական ցանկերու հետ, կը տեսնենք որ որոշ անուններ ցանկէն դուրս ձգուած են: Այսպէս, օրինակ, 8-րդ համարին մէջ կը կարդանք. «Ասա ծնաւ Յովսափատը, Յովսափատ՝ Յովրամը, Յովրամ՝ Ոզիան» (Հին Թրգ.): Ըստ Մատթէոսի ներկայացուցած ցանկին, Յովրամ կը ծնի Ոզիան, մինչդեռ երբ նայինք Հին Կտակարանին, հոն կը տեսնենք որ Յովրամ կը ծնի Ոքոզիան (Դ.Թգ 8.25, տես նաեւ՝ Բ.Մն 22.1), Ոքոզիան կը ծնի Յովասը (Դ.Թգ 11.2), Յովաս կը ծնի Ամասիան (Դ.Թգ 14.1), Ամասիան կը ծնի Ոզիան [որ կոչուած է նաեւ Ազարիա] (Դ.Թգ 14.21: Ա.Մն 3.12): Այս իմաստով, Մատթէոսի յիշած Յովրամի եւ Ոզիայի միջեւ կան երեք թագաւորներու անուններ (Ոքոզիա, Յովաս եւ Ամասիա) որոնք ցանկէն դուրս ձգուած են: Ուրիշ օրինակ մը. 11-րդ համարին մէջ կը կարդանք. «Յովսիա ծնաւ Յեփնիան»: Հին Կտակարանը, սակայն, ցոյց կու տայ որ Յովսիայի եւ Յեփոնիայի միջեւ Եղիակիմը կայ [որ կը կոչուի նաեւ Յովակիմ] (Դ.Թգ 23.34): Այս իմաստով, Յեփոնիան [որ կը կոչուի նաեւ Յովաքին] Յովսիայի որդին չէ, այլ՝ թոռնիկը:

Ասոնցմէ զատ, ուրիշ անուաններ եւս դուրս ձգուած են, եւ ասիկա հաւանական կը թուի եթէ նկատի առնենք այն ժամանակամիջոցին երկարութիւնը որ կայ որոշ անձերու միջեւ: Օրինակ, Մտ 1.4-ին մէջ կը հանդիպինք Նասոն անունին որ ժամանակակից եղած է Մովսէսի: Նասոնէն մինչեւ Դաւիթ ունինք մօտաւորապէս 500 տարիներու ժամանակամիջոց մը. անոնց միջեւ յիշուած են 6 անձերու անուաններ միայն (4-5 համարներ): Հաւանական չէ որ 6 անձեր կարողացած ըլլան լեցնել 500 տարիներու ժամանակամիջոց մը:

4) Մատթէոս եւ Ղուկաս կը ներկայացնեն Յիսուսի ազգաբանութիւնը: Երկուքն ալ ցոյց կու տան, թէ Յիսուս եկաւ Դաւիթի սերունդէն: Ներկայացուած երկու ազգաբանութեանց մէջ կարեւոր իրողութիւն մը կայ որուն ուշադրութիւն պէտք է դարձնել. Մատթէոսի մօտ Յիսուսի ազգաբանութիւնը կը սկսի Աբրահամով եւ կ'աւարտի Յիսուսով: Աբրահամ Իսրայէլի ժողովուրդին հայրն էր. ուստի Մատթէոս կը փորձէ ցոյց տալ Յիսուսի Հրէութիւնը, Հրեայ ըլլալը, Հրեաներուն համար ըլլալը, եւ չմոռնանք որ իր Աւետարանն ալ ուղղած է առաջին հերթին Հրեաներուն: Մինչդեռ Ղուկասի մօտ Յիսուսի ազգաբանութիւնը կը սկսի Յովսէփով (Մարիամի նշանածով) եւ ետ կ'երթայ մինչեւ Ադամ, եւ ուստի՝ կը պարզէ թէ իր Աւետարանը համայն մարդկութեան համար է, եւ թէ Յիսուս ծնաւ ամբողջ մարդկութեան փրկութեան համար:

5) Երկուքին ներկայացուցած ազգաբանութիւնը, Աբրահամէն Դաւիթ՝ գրեթէ նոյնն է, բայց Դաւիթէն Յիսուս՝ կը տարբերին: Մատթէոս կը ներկայացնէ Դաւիթի որդիին՝ Սողոմոնի սերնդագիծը (Մտ 1.6), իսկ Ղուկաս Դաւիթի որդիին՝ Նաթանի սերնդագիծը (Ղկ 3.31): Յայտնապէս երկու տարբեր ազգաբանութիւններ ունինք: Ի՞նչպէս բացատրել կամ հասկնալ այս տարբերութիւնը.-

ա) Ճիշդ է որ երկու տարբեր ազգաբանութիւններ ունինք, բայց անոնք զիրար հակասող ազգաբանութիւններ չեն: Թէ՛ Մատթէոս եւ թէ՛ Ղուկաս կը ներկայացնեն Յիսուսի ծնողներուն ազգաբանութիւնը: Մատթէոս կը ներկայացնէ Յովսէփի ազգաբանութիւնը, իսկ Ղուկաս՝ Մարիամի ազգաբանութիւնը¹: Եւ ճիշդ այս պատճառով է, որ Մատթէոս Յիսուսի ծնունդին մասին խօսած ատեն՝ առաւելաբար լոյսի տակ կը բերէ Յովսէփին կապուած եղելութիւնները, օրինակ, կը յիշէ անոր տեսած երազը (Մտ 1.19-20), Տիրոջ հրեշտակին կողմէ Եգիպտոս փախչելու եւ ապա Եգիպտոսէն Իսրայէլի երկիրը դառնալու պատուէր ստանալը (Մտ 2.13,20): Մինչդեռ Ղուկաս Յիսուսի ծնունդին մասին խօսած ատեն՝ առաւելաբար լոյսի տակ կը բերէ Մարիամին կապուած եղելութիւնները, օրինակ, կը յիշէ Գաբրիէլ հրեշտակին

¹ Ջարմանայի է, որ Ղուկաս թէպէտ կը ներկայացնէ Մարիամի՝ ազգաբանութիւնը, եւ սակայն, իր Աւետարանին մէջ փոխանակ փորձէ ցոյց տալ որ Մարիամ Դաւիթի սերունդէն է, ընդհակառակը, այս մասին լուր կը մնայ, եւ կը փորձէ մնայուն կերպով ցոյց տալ թէ Յովսէփ ինք Դաւիթի սերունդէն է:

այցելութիւնը Մարիամի եւ անոր հետ իր ընդարձակ երկխօսութիւնը (ՂԿ 1.26-38), Մարիամին այցելութիւնը Եղիսաբէթի եւ անոր օրհնեցութիւնը (ՂԿ 1.39-56):

բ) Երկու տարբեր ազգաբանութիւններ ունենալը ուրիշ պատճառ մըն է, որ Մատթէոս ներկայացնէ Յիսուսի թագաւորական կամ օրինական սերունդը. իր ներկայացուցած ցանկին մէջ առաւելաբար թագաւորներ յիշատակած է, եւ ո՛չ թէ Յիսուսի իրական մարմնաւոր սերունդը. կարծէք Մատթէոսի նպատակն է ցոյց տալ թէ Յիսուս թագաւորական սերունդէ կու գայ: Մինչդեռ Ղուկաս կը ներկայացնէ Յիսուսի մարմնաւոր սերունդը, կարծէք ըսելու համար որ ծնած է բոլոր մարմիններուն, այլ խօսքով՝ բոլոր մարդոց համար, եւ զուր տեղ չէ որ Ղուկաս իր ազգաբանութեան մէջ ետ կ'երթայ մինչեւ Ադամ, ինչպէս վերեւ հաստատեցի:

Մեզի ուղղուած կարեւոր հարցումը հետեւեալն է.՝ Ո՞ւր ենք մենք Քրիստոսի ազգաբանական ցանկին մէջ: Մաս կը կազմե՞նք Քրիստոսի ընտանիքին, անդամագրուա՞ծ ենք երկնային տունին:

«Արդ, Աբրահամէն մինչեւ Դաւիթ կայ տասնըչորս սերունդ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն՝ տասնըչորս սերունդ, եւ Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ տասնըչորս սերունդ» (Մտ 1.17):

1) Մատթէոս Քրիստոսի ազգաբանութեան ցանկը երեք շրջաններու կը բաժնէ, Աբրահամէն մինչեւ Դաւիթ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն, եւ Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս: Առաջին շրջանը, Աբրահամէն մինչեւ Դաւիթ, կը կոչուի՝ ԱՍՏՈՒԱԾՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որովհետեւ այս շրջանին ուղղակիօրէն Աստուած ինք (կամ իր մարգարէներուն միջոցաւ) կը ղեկավարէր իր ժողովուրդը: Երկրորդ շրջանը, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն, կը կոչուի՝ ԹԱԳԱԻՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որովհետեւ այս շրջանին թագաւորներ իրե՛նք էին որ կը ղեկավարէին ժողովուրդին կեանքը: Երրորդ շրջանը, Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս, կը կոչուի՝ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ, որովհետեւ այս շրջանին քահանաներ ու քահանայապետներ իրե՛նք էին որ կը ղեկավարէին Իսրայէլի ժողովուրդը: Այս երեք շրջաններուն յիշատակութեամբ, աւետարանիչը լռելեայն կերպով կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ ծնող Փրկիչը՝ Քրիստոս, Մարգարէ, Թագաւոր ու Քահանայապետ է: Իբրեւ Մարգարէ՝ ան Աստուծոյ կամքն ու խօսքը մեզի յայտնողը եղաւ: Իբրեւ Թագաւոր՝ մեր սրտին մէջ Աստուծոյ թագաւորութիւնը հաստատողը եղաւ: Եւ իբրեւ Քահանայապետ՝ մեր մեղքերը քաւող զոհը եղաւ:

2) «Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս»: Այս բառերով, աւետարանիչը կը պարզէ ընթերցողին, թէ մարդկութիւնը գերութեան մէջ էր մինչեւ Քրիստոսի գալուստը, մարդեղացումը: Արդարեւ, Քրիստոս իր մարդեղացումով եւ իր մարմինը խաչին յանձնելով, ազատեց մեզ Բաբելոնի գերու-

թեանէն, այլ խօսքով՝ Սատանայի՛ գերութեանէն, մեղքի՛ գերութեանէն, մահ-
ուա՛ն գերութեանէն: Հարց տանք մենք մեզի. ազատա՞ծ ենք մեղքի գերու-
թեանէն: Եթէ կը սիրենք ու կը գործենք մեղքը՝ գերի ու ծառայ ենք մեղքին.
«Լաւ գիտցէ՛ք, թէ ով որ մեղք կը գործէ՛՝ ծառայ է մեղքին» (ՅՎ 8.34): Մեղքի
ծառայութեան միայն Քրիստոս ի՛նք կրնայ ազատել մեզ. «Եթէ Որդին ձեզ
ազատէ, այն ատեն իրապէս ազատ պիտի ըլլա՛ք» (ՅՎ 8.36):

3) Երեք անգամ կը յիշուի «տասնըչորս սերունդ» բացատրութիւնը, որ
կը նշանակէ՝ 42 սերունդ: Որոգիինէս դիտել կու տայ, թէ Հրեաները Ռամ-
սէսէն² դէպի Յորդանան գետի արեւելքը իրենց ճանապարհորդութեան ըն-
թացքին՝ 42 կայաններ կանգ առին, որոնք կը ներկայացնեն Մատթէոսի յի-
շատակած 42 սերունդները: Այս ճանապարհորդութիւնը կարծէք կը ներկա-
յացնէ ամբողջ մարդկութեան անցումը այս աշխարհի անապատէն, այլ խօս-
քով՝ անոր ազատիլը ստրկութեան երկրէն եւ իրական Փարաւոնին, այսինքն՝
Սատանային գերութեանէն եւ խոստացուած երկիրը մտնելը, ուր կը վայելէ
Աստուծոյ զաւակներուն փառքը: Կնոջ միջոցաւ Տիրոջ գալը ամէն հաւա-
տացեալի կ'ընձեռէ այս անցումը, որպէսզի կարող դառնայ Սուրբ Հոգիին
միջոցաւ մտնելու Հօրը գիրկը:

«Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի ծնունդը: Իր մայրը՝ Մար-
իամ, նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախքան ամուսնութիւնը
Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն» (Մտ 1.18):

1) Ինչո՞ւ համար Աստուած ընտրեց նշանուած կոյս մը, փոխանակ ընտ-
րելու չնշանուած կոյս մը: Եթէ ընտրէր չնշանուած կոյս մը, Մովսիսական
Օրէնքին համաձայն անիկա կրնար քարկոծուիլ երբ հանդէս գար որ յղի էր:
Երկրորդ, Աստուած ընտրեց նշանուած կոյս մը, որովհետեւ Մովսիսական Օ-
րէնքին համաձայն, խօսեցեալները այլեւս այր եւ կի՛ն կը կոչուէին (Բ.Օր
20.7), թէպէտ անոնց միջեւ մարմնաւոր յարաբերութիւն չէր ըլլար, մինչեւ
որ օրէնքին համաձայն ամուսնանային: Այս իմաստով, երբ հանդէս գար որ
Մարիամ յղի էր, Յովսէփ անմիջապէս զինք քովը պիտի առնէր իբրեւ իր
կինը, եւ հարցը լուծուած պիտի համարուէր: Եւ երրորդ, Աստուած ուզեց որ
իր Որդիին մայրը ունենար իր նշանածը, որպէսզի անիկա դառնար անոնց
հոգատարն ու պաշտպանը:

2) Խոստացեալ Մեսիան պէտք էր ծնէր Դաւիթի սերունդէն: Ճիշդ է որ
Մարիամ Դաւիթի սերունդէն էր, բայց ատիկա բաւարար չէր: Որպէսզի
Հրեաներ ոեւէ կասկած չունենային թէ Յիսուս Խոստացեալ Մեսիան էր,
անհրաժեշտ էր որ ցոյց տրուէր թէ անիկա Դաւիթի սերունդին պատկանող
այր մարդէ մը կու գար, որովհետեւ, Հրեաներ իրենց սերունդներուն ազ-

² Ռամսէս քաղաքը կառուցուեցաւ Իսրայէլացիներուն կողմէ Եգիպտոսի մէջ գերութեան
ժամանակ (Ել 1.11): Ռամսէսէն էր որ Հրեաները ճամբայ ելան (Ել 12.37):

գաբանական ցանկերը պատրաստած ատեն, միայն այդ մարդիկը կը հաշուէին:

3) «Նախքան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն»: Այս բառերով աւետարանիչը ըսել է՝ ուզեց թէ Յիսուսի ծնունդէն ետք անոնք ամուսնացան: Մատթէոսի խօսքին նպատակն է՝ պարզել թէ Յովսէփ եւ Մարիամ երբեք չէին յարաբերած Յիսուսի ծնունդէն առաջ, եւ ո՛չ թէ պարզել թէ անոնք ամուսնացան ու յարաբերեցան Յիսուսի ծնունդէն ետք: Հետեւաբար, «նախքան» բառը անոնց հետագայ ամուսնութեան ու յարաբերութեան ապացոյց չի նկատուիր, եւ ուստի, «նախքան» բառը ցոյց չի տար գործողութեան մը շարունակութիւնը: Օրինակ, եթէ ըսեմ՝ «հայրս նախքան Հայաստան Գրողութիւնը միւս չկերաւ», ի՞նչ է խօսքիս նպատակը. ցոյց տալ որ հայրս Հայաստան երթալէ ե՞տք միւս կերաւ, թէ՛ ցոյց տալ որ ան միւս չկերաւ Հայաստան ճամբորդելէ առաջ: Եթէ ըսեմ՝ «դաւանան գիւնուորը նախքան որ արտուէր՝ շրթայակապուեցաւ», ի՞նչ է խօսքիս նպատակը. ցոյց տալ որ ան շրթայակապուած մնաց իր աքսորուելէն ե՞տք, թէ՛ ցոյց տալ որ ան շրթայակապուեցաւ նախքան աքսորուելը: Զիչդ է որ Յովսէփ ու Մարիամ Յիսուսի ծնունդէն ետք իրարու հետ ապրեցան, բայց չամուսնացան: Իրարու հետ շարունակեցին ապրիլ, որպէսզի մարդոց գայթակղութեան պատճառ չդառնային, որովհետեւ մարդիկ երբեք պիտի չկարենային ըմբռնել թէ Մարիամ ի՛նչպէս յղացած էր առանց ամուսնին³:

4) Ինչո՞ւ համար Յիսուս ծնաւ կնոջմէ մը կամ կոյսէ մը: Օգոստինոս կը յիշէ երկու պատճառ.-

ա) Եթէ Յիսուս խուսափէր կնոջմէ ծնիլ, մենք պիտի խորհէինք թէ կնոջմէ ծնիլը կրնար զինք պղծել: Քանի Յիսուսի էութիւնը չէր կրնար պղծուիլ, ուրեմն, կնոջմէ ծնիլը չէր կրնար զինք պղծել:

բ) Եթէ աշխարհ գար իբրեւ այդ մարդ առանց ծնելու կնոջմէ, ատիկա կրնար յուսահատութեան մատնել կիները եւ յիշեցնել անոնց առաջին կնոջ՝ առաջին մեղքը: Քրիստոս կնոջմէ մը ծնելով, կարծէք մարդկութեան կ'ըսէր.- Պէտք է գիտնաք որ Աստուծոյ արարչագործութեան մէջ չար բան չկայ, այլ՝ այլասերուած ցանկութիւնն էր որ ապականեց ստեղծագործութիւնը: Տեսէ՛ք, ես այդ մարդ ծնայ, եւ կնոջմէ ծնայ, ուստի ես չեմ արհամարհեր ստեղծագործութիւնս, այլ կ'արհամարհեմ մեղքը զոր ես չեմ ստեղծած...:

«Յովսէփ՝ անոր նշանաժը, արդար մարդ մը ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զայն, այլ խորհեցաւ լուրջայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը» (Մտ 1.19):

³ Թէ Յիսուսի ծնունդէն ետք Յովսէփ ու Մարիամ այլ զուակներ չունեցան՝ այս մասին ընդարձակօրէն խօսած եմ յստակ ու անհերքելի ապացոյցներով: Տե՛ս՝ Մտ 1.24-25ի բացատրութիւնը, թիւ 3-ը ամբողջութեամբ, եւ 13.55-56ի բացատրութիւնը ամբողջութեամբ:

1) «"Նշանածը", բառացի՝ "ամուսինը": Հրեական նշանախօսութիւնը օրինական գետնի վրայ համազօր էր ամուսնութեան, թեպէտեւ առանց մարմնաւոր յարաբերութեան: Այդ իմաստով ալ Մովսիսական Օրէնքին համաձայն՝ խօսեցեալները այլեւս "այր" եւ "կին" կը կոչուէին (հմմտ Բ.Օր 22.24), եւ նշանախօսութիւնը ետ ընելը "կինը" արձակել կը կոչուէր՝ նիշդ ամուսնութեան պէս» (*Չարեհ Արք. Ազնաւորեան*):

2) *Յովսէփին արդար ըլլալը կը կայանար Մովսէսի Օրէնքին անթերի գործադրութեան մէջ (ՂԿ 2.22-24, 39): Երբ Մարիամ յղի գտնուեցաւ, համաձայն Օրէնքին, Յովսէփ պէտք էր զինք յանձնէր քահանաներուն, որպէսզի զինք քարկոծելու հրաման տային: Յովսէփ սակայն, խորհեցաւ զինք ծածկաբար արձակել, որովհետեւ դեռ կը սիրէր զինք եւ չէր կրնար անոր քարկոծումը պատկերացնել: Յովսէփ Օրէնքը պահող անձ էր, բայց իր օրինապահութիւնը պատճառ չէր դարձած որ իր մէջ մեռնէր մարդասիրութիւնը: Այդպէս չէին Փարիսեցիները, որոնց օրինապահութիւնը զիրենք անկարեկից դարձուցած էր գութի կարօտ մարդոց հանդէպ: Յովսէփ իր կեանքի օրինակով սորվեցուց մեզի, թէ Աստուծոյ օրէնքները մարդս ո՛չ թէ անգութ, այլ ընդհակառակը՝ գթառատ կը դարձնեն:*

3) *Մարիամ իր յղութեան մասին բան մը չըսաւ Յովսէփին, եւ ո՛չ ալ Յովսէփ այդ մասին բան մը հարցուց անոր: Երկուքն ալ լուռ մնացին եւ հարցին լուծումը յանձնեցին հարցերու լուծիչ իրենց Աստուծոյն: Եւ հա՛սա Աստուած իր հրեշտակին միջոցաւ յայտնեց իրողութիւնը Յովսէփին: Իրենցմէ սորվինք լուռ մնալ եւ մեր հարցերը Աստուծոյ յանձնել, այն քաջ վստահութեամբ որ ան պիտի փարատէ մեր մտահոգութիւնները:*

4) *Մարիամ ինքզինք պաշտպանելու համար ո՛չ մէկ բառ ըսաւ Յովսէփին, որովհետեւ Աստուծոյ պաշտպանութեան ապաւինեցաւ: Յովսէփ ալ Մարիամը դատապարտելու համար ո՛չ մէկ բառ ըսաւ անոր, որովհետեւ Աստուծոյ արդարութեան եւ անկէ գալիք լուսաբանութեան վստահեցաւ:*

5) *Յովսէփ զգաց որ Մարիամ մեղք գործած էր իր դէմ, բայց «չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զայն», այլ խօսքով՝ չուզեց զայն ժողովուրդին առջեւ հանել եւ անոր քարկոծումը պահանջել: Մենք ի՞նչ կ'ընենք երբ մէկը մեղք գործէ մեր դէմ. հանրութեան առջեւ զինք կը խայտառակե՞նք, թէ՛ Յովսէփի նման կը փորձենք ծածկել անոր ըրածը, եւ Աստուծոյ օգնութեան կը դիմենք:*

6) *Յովսէփ զգաց որ անիրաւութիւն գործուած է իրեն դէմ, բայց որոշեց լուռութեամբ տանիլ ատիկա: Մենք կրնա՞նք Յովսէփի նման լուռութեամբ տանիլ մեր դէմ գործուած անիրաւութիւնները:*

7) *Մէկը կրնայ հարց տալ. «Անիրաժե՞շտ էր որ Յովսէփ մտածէր ծածուկ կերպով արձակել Մարիամը»: Յերոնիմոս կը պատասխանէ. «Յուրթեան նշանները յստակ էին: Եթէ Յովսէփ չհրաժարէր Մարիամէն՝ Օրէնքին համա-*

ձայն յանցապարտ կը նկատուէր, որովհետեւ ոչ միայն մեղք գործողը կը կրէր անոր բեռը, այլեւ ան՝ որ կը տեսներ մեղքը եւ չէր դիրքորոշուեր անոր հանդէպ»:

«Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երագի մը մէջ երեւցաւ իրեն եւ ըսաւ. "Յովսէփ, Դաւիթի՛ որդի, մի՛ վախճար ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ իր մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է"» (Մտ 1.20):

1) *Մինչ Յովսէփի կը մտածէր Մարիամը արձակելու մասին, Տիրոջ հրեշտակը երագի մը մէջ երեւցաւ իրեն եւ յայտնեց անոր, թէ Մարիամի մէջ յղացուածը Սուրբ Հոգիէն է: Տիրոջ հրեշտակը չէր ուզեր որ Յովսէփ արձակէր Մարիամը: Պատգամը այս կէտին.- Տէրը հակառակ է ամուսնանալու թեան:*

2) «Այս մասին կը մտածէր»: *Յովսէփ տազնապի մէջ էր եւ կը մտածէր ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Իր տազնապիլը՝ իր արդար ըլլալուն արդիւնքն էր: Արդար մարդիկ միշտ տազնապած են: Տազնապի մէջ էր Յիսուս Գեթսեմանիի պարտէզին մէջ (ՂԿ 22.44): Ղովտ «իր արդար հոգիին մէջ կը տանջուէր ամէն օր» (Բ.Պտ 2.6-8): Մենք կը տազնապի՞նք մեր շուրջը պատահող սխալներուն համար, մարդոց կողմէ գործուած մեղքերուն համար: Եթէ մեղքի կեանքի ակնատես ըլլալը մեզ չի տազնապեցներ, կը նշանակէ թէ հաւատքի ուղիղ ընթացքի մէջ չենք:*

3) *Յովսէփին տազնապելուն պատճառը՝ Մարիամին հանդէպ իր ունեցած անչափ սէրն ու բացարձակ վստահութիւնն էր նաեւ: Յովսէփ չէր կրնար հաւատալ որ Մարիամի պէս առաքիլի անձ մը կրնար շնութեան մեղքին մէջ ինկած ըլլալ եւ Աստուծոյ սիրտը խոցոտել: Գաբրիէլ հրեշտակը երեւցաւ Յովսէփին եւ փարատեց անոր մտահոգութիւնն ու տազնապը: Առաքիլի մարդոց շեղումը մեզ տազնապի կը մատնէ՞, ինչպէս մատնեց Յովսէփը:*

4) *Յովսէփ «կը մտածէր» պատահածին մասին եւ ո՛չ թէ կը բամբասէր պատահածը, կամ չար ծրագիրներ կը մշակէր: Երբ մեր դէմ անիրաւութիւն գործուի, մենք պէտք է մտածենք ու աղօթենք այդ մասին եւ ո՛չ թէ բամբասենք ու չարութիւն խորհինք:*

5) *Հրեշտակը Յովսէփը կոչեց «Դաւիթի որդի», որպէսզի երբ իրեն բացայայտուէր թէ խոստացեալ Մեսիան իր նշանածէն պիտի ծնէր՝ իրեն համար դիւրին ըլլար այս ճշմարտութիւնը ընդունիլը, որովհետեւ Յովսէփ գիտէր որ խոստացեալ Մեսիան Դաւիթի սերունդէն պիտի գար:*

6) *Հրեշտակը պատուիրեց Յովսէփին չվախնալ Մարիամը քովը առնելու իբր կին, քանի Յովսէփ կը վախնար ամուսնանալու Մարիամին հետ, մտածելով որ ամուսնութեան պահուն կրնար յայտնի ըլլալ անոր յղի ըլլալը, եւ ատիկա իրեն համար մեծ նախատինք ըլլար:*

7) «Իր մէջ յղացուածը», բառացի՝ «իր մէջ ծնածը»: Երբ Քրիստոսի համար կը գործածուի «ծնած» բառը նախքան իր ծնիլը՝ ասիկա իր նախագոյութեան վերաբերեալ վկայութիւն մըն է: Յիսուս գոյ էր նախքան իր ծնունդը: Ան գոյ էր նախքան Աբրահամի ծնունդը. «Լաւ գիտցե՛ք, Աբրահամի ծնունդէն առաջ եմ ես» (ՅՀ 8.58): Մարիամ սոսկ Յիսուսի մարմինն է որ ծնունդ տուաւ եւ ո՛չ թէ անոր աստուածային բնութեան: Զգո՛յ՜: Ըսել չեմ ուզեր թէ Մարիամէն ծնածը սոսկ մարդ էր: Մարիամէն ծնածը կատարեալ Աստուած էր ու կատարեալ մարդ: Յիսուս Մարիամէն մարմին առաւ ու իրեն միացուց եւ անկէ իբրեւ Աստուած ծնաւ:

«Որդի մը պիտի ծնի եւ գայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ» (Մտ 1.21):

1) Անցեալին, ով որ ծնած մանուկին անունը որոշէր՝ կը դառնար անոր հոգատարը: Ծիչդ է որ Յովսէփ ինք չորոշեց մանուկին անունը, այլ պարզապէս ի վերուստ ճշդուած անունը տուաւ անոր, բայց եւ այնպէս, երբ հրեշտակը իրեն պատուիրեց ծնած մանուկը կոչել՝ Յիսուս, զինք անոր պատասխանատուն եւ հոգատարը նշանակած եղաւ:

2) Յիսուս անունը Յունարէն ձեւն է Եբրայերէն Եհոշուահ անունին, եւ կը նշանակէ՝ «Տէրը կը փրկէ»: Հրեշտակը ուզեց որ Յովսէփ ինք մանուկը կոչէր Յիսուս, որպէսզի գիտնար թէ անիկա սովորական մանուկ մը չէր, այլ մարդոց փրկութեան համար ծնած խոստացուած Մեսիան էր:

3) «Իր ժողովուրդը» ըսելով չ՝ ակնարկուիր Հրեայ ժողովուրդին միայն, այլ՝ համայն մարդկութեան: Քրիստոս բոլոր մարդիկը իրը կը նկատէ, եւ ինք բոլորին մեղքերը քաւելու եկաւ:

4) Հին Կտակարանին մէջ ունինք երկու Յեսուսներ, որոնք եղած են նախատիպերը Քրիստոսի: Առաջին Յեսուս Մովսէսի յաջորդն էր, որ առաջնորդեց Իսրայէլի ժողովուրդը գրաւելու Քանանու երկիրը, իսկ երկրորդ Յեսուս՝ Իսրայէլի ժողովուրդին քահանայապետն էր, գերութենէն իրենց երկրորդ վերադարձի ժամանակ, 458 թուին: Առաջին Յեսուսն առաջնորդեց Իսրայէլի ժողովուրդը գրաւելու Քանանու երկիրը, իսկ Յիսուս առաջնորդեց մարդկութիւնը «գրաւելու» երկինքը: Երկրորդ՝ Յեսուսն ժողովուրդի մեղքերուն քաւութեան համար կենդանական զոհեր մատուցանող քահանայապետը եղաւ, իսկ Յիսուս համայն մարդկութեան փրկութեան համար ինքզինքը զոհ մատուցանող քահանայապետը եղաւ:

5) «Անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»: Եթէ դուն քեզ Տիրոջ ժողովուրդին անդամ կը նկատես, հարց տուր դուն քեզի.՝ Տէրը փրկա՞ծ է քեզ քու մեղքերէդ:

«Այս բոլորը պատահեցան, որպեսզի կատարուի այն ինչ որ Տէրը քսաւ Եսայի մարգարէին միջոցաւ. *“Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի, եւ զայն պիտի կոչես Էմմանուէլ”*, որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ» (Մտ 1:22-23):

1) *Մատթէոս յատուկ ճիգ կը թափէ իր Աւետարանի գրեթէ ամէն մէկ էջին վրայ ցոյց տալ ընթերցողին, Հին Կտակարանին մէջ խոստացեալ Մեսիային կապուած մարգարէութեանց կատարումը Քրիստոսով, որպէսզի ցոյց տար Հրեաներուն եւ բոլորին, թէ Քրիստոս ի՛նքն է խոստացուած Փրկիչը որ աշխարհ պիտի գար:*

2) «Ահա կոյսը պիտի յղանայ» (Ես 7.14): «Կոյս» բառին համար գործածուած Եբրայերէն բառը՝ «Ալմա» բառն է, որ կը գործածուի թէ՛ կոյս աղջկայ համար եւ թէ՛ նշանուած բայց չամուսնացած աղջկայ համար: Սուրբ կոյս Մարիամին համար գործածուելիք ամենաճիշդ բառն է անիկա, որովհետեւ ան թէ՛ նշանուած էր եւ թէ՛ կոյս էր:

3) *Մենք սովորաբար կ’ըսենք «Էմմանուէլ» կը նշանակէ՝ «Աստուած մեզի հետ»:* Բայց անոր տառացի թարգմանութիւնն է՝ «Մեզի հետ՝ Աստուած»: Կա՞յ տարբերութիւն երկուքին միջեւ: Այո՛: Առաջինով կրնանք հասկընալ թէ Աստուած եկաւ մեզի հետ ըլլալու Քրիստոսի միջոցաւ, իսկ երկրորդով կրնանք հասկնալ, թէ ան որ եկաւ մեզի հետ ըլլալու՝ Աստուած ինքն է:

4) «Էմմանուէլ» անունը կը բացայայտէ, որ Աստուած երկնքի մէջ բնակող եւ երկրին ու երկրաւորներու հետ առնչութիւն չունեցող Աստուած մը չէ: Աստուած կ’ուզէ «Էմմանուէլ» ըլլալ, այլ խօսքով՝ մարդուն հետ ու յարաբերութեան ու հաղորդակցութեան մէջ ըլլալ, մարդուն հետ ու մարդուն մէջ ապրիլ, մարդուն հետ ու մարդուն համար գործել, եւ մարդը իր գործակիցը դարձնել:

5) «Էմմանուէլ» յորջորջումը ապագայ ու յաւիտենական խոստումի մը յիշեցումն է նաեւ մեզի: Ի՞նչ է այդ խոստումը: Հին Կտակարանէն գիտենք, որ սկիզբէն, Աստուծոյ ծրագիրն էր բնակիլ իր ժողովուրդին մէջ, դառնալ մէկ ու միակ Տէրն ու թագաւորը՝ մէկ ու միակ ժողովուրդի մը, որ աստուծապետական⁴ դրութեամբ պիտի ղեկավարուէր: Աստուածային այս խոստումին կատարումը սկսաւ Տիրոջ առաջին գալուստով, եւ իր լրումին պիտի հասնի անոր երկրորդ գալուստով: Տիրոջ երկրորդ գալուստէն ետք է որ Աստուած յաւիտենապէս եւ մնայուն կերպով պիտի բնակի իր ժողովուրդին միջեւ: Պիտի բնակի՝ կշտացնելու իր զաւակներուն հոգին եւ կշտանալու անոնցմով:

⁴ «Աստուծապետութիւն» ըսելով կը հասկնանք՝ թագաւորութիւն մը, որ ուղղակիօրէն Աստուած ինք կը ղեկավարէ:

«Երբ Յովսէփ արթնացաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայեց իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարարերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ, եւ գայն Յիսուս կոչեց» (Մտ 1.24-25):

1) *Յովսէփ ծրագրած էր ծածկաբար արձակել Մարիամը, բայց Տիրոջ հրեշտակին խօսքէն ետք՝ միտքը փոխեց, եւ հնազանդեցաւ Աստուծոյ կամքին: Ի՞նչ կ'ընենք մենք եթէ բան մը ծրագրած ըլլանք, եւ յանկարծ Աստուած ձեռով մը յայտնէ մեզի, թէ պէտք է հրաժարինք մեր ծրագիրէն: Կը հնազանդի՞նք Աստուծոյ կամքին՝ ինչպէս Յովսէփ հնազանդեցաւ:*

2) «Ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ», բառացի՝ «Իր կիներ քովը առաւ»: Երբ հրեշտակը Յովսէփին կը պատուիրէ որ Մարիամը քովը առնէ իբրեւ կին, ըսել կ'ուզէ որ հոգ տանի եւ գուրգուրայ անոր ճիշդ այնպէս՝ ինչպէս հոգ պիտի տանէր ու գուրգուրար անոր եթէ օրինական գետնի վրայ հետը ամուսնացած ըլլար:

3) «Չյարարերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ, եւ գայն Յիսուս կոչեց»: Որոշ հոսանքներ հիմնուելով այս տողին մէջ գտնուող «մինչեւ» եւ «անդրանիկ» բառերուն վրայ, կ'ըսեն, թէ Յիսուսի ծնունդէն ետք Յովսէփ ու Մարիամ ամուսնացան եւ ունեցան ուրիշ զաւակներ⁵: Նախ խօսինք «անդրանիկ» բառին մասին, որուն վրայ հիմնուելով որոշ մարդիկ կ'ըսեն, թէ «անդրանիկ» կը նշանակէ՝ առաջին, եւ ուստի ատիկա ցոյց կու տայ թէ Մարիամ Յիսուսի ծնունդէն ետք ունեցաւ ուրիշ զաւակներ ալ:

ա) *Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Երբ Աստուած իր անդրանիկ Որդին աշխարհ պիտի դրկէր ...» (Եբր 1.6): Այստեղ Յիսուս կը կոչուի Աստուծոյ անդրանիկ որդին: Հարցում. Յիսուսի համար հոս գործածուած «անդրանիկ» բառը արդեօ՞ք ցոյց կու տայ որ Հայրը երկինքի մէջ Յիսուսէն զատ ուրիշ որդիներ ալ ունէր: Յիսուս Հօրը անդրանիկն է երկինքի մէջ, եւ մօրը անդրանիկն է երկրի վրայ:*

բ) «Եղիազարին որդիներէն՝ առաջինը Հոսիան էր ու Եղիազար ուրիշ որդի չուներ» (Ա.Մն 23.17): Հոս կը հաստատուի թէ Հոսիան Եղիազարի առաջին որդին էր, եւ կ'ըսուի թէ «Եղիազար ուրիշ որդի չուներ»: Ինչո՞ւ համար Հոսիան կը կոչուի Եղիազարի «առաջին» որդին երբ Եղիազար ուրիշ զաւակ չուներ: Արդ, ինչպէս Հոսիայի համար գործածուած «առաջին» բառը ցոյց չի տար որ ան ունէր ուրիշ եղբայրներ ու քոյրեր, նոյնպէս ալ, Յիսուսի համար գործածուած «անդրանիկ» բառը երբեք ցոյց չի տար որ ան ունեցաւ ուրիշ եղբայրներ եւ քոյրեր:

գ) Յիսուս «անդրանիկ ծնունդն եղաւ մեռելներէն» (Կղ 1.18): Առաքեալը կը հաստատէ թէ Յիսուս մեռելներէն յարուստիւն առնողներուն մէջ եղաւ

⁵ Տե՛ս նաեւ՝ Մտ 13.55-56ի բացատրութիւնը ամբողջութեամբ:

առաջինը: Իսկապէ՞ս Յիսուս առաջին յարութիւն առնողը եղաւ. իրմէ առաջ մէկը յարութիւն չառա՞ւ: Մատթէոս կը վկայէ թէ երբ Յիսուս հոգին աւանդեց «երկիրը շարժեցաւ եւ ժայռերը նեղֆուեցան, գերեզմանները բացուեցան, եւ շատ մը սուրբ մեջեջեղաներ յարուսիւն առին» (Մտ 27.50-52): Այս վկայութիւնը ցոյց կու տայ, թէ շատեր յարութիւն առին Յիսուսէն առաջ: Ինչպէս չենք կրնար բառացիօրէն հասկնալ Կողոսացիս 1.18-ին մէջ արձանագրուած «անդրանիկ» բառը, նոյնպէս ալ, Մտ 1.25-ին եւ Ղկ 2.7-ին մէջ Յիսուսի համար գործածուած «անդրանիկ» բառը եւս չենք կրնար բառացիօրէն հասկնալ:

դ) «Դաւիթին որդիներ ծնան ու անոր անդրանիկը Յեզրայելացի Աբիմուսէն ծնած Ամոնն էր» (Բ.Թ.դ 3.2): Այստեղ Ամոնը կը կոչուի Դաւիթի անդրանիկ որդին, թէպէտ Ամոն իր նոյն մօրմէն ուրիշ եղբայր կամ քոյր չունեցաւ. ահա նոյնպէս ալ, Յիսուս կը կոչուի Յովսէփի անդրանիկ որդին, թէպէտ ան իր նոյն մօրմէն ուրիշ եղբայր կամ քոյր չունեցաւ: Եթէ մէկը առարկէ թէ Դաւիթ ուրիշ կիներէ ունեցաւ ուրիշ զաւակներ, կը պատասխանեմ՝ ըսելով.՝ Ճիշդ է որ Դաւիթ ուրիշ կիներէ ունեցաւ ուրիշ զաւակներ, բայց Աբիմուսէն միայն Ամոնը ունեցաւ եւ անիկա կը կոչուի՝ «անդրանիկ»: Արդ, ինչպէս Դաւիթ Աբիմուսէն միայն Ամոնը ունեցաւ բայց ուրիշ կիներէ ուրիշ զաւակներ ունէր, այնպէս ալ, Յովսէփ ինք եւս Մարիամէն միայն Յիսուսը ունեցաւ, բայց ուրիշ կնոջմէ ուրիշ զաւակներ ունէր:

ե) Տէրը յայտարարեց թէ պիտի հարուածէ Եգիպտացիներուն անդրանիկ որդիները (Ել 11.5): Հարցում. Տէրը ո՞ր անդրանիկները հարուածեց. միայն այն անդրանիկները որոնք երկրորդ եղբա՞յր մը ունէին. յստակ է թէ ոչ. ան նաեւ հարուածեց այն անդրանիկները որոնք իրենց հայրերուն միակ որդիներն էին, փաստօրէն, կը հաստատուի թէ «տուն չկար ուր մեռնալ չկար» (Ել 12.30): Արդ, ինչպէս Աստուած «անդրանիկ» կը կոչէ այն անդրանիկ զաւակները որոնք ուրիշ եղբայր կամ քոյր չունէին, այնպէս ալ Մատթէոս ու Ղուկաս աւետարանիչներ Յիսուսը կը կոչեն «անդրանիկ», թէպէտ Յիսուս ուրիշ եղբայր կամ քոյր չունէր:

զ) «Սրբէ՛ ինծի ամէն անդրանիկ, Իսրայէլի որդիներուն մէջ ամէն արգանդ բացողը, մարդ կամ անասուն: Ան իմս է» (Ել 13.2): Աստուած կը յայտարարէ, թէ անդրանիկ ամէն զաւակ պէտք է սրբուի եւ իրեն յատկացուի: Հարցում. Եբրայեցի հայր մը իր անդրանիկ որդին ունենալէ ետք, կը սպասէր երկրորդ մը ունենալու որպէսզի առաջինը Տիրոջ նուիրէր. բնականաբար ոչ. Եբրայեցի հայր մը երկրորդ որդի մը ունենար թէ ոչ, իր առաջին որդին իր անդրանիկը ըլլալով՝ զայն պէտք էր նուիրէր Աստուծոյ: Յստակ է, հետեւաբար, որ «անդրանիկ» բառը ցոյց չի տար երկրորդ զաւակի մը գոյութիւնը:

է) «Ես եմ Առաջինը ու Վերջինը» (Յիս 1.17): Յիսուս ինքնիր համար գործածելով «Առաջինը» բացատրութիւնը, արդեօ՞ք ըսել ուզեց թէ իրմէ ետք

ուրիշ մը կայ, կամ երկրորդ մը կայ. յստակ է թէ ո՛չ, քանի անմիջապէս կ'աւելցնէ ըսելով՝ «Ու Վերջինը»: Այսքանով բաւարարուինք: Արդ, Յիսուսի համար «անդրանիկ» բառը չի գործածուիր ցոյց տալու համար թէ Մարիամ Յիսուսէն զատ ուրիշ զաւակներ ալ ունեցաւ, այլ կը գործածուի՝ բացայայտելու համար հետեւեալ ճշմարտութիւնները. –

ա) Եբրայեցիներուն անդրանիկ որդիները կը կոչուէին «անդրանիկ», որովհետեւ անոնք պէտք էր «սրբուէին», այլ խօսքով՝ զատուէին ու նուիրուէին Աստուծոյ (Ել 13-2): Յիսուս ինք եւս կը կոչուի անդրանիկ, ցոյց տալու համար թէ ինք՝ իր մանկութենէն նուիրուած էր Աստուծոյ (Ղկ 2-22):

բ) Տաճարին նուիրուած անդրանիկը Աստուծոյ ուխտաւորը կը սեպուէր: Յիսուս «անդրանիկ» կը կոչուի, ցոյց տալու համար թէ ան Աստուծոյ մեծ ուխտաւորն էր, եւ Նոր Ուխտին կնքիչը:

գ) Եբրայական մտածողութեան համաձայն, անդրանիկ որդին իր բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն տէրն ու պատասխանատուն կ'ըլլար: Յիսուս «անդրանիկ» կը կոչուի, որպէսզի ցոյց տրուի մեզի, թէ ինքն է մեր Տէրն ու պատասխանատուն, մեր պահապանն ու ազատարարը:

դ) Աստուածային հրահանգ էր որ անդրանիկ որդին իր եղբայրներուն կրկնապատիկ ժառանգութիւնը ունենար (Բ.Օր 21-15-17): Յիսուս «անդրանիկ» կը կոչուի, ո՛չ միայն որպէսզի ցոյց տրուի մեզի թէ ինք իսկական ժառանգորդն է ամէն բանի (Մտ 21-38), այլեւ՝ որպէսզի բացայայտուի թէ ինքն է տէրն ու տուիչը երկնային իսկական ժառանգութեան (Գղ 3-29):

Հիմա խօսինք «մինչեւ» բառին մասին. –

Շատ կարեւոր է գիտնալ որ Մտ 1.25-ին մէջ գործածուած «մինչեւ» բառը տողին առաջին կէսին հետ կապ ունի եւ ո՛չ թէ տողին երկրորդ կէսին հետ: Այսինքն, «մինչեւ» բառին նպատակն է ցոյց տալ, թէ անոնք բնաւ չյարբերեցան նախքան Յիսուսի ծնունդը, եւ ո՛չ թէ ցոյց տալ թէ անոնք յարբերեցան Յիսուսի ծնունդէն ետք: Բազմահարիւր են «մինչեւ» բառին կապուած օրինակները Աստուածաշունչին մէջ: Յիշեմ սոսկ չորսը. –

ա) «Ագոստ մը արձակեց, որ ելաւ ու ասդին անդին կը պտըտէր՝ ՄԻՆՉԵՒ ԵՐԿՐԻ վրայէն ջուրերու ցամփիլը» (Ծն 8-7): Ինչպէս հոս գործածուող «մինչեւ» բառը ցոյց չի տար, թէ ջուրերուն ցամփեղէն ետք ագոստը շարունակեց ասդին անդին պտըտիլ, նոյնպէս ալ, Մտ 1.25-ին մէջ գործածուած «մինչեւ» բառը ցոյց չի տար, թէ Յիսուսի ծնունդէն ետք Մարիամ ունեցաւ ուրիշ զաւակներ:

բ) «Վստահ եղիր որ բանտէն պիտի չելլես, ՄԻՆՉԵՒ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես» (Մտ 5-26): Այս հաստատումով, արդեօ՞ք Յիսուս ըսել կ'ուզէ թէ դժոխք նետուած մեղաւորը առիթը պիտի ունենայ իր մեղքերուն տուգանքին վերջին դահեկանը վճարելու եւ դժոխքէն դուրս գալու, թէ ընդհակառակը, ըսել կ'ուզէ, թէ բնաւ դժոխքի բանտէն դուրս

պիտի չգայ, որովհետեւ բնաւ պիտի չկարենայ իր մեղքերուն տուգանքը վճարել: Արդ, ինչպէս Մտ 5.26-ին մէջ գործածուած «մինչեւ» բառը ցոյց չի տար թէ մեղաւորը դժոխք նետուելէ ետք՝ առիթը պիտի ունենայ իր մեղքերուն տուգանքին վերջին դահեկանը վճարելու եւ դժոխքէն դուրս գալու, նոյնպէս ալ, Մտ 1.25-ին մէջ գործածուած «մինչեւ» բառը ցոյց չի տար, թէ Մարիամ Յիսուսը ունենայէ ետք՝ ուրիշներ ալ ունեցաւ:

դ) «ՄԻՆՉԵՒ այսօր ուեւէ մարդ անոր (Մովսէսի) գերեզմանին տեղը չգիտցաւ» (Բ.Օր 34.6): Ի՞նչ կը հասկնանք երբ կը կարդանք այս բառերը: Արդեօ՞ք կը հասկնանք, որ այս բառերուն գրութեանէն ետք մարդիկ Մովսէսի գերեզմանին տեղը գիտցան: Ինչպէս հոս գործածուած «մինչեւ» բառը ցոյց չի տար թէ մարդիկ հետագային գիտցան Մովսէսի գերեզմանին տեղը, նոյնպէս ալ, Մտ 1.25-ին մէջ գործածուած «մինչեւ» բառը ցոյց չի տար թէ Յովսէփ հետագային գիտցաւ կամ ճանչցաւ Մարիամը:

դ) Դաւիթ իր որդիին՝ Սողոմոնին ըսաւ. «Աստուած քեզ պիտի չլքողու ու քեզ երեսէ պիտի չձգէ ՄԻՆՉԵՒ որ Տիրոջը տանը ծառայութեան բոլոր գործերը լմնցնես» (Ա.Մն 28.20): Դաւիթ ի՞նչ կը փորձէ ըսել իր որդիին այստեղ: Արդեօք կը փորձէ անոր ըսել, թէ «Տիրոջը տանը ծառայութեան բոլոր գործերը» լմնցնելէ ետք, Աստուած զինք պիտի չլքէ՞, թէ ընդհակառակը, կը փորձէ վստահեցնել անոր թէ Աստուած բնաւ զինք պիտի չլքէ նոյնիսկ Տիրոջը տանը ծառայութեան գործերը կատարելէ ետք: Արդ, ինչպէս հոս «մինչեւ» բառը առնչուած է տողին առաջին կէսին հետ եւ ո՛չ թէ երկրորդ կէսին հետ, եւ նպատակն է պարզել թէ Աստուած բնաւ պիտի չլքէր Սողոմոնը, նոյնպէս ալ Մտ 1.25-ին մէջ արձանագրուած «մինչեւ» բառը առնչուած է տողին առաջին կէսին հետ եւ ո՛չ թէ երկրորդ կէսին հետ, եւ նպատակն է պարզել թէ Յովսէփ բնաւ չյարաբերեցաւ Մարիամի հետ նախքան Յիսուսի ծնունդը, եւ ոչ թէ նպատակն է պարզել թէ ան յարաբերեցաւ Մարիամի հետ Յիսուսի ծնունդէն ետք:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 1)

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐ ՊԱԲԵԼ ՖԼՈՐԵՆՍԿԻ

Տրոյիցէ-Սերգէեւեան Լաւրայի վանական Հայր Պաւել Ֆլորենսկին (1882–1937) քսաներորդ դարի բացառիկ անձնաւորութիւններից մէկն էր, ուղղակի հանճարեղ անձնաւորութիւն: Նա ամենից առաջ հոգեւորական էր եւ ապա մաթեմատիկոս, փիլիսոփայ, ֆիզիկոս, քիմիկոս, պատմաբան, գրող, արուեստաբան, թանգարանային գործիչ... Եւ ճիշտ կը լինի այդ բոլոր բառերից առաջ դնել «մեծ» ածականը: Եւ դա ամենեւին չափազանցութիւն չի լինի:

Նրան համարում են քսաներորդ դարի Լէոնարդո դա Վինչի: Նրա մասին այսօր բազմաթիւ գրքեր եւ ուսումնասիրութիւններ են գրուել: Ու դեռ կը գրեն: Նրան նուիրուած մի գրքի խորագիրը արդէն նրան համարում է նոր ժամանակների Ենոչան Փոն Գէօթէ եւ Հայր Պաւելին համեմատում է Գէօթէի յայտնի հերոսին՝ Ֆաուստին:

Ռուս վանական, յայտնի գրող եւ փիլիսոփայ, իր գնահատականներում շատ զուսպ, բծախնդիր ու չմահաւան Վասիլի Ռոզանովը (1856–1919) Հայր Պաւել Ֆլորենսկիի մասին գրել է. «Նա մեր ժամանակի Պասկալն է: <...> Գիտէք, ինձ երբեմն թւում է, որ նա սուրբ է, այնքան որ նա բացառիկ է: Ես մտածում եմ եւ հոգուս խորքում համոզուած եմ, որ նա Պասկալից էլ բարձր է, ըստ էութեան: Յունական Պլատոնին հաւասար, մտաւոր յայտնագործութիւնների մէջ իր կատարեալ արտասովորութիւններով, իր մտաւոր համադրութիւններով կամ աւելի ճիշդ՝ իր թափանցումներով եւ բացայայտումներով»:

Եւ այս առասպելական անձնաւորութիւնը ապրել է ծանր, դժուարին կեանքով, ունեցել է դառն ճակատագիր եւ ողբերգական վախճան...

Մի առիթով Փրանսիացի յայտնի գրող Անտուան դը Սենտ էքզիլպերին ասում է, որ մեր քաղաքակրթութիւնը՝ եւրոպական քաղաքակրթութիւնը ի վերջոյ քրիստոնէական քաղաքակրթութիւն է: Հայր Պաւել Ֆլորենսկին այդ քաղաքակրթութեան ամենալուսաւոր, ուղղակի շողչողուն դէմքերից մէկն է:

Հայր Պաւել Ֆլորենսկին թողել է ստեղծագործական բարդ եւ հարուստ ժառանգութիւն: Իր միայն կրօնա-փիլիսոփայական, գրական, արուեստաբանական եւ մշակութային շարադրանքները՝ ուսումնասիրութիւններն ու յոգ-ուածները տասը ստուար հատորից աւելի են: Եւ դժուար, ուղղակի անկարելի է պարզ տեղեկատուական մի ակնարկում ընդգրկել ո՛չ իր ողջ ստեղծագործութիւնը, հանգամանօրէն անդրադառնալով ամեն մի երկին, ո՛չ իր գիտական-հետազօտական վիթխարի գործունէութիւնը, եւ ո՛չ էլ տարբերոյթ

իրազարձութիւններով հարուստ հոգեւորականի, փիլիսոփայի, գրողի, գիտնականի, արուեստաբանի, թանգարանագէտի եւ մշակութաբանի եւ մանաւանդ պարզ մահկանացուի իր ողբերգական կեանքը:

Եւ այնուամենայնիւ...

* * *

Պաւել Ֆլորենսկին ծնուել է 1882 թուականի Յունուարի 9 (21)–ին Ելիզաւետապոլի նահանգի Ելիզաւետապոլի գաւառի Եւլախ կոչուող բնակավայրում: Եւլախը գտնուում էր Քուռ գետի աջ ափին, ունէր երկաթուղային կայարան: Իր հայրը՝ Ալեքսանդր Ֆլորենսկին (1850–1908), ճանապարհների ճարտարագէտ, կեանքի վերջին տարիներին Կովկասի հաղորդակցութեան ուղիների պետի օգնականն էր եւ այդ տարիներին բնակուում էր Եւլախում:

Ֆլորենսկիի հայրական կողմի արմատները, ըստ աւանդութեան, Մալուուսիայում (Ուկրաինա) էին: Կարծիք կայ, որ նրանք այստեղ են տեղափոխուել Լեհաստանից:

Պաւել Ֆլորենսկիի մայրը՝ Սողոմէ (Մալոմէ, ռուսական միջավայրում Օլգա) Սաֆարեան-Սափարեանը (Սապարովա, 1859–1951) հայուհի էր, ծագումով Արցախի Խաչենի մելիքութեան Գիւլիստան յայտնի բնակավայրից: Գիւլիստանը յայտնի բերդ ունէր, բերդում էլ 1813 թուականի փետրուարի 14–ին, ռուս-պարսկական պատերազմի աւարտից յետոյ, կնքուել է Գիւլիստանի յայտնի պայմանագիրը: Սալոմէ Սափարեանի նախնիները մելիքներ էին, Մելիք-Բեգլարեանների յայտնի տոհմի մի ճիւղը: Ժանտախտը ամառացնում էր Արցախը, դա մի կողմից, միւս կողմից՝ թուրքական խանութեան անվերջ յարձակումները հարկադրում են Արցախի մելիքների մի մասին հեռանալու Արցախից: Սափարեանները գալիս-հասնում են Գուգարքի Բոլնիս հայկական գիւղը: Արցախցիների այստեղ հաստատուելուց յետոյ գիւղը վերանուանում է Բոլնիս-Խաչեն:

Ֆլորենսկիների ընտանիքը շուտով Եւլախից տեղափոխուում է Տփղիս: Փոքրիկ Պաւելի մանկութիւնը անցնում է Տփղիսում եւ Բաթումում. հայրը կառուցում էր Բաթում-Ախալցխա ռազմական ճանապարհը:

Ծնողները տարբեր դաւանանքի մարդիկ էին, եւ թերեւս դա է եղել պատճառը, որ մանուկ Պաւելը ընտանիքում կրօնական դաստիարակութիւն չի ստացել, որեւէ ձեւով չի հաղորդակցուել եկեղեցական կեանքին. «Կրօնի մասին մեր տանը երբեք չէին խօսում, ոչ կողմ, ոչ դէմ, ոչ էլ նոյնիսկ պատմողաբար, իբրեւ հանրային կեանքի մի երեւոյթի...», – տասնեակ տարիներ անց յիշում է Հայր Պաւել Ֆլորենսկին: Յետոյ շարունակում է. «Եկեղեցու առումով ես հասակ էի առնում լրիւ վայրենավարի: Ինձ երբեք չեն տարել եկեղեցի, ոչ մէկի հետ չեմ խօսել կրօնական թեմաներով, չգիտէի նոյնիսկ, թէ ինչպէս են խաչակնքում»:

Ֆլորենսկիների ընտանիքը արդեն հաստատուել էր Տփղիսում: 1892 թուականին Պաւելը ընդունւում է Տփղիսի համար երկրորդ գիմնազիան:

Եղել է առաջնակարգ աշակերտ եւ գիմնագիտան աւարտում է 1900 թուականին ոսկէ մեդալով:

Ընտանիքում Պաւելից բացի եւս վեց երեխայ կար: Հայրը բացառիկ վերաբերմունք է ունեցել երեխաների կրթութեան հարցում, առանձնակի տեղ էր տալիս բնական գիտութիւններին: Միեւնոյն ժամանակ պնդում էր, որ ամէն մէկն առնուազն երեք լեզու պէտք է գիտենայ, այլապէս իր կրթութիւնը կրթութիւն չէ:

Գիմնագիտան աւարտելուց յետոյ Պաւելը ուզում է գնալ դէպի ժողովուրդը, ծառայել ժողովրդին, տարւում է տոլստոյական գաղափարներով: Եւ նոյնիսկ սրտաբուխ եւ խռովայոյզ խոստովանութեամբ նամակ է գրում մեծ գրողին 1900 թուականին: Սակայն ծնողների յամառ պնդումով ընդունուում է Մոսկուայի համալսարանի Ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքը: Այստեղ նա աշակերտում է շատ նշանաւոր գիտնականների: Ուսանողութեան տարիներին էլ նա գրում է իր առաջին գիտական եւ փիլիսոփայական աշխատանքները: Նրա հետ մեծ յոյսեր են կապում, նրան գուշակում են մաթեմատիկոս գիտնականի մեծ ապագայ: Գրում է դոկտորական ատենախօսութիւն «Հարթ կորերի առանձնաշատկութիւնների մասին իբրեւ ընդհատութեան խախտումների տեղերի» թեմայով, որ ուզում է դարձնել ընդհանուր փիլիսոփայական աշխատանք՝ «Ընդհատութիւնը իբրեւ աշխարհայեացքի տարր»:

Մաթեմատիկական կրթութեանը զուգահեռ Պաւել Ֆլորենսկին դառնում է համալսարանի պատմա-բանասիրական բաժանմունքի ունկնդիր, մասնակցում է համալսարանի պրոֆեսոր, յայտնի փիլիսոփայ Սերգէյ Տրուբեցկոյի (1862-1905) գործնական պարապմունքներին, ինքնուրոյն ուսումնասիրում է արուեստի պատմութիւն:

Քսաներորդ դարի սկիզբը՝ առաջին մէկուկէս տասնամեակը ռուսական մշակոյթի պատմութեան մէջ առաւել յայտնի է «արծաթէ դար» անուանումով: Սա ռուսական խորհրդապաշտութեան, ընտիր բանաստեղծների, արուեստագէտների, գեղանկարիչների, փիլիսոփաների եւ մշակոյթի գործիչների ժամանակն է: Պաւել Ֆլորենսկին ծանօթանում է նշանաւոր բանաստեղծների՝ Վալերի Բրիլսով, Կոստանտին Բալմոնտ, Դմիտրի Մերեթկովսկի, Զինաիդա Գիպպիուս, Ալեքսանդր Բլոկ... Նա առանձնապէս մտերմանում է բանաստեղծ Անդրէյ Բելիին, մաթեմատիկայի յայտնի պրոֆեսոր, իր ուսուցիչ Նիկոլայ Բուգաեւի որդուն: Բնական եւ ճշգրիտ գիտութիւններ ուսանած, բանականութեան ջատագով Պաւել Ֆլորենսկին խորհրդապաշտական մտածողութիւնն ու մշակոյթը չեն բաւարարում: Թէեւ ինքն էլ էր բանաստեղծութիւններ գրում եւ նոյնիսկ հրատարակել է դրանք («Յաւերժական կապոյտի մէջ», 1907), նա հեռանում է խորհրդապաշտութիւնից: Ֆլորենսկին գոյութեան հոգեկան-հոգեւոր հիմքեր է որոնում: 1904 թուականին նա ծանօթանում է սրբահայր եպիսկոպոս Անտոնիին եւ խնդրում է նրա օրհնութիւնը վանական կարգ ընդունելու համար: Սրբահայրը նրան ետ է պահում այդ մտադրութիւնից եւ խորհուրդ է տալիս մտնելու Մոսկուայի հոգեւոր ակադեմիան՝ հոգեւոր կրթութիւն ստանալու եւ սեփական անձը փորձելու համար:

Ֆլորենսկին համալսարանը աւարտում է գերազանցութեամբ, եւ նրան առաջարկում են մնալ համալսարանում իբրեւ դասախօս, իբրեւ պրոֆեսոր: Նրան մաթեմատիկոս գիտնականի մեծ ապագայ են գուշակում: Ֆլորենսկին հրաժարւում է: Եւ հակառակ ծնողների կամքին, 1904 թուականին Ֆլորենսկին ընդունւում է Մոսկուայի Հոգեւոր ակադեմիան: Եւ այդ օրուանից նրա կեանքը կապւում է Եկեղեցուն եւ մանաւանդ Տրոյիցէ-Սերգիեւեան Լաւրային: Լաւրա կոչւում էին ռուսական ուղղափառ եկեղեցու այրական որոշ խոշոր մենաստանները: «Տրոյիցա» ռուսերէն անուանում են Սուրբ Երրորդութիւնը, ինչպէս նաեւ ռուսական ուղղափառ եկեղեցու տօներից մէկը, որ ռուս հաւատացեալները նշում են Չատիկից յետոյ յիսուներորդ օրը: Սերգիեւեր քաղաք է Մոսկուայի մարզում, Մոսկուայից 70 կմ դէպի հիւսիս: Ռուսական եկեղեցու նշանաւոր դէմքերից մէկը՝ Սերգիյ Ռադոննեթսկին (մօտ. 1321–1391) այստեղ 14-րդ դարի կէսերին հիմնադրել է մենաստան եւ եղել է վանահայրը: 1744 թուականից մենաստանը կոչուել է Տրոյիցէ-Սերգիեւեան Լաւրա: Այստեղ է գտնւում ռուսական ուղղափառ եկեղեցու Հոգեւոր ակադեմիան եւ Հոգեւոր ձեմարանը: Կրօնի դէմ մարտնչելու տարիներին ռուս բոլշեւիկները Սերգիեւ քաղաքը վերանուանեցին Չագորսկ, ի պատիւ բոլշեւիկեան ինչ-որ գործիչ Միխայիլ Չագորսկիի: Պաւել Ֆլորենսկին Տրոյիցէ-Սերգիեւեան Լաւրայի միջավայրում եւ մթնոլորտում ապրել է շուրջ երեսուն տարի:

Հոգեւոր ակադեմիայում Պաւել Ֆլորենսկին սովորում է 1904–1908 թուականներին: Ակադեմիայում ուսանելու տարիներին Ֆլորենսկիի համար կարեւոր է դառնում հոգեւոր կեանքի ճանաչումը: 1904 թուականին Ֆլորենսկիի հոգեւոր ղեկավարն է դառնում Գեթսեմանի անապատի վանական Իսիդորը: Անտոնիի եւ Իսիդորի հովուական կերպարները եղել են տարբեր. եպիսկոպոս Անտոնին եղել է վերին աստիճանի զարգացած վանական, հրաշալի իմացել է աշխարհիկ մշակոյթը, առանձնապէս հին յունական եւ հռոմէական գրականութիւնն ու արուեստը, լաւ կողմնորոշուել է գիտութիւնների մէջ. սրբահայր Իսիդորը եղել է պարզ մարդ, առանց խոր կրթութեամբ, օֆտուաժ մեծ համբերատարութեամբ, սիրով եւ ամենուր բարին տեսնելու կարողութեամբ: Թէպէտեւ նրանք նկարագրով եղել են տարբեր, բայց իրենց մէջ եղած խոր եկեղեցականութիւնը, հոգեւոր մեծ փորձը եւ նուրբ դատողականութիւնը միաւորել է նրանց եւ հնարաւորութիւն է տուել լինելու Պաւել Ֆլորենսկիի հոգեւոր հայրերը: Ֆլորենսկին հանդիպում է Օպտին անապատի այլ սրբահայրերի եւ վանականների, երկարօրէն զրուցում է նրանց հետ: Երիտասարդ վանականը տուայտանքներ եւ տարակուսանքներ ունի: Նրան տանջում է մի կարեւոր միտք՝ հոգեւորականը իրաւունք ունի՞ զբաղուելու փիլիսոփայութեամբ, ո՞րն է ճիշդը՝ «փիլիսոփայութիւն, թէ՛ Քրիստոս»: Յայտնի վանականներից մէկը խորհուրդ է տալիս ծանօթանալ կամ իրեն յուզող հարցերով դիմել Իոհան Կրօնշտադտցիին (Ի. Ի. Սերգիեւ, 1829–1908): Հայր Իոհանը Կրօնշտադտի տաճարի վանահայրն էր, ռուսական եկեղեցու հեղինակաւոր հայրերից մէկը:

Իր թեկնածուական աշխատանքը, որ իբրեւ աւարտածառ, պատրաստել էր Հայր Պաւելը, վերնագրուած էր «Կրօնական ճշմարտութեան մասին» (1908): Այն յետոյ դառնում է իր մագիստրական ատենախօսութեան միջուկը (1912): Երկու տարի անց Հայր Պաւելը խորացնում եւ հարստացնում է իր աշխատանքը եւ վերածում է իր նշանաւոր աշխատութեանը, որ հեղինակը խորագրել էր «Սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան»: Խորագիրը առնուած էր Պօղոս առաքեալի՝ Տիմոթէոսին ուղղուած Առաջին թղթից՝ «...դու կ'իմանաս, թէ ինչպէս պէտք է շարժուես Աստուծոյ տան մէջ, որ կենդանի Աստուծոյ Եկեղեցին է՝ սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» (Ա թուղթ Տիմոթէոսին, գլուխ Գ, 15):

1908-ին Պաւել Ֆլորենսկին աւարտում է ակադեմիան: Փիլիսոփայական թեմաներով երկու ընդարձակ դասախօսութիւն է կարդում ակադեմիայում: Կրօնական եւ գիտական բարձրագոյն խորհուրդը գոհունակութեամբ է ընդունում այդ դասախօսութիւնները, եւ Ֆլորենսկին նոյն տարում, 1908 թուականին, դառնում է ակադեմիայում փիլիսոփայութեան դասախօս՝ դոցենտի պաշտօնով:

1910 թուականին Պաւել Ֆլորենսկին ամուսնանում է, իսկ մէկ տարի յետոյ, 1911 թուականին, հոգեւորական կարգ է ընդունում: Նա հիմա արդէն Հայր Պաւել Ֆլորենսկին է եւ այլեւս մէկընդմիջտ պատկանում էր Ռուսաց ուղղափառ եկեղեցուն: 1912 թուականին Ֆլորենսկին նշանակում են «Աստուածաբանական լրաբեր» գիտական ակադեմիական ամսագրի խմբագիր:

1914 թուականին լոյս է տեսնում Ֆլորենսկիի «Սիւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» աշխատանքի չորրորդ, վերջնականապէս խմբագրուած տարբերակը: Գրքի հրատարակութիւնը հեղինակին բերում է մեծ հռչակ եւ ճանաչում: Այդ հիմնարար աշխատութեան մէջ աստուածաբանական եւ փիլիսոփայական սեփական դիրքորոշումների հետ միասին հեղինակը իմաստաւորում եւ պատկերում է այն ուղին, որը նրան բերել է քրիստոնէական մտահայեցողութեան եւ եկեղեցականութեան: Հեղինակի համար կարեւոր է, նախ, հաւատի հիմնաւորումը, հաւատի հիմքերին հասնելը, Եկեղեցու՝ Սիւնի եւ ճշմարտութեան հաստատութեան բուն էութեանը հասնելը եւ ապա ձեռք բերած դիրքերից աշխարհի եւ մարդու շուրջ եղած ուսմունքի զարգացումը:

Գիրքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը բաղկացած է առաջաբանից՝ ընթերցողին ուղղուած խօսքից, տասներկու գլխից, որոնք գրուած են նամակների տեսքով եւ վերջաբանից: Նամակները ունեն հետեւեալ խորագրերը. I. «Երկու աշխարհ», II. «Կասկածանք», III. «Եռամիասնութիւն», IV. «Ճշմարտութեան լոյսը», V. «Միութարիչը», VI. «Հակասութիւնը», VII. «Մեղքը», VIII. «Գեհէնը», IX. «Գազանը», X. «Սոֆիա», XI. «Բարեկամութիւնը», XII. «Խանդը»:

Աշխատութեան երկրորդ մասը՝ երկրորդ գիրքը խորագրուած էր «Բացատրութիւններ եւ ապացոյց որոշ մասնաւորութիւնների, որոնք բնագրում են թաղարբար արդէն ապացուցուած են»: Երկրորդ գիրքը բաղկացած էր տասնվեց գլխից՝ XIV-XXX:

«Միւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» երկի առաջին մասը հեղինակը կոչել է թէոգիցէա, երկրորդ մասը՝ անտիթէոգիցէա: Թէոգիցէա (յուն․ theos աստուած + dika իրաւունք, արդարութիւն բառերից) բառացի Աստուծոյ արդարացում: Այն փիլիսոփայական-աստուածաբանական ուսմունք է, որ, համընդհանուր իմաստով եւ հասկացութեամբ լուծում է Աստուծոյ ամենագորութեան եւ չարի առկայութեան միջեւ եղած հակասութիւնը: Իր առաջաբանում Հայր Պաւել Ֆլորենսկին պարզաբանում է իր տարբեր մօտեցումը այս հարցին:

«Միւն եւ հաստատութիւն ճշմարտութեան» աշխատութեան մէջ կատարելապէս եւ ընդժուած ձեւով երեւում է ապագայ հանճարեղ աստուածաբանը, գիտնականը, մտածողը: Այս գիրքը վիթխարի ազդեցութիւն է ունենում ժամանակակիցների վրայ, նրանց ծայրաստիճան տպաւորելով: Քսաներորդ դարի սկզբին, մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը, Ռուսաստանում կային բացառիկ հոգեւորականներ, բացառիկ իրենց կերպարով ու նկարագրով, իրենց կարգացածութեամբ եւ զարգացածութեամբ, իրենց մտածողութեան բարձր մակարդակով: Ահա թէ մասնաւորապէս ինչ է գրում նրանցից մէկը՝ Մոսկուայի Հոգեւոր ակադեմիայի ռեկտոր եպիսկոպոս Ֆեոփորը Հայր Պաւել Ֆլորենսկիի աշխատութեան մասին. «Գրքում արուած է քրիստոնէական հաւատի կատարեալ ջատագովութիւնը իբրեւ միակ ճշմարտութիւն եւ արուած է այն ճանապարհով եւ մտքի այն շրջանակում, որի մէջ մարդկային դատողութեան երկրպագուները տեսնում են ամէն ճշմարտութեան վերին իմաստը, եւ ամէն ինչ արուած է նրանց հարազատ դատողականութեան, տրամաբանութեան եւ փիլիսոփայութեան լեզուով: <...>

Իբրեւ թէոգիցէա Հայր Պաւել Ֆլորենսկիի գիրքը կարող է բաւարարել ամենապահանջկոտ ճաշակը, որ նրբացուած է փիլիսոփայութեամբ եւ աստուածաբանութեամբ: [Գրքում] բացւում է քրիստոնէութեան հաշտարար ողջ խորքը, նրա անհրաժեշտութիւնը մարդուն, պայծառանում է քրիստոնէութեան լոյսով, բացատրում է նրանով կեանքի եւ աշխարհի կեցութեան բարձրագոյն իմաստը եւ ամէն մի մասնաւորն ու հիմնականը քրիստոնէութեան մէջ, արտասովոր յստակութեամբ ի յայտ է բերւում իր բարձրագոյն իմաստով եւ միասնութեան մէջ: <...>

Իբրեւ աստուածաբանական-փիլիսոփայական աշխատութիւն, հեղինակի գիրքը սկզբից մինչեւ վերջ ուղղափառական է: Հեղինակը պսակագերծում է կեանքում դատողականութեան գերիշխանութիւնը եւ իր յաւակնութիւնը ճշմարտութեան մենաշնորհի հանդէպ, հաստատում է հոգեւոր սխրանքը, հաստատում եւ պաշտպանում է Եկեղեցին, բացայայտում է հին եւ նոր հերձուածների սուտն ու կեղծիքը ըստ իրենց էութեան, դատապարտում է ժամանակակից մտաւորականութեան «կրօնական նոր գիտակցութիւնը», փիլիսոփայականութիւնը («հոգեւոր քրիստոնէա»ների աղանդը – Ե.Տ.-իւ.), հիլիազմը (յուն․ chilias «հազար» բառից, Աստուծոյ «հազարամեայ արքայութեան» աղանդը – Ե.Տ.-իւ.), մարմնականի պաշտամունքը, մեկնաբանելով մեղքը իբրեւ

չարիքի պատճառ, նա Սուրբ Հոգու փառալորութեամբ հաստատում է այն ուժը, որ յաղթում է մեղքը եւ նորացող գազանին: <...>

Հայր Պաւելի գիրքը յոյժ գիտական է. դժուար է ասել, թէ ո՞ր գիտութեան ո՞ր մարզում հեղինակը այս գրքում իրեն չի դրսեւորել իբրեւ մասնագէտ: Նա հրաշալի գիտի անտիկ փիլիսոփայութիւնն ու անտիկ աշխարհը, կատարելապէս ուսումնասիրել է նոր փիլիսոփայութիւնը, իրենց ցոյց է տուել իբրեւ բանասէր եւ մաթեմատիկոս, դրսեւորել է ահռելի կարգացածութիւն թէ հայրաբանական եւ թէ աստուածաբանական գրականութեան, ինչպէս արտասահմանեան, այնպէս էլ ռուս: <...>

Բայց հեղինակը ամենուր ազատ է գիտական այս ճնշող բեռի ազդեցութիւնից, ամենուր նա ստեղծող է եւ տէր: Կարդալով հեղինակի գիրքը, զգում ես, որ ոչ միայն գիտելիք ես ձեռք բերում, այս կամ այն մարզի, այլեւ աճում ես հոգեպէս, իսկ գրքին հասնելու համար պէտք է աճել այն հասկանալու համար»:

Աւելի ճշմարտացի, աւելի ամբողջական, աւելի արտայայտիչ դժուար է ասել: Մնում է աւելացնել, որ այս գիրքը մեծապէս ազդել է ռուս մտաւորականութեան վրայ, փոխելով նրա վերաբերմունքը կրօնի հանդէպ:

Եւ ցաւով պէտք է արձանագրել, որ այս կարեւորագոյն աշխատութիւնը հայերէն թարգմանուած չէ:

1914 թուականի Մայիսի 19-ին «Հոգեւոր ճշմարտութեան մասին» թեմայով մագիստրոսական ատենախօսութեան պաշտպանութիւնից յետոյ հոգեւորական Պաւել Ֆլորենսկիին շնորհում են մագիստրոսի աստիճան եւ հաստատում Մոսկովայի Հոգեւոր ակադեմիայի պրոֆեսորի պաշտօնում: Հայր Պաւել Ֆլորենսկին 1908–1919 թուականներին Հոգեւոր ակադեմիայում դասաւանդում է փիլիսոփայութեան պատմութիւն: Նրա կարգացած դասախօսութիւնների սահմանները եղել են շատ ընդարձակ եւ նիւթերի առումով զարմանալիորէն բազմազան ու շատ հարուստ: Դրանք եղել են բացառիկ դասախօսութիւններ: Ժամանակակիցներից մէկը նկարագրել է այդ դասախօսութիւնների ընթացքը: Ակադեմիայի ամենամեծ լսարանը դասազանգից բաւական առաջ արդէն լցուած է եղել բազմութեամբ, մարդիկ կանգնած են եղել պատերի տակ, նստարանների միջեւ եղած անցումներում, նստած են եղել պատուհանագոգերին, խռնուած են եղել դռների առջեւ:

Ժամանակակիցներին ապշեցրել է Հայր Պաւել Ֆլորենսկիի քահանայութիւնը, եթէ կարելի է այսպէս ասել, հոգեւորականութիւնը: 1911 թուականի ապրիլի 23-ին Մոսկովայի Հոգեւոր ակադեմիայի ռեկտոր եպիսկոպոս Ֆէոփորը Պաւել Ֆլորենսկիին ձեռնադրում է սարկաւազ եւ տառացիորէն յաջորդ օրը օժտում է հոգեւորական: Հոգեւորական կարգը Պաւել Ֆլորենսկին ընդունում է հոգեկան ցնծութեամբ, խռովայոյզ սրտի տենչավառ խանդաղատանքով: Իր հոգեւորականութեան առաջին տարիներին Հայր Պաւելը մղուել է հովուական գործունէութեան, ձգտել է, հակառակ հոգեւոր հօր կամքի, ստանալ գիւղական որեւէ ծխական համայնք: 1915 թուականին Հայր Պաւելը կամաւոր մեկնում է ռազմաճակատ իբրեւ գնդային հոգեւորական եւ

ծառայել է ռազմա-սանիտարական գնացքում: Ի վերջոյ, Հայր Պաւելը ենթարկւում է իր հոգեւոր հօր՝ Հայր Անտոնիի կամքին, որն այն կարծիքին էր, թէ Հայր Պաւելի կոչումը ոչ թէ հովուութիւնն էր, այլ եկեղեցու ջատագովական լուսաւորչականութիւնը եւ ուսուցչութիւնը:

Հայր Պաւել Ֆլորենսկիի քահանայական-կրօնական էութիւնը ուղղակի ցնցող տպաւորութիւն է թողել մարդկանց վրայ: Կրօնական յայտնի փիլիսոփայ եւ աստուածաբան, աւագերէց Սերգէյ Բուլգակովը (1871-1944) ընդգծել է դա. «Եւ այնուամենայնիւ, ինչ էլ որ ասենք Հայր Պաւելի գիտական բացառիկ օժտուածութեան մասին, ինչպէս եւ իր ինքնատիպութեան մասին, ինչի շնորհիւ նա միշտ ունեցել է իր խօսքը իբրեւ իւրատեսակ յայտնութիւն ամէն բանի, ի վերջոյ կը լինի երկրորդական եւ ոչ էական: Իր անհատականութեան հոգեւոր կենտրոնը, այն արեգակը, որ լուսաւորում էր իր ձիրքերը, իր քահանայութիւնն էր: <...> Հայր Պաւելի մէջ հանդիպել եւ իւրովի միացել էին մշակութային խորքն ու եկեղեցականութիւնը: Աթէնքը եւ Երուսաղէմը, եւ այդ բնականոն միասնութիւնը ինքնին արդէն եկեղեցական պատմական նշանակութեան փաստ է»:

Ժամանակակիցների վկայութեամբ, Հայր Պաւելը եղել է նուրբ եւ փրկորուն անձնաւորութիւն: Նոյն վկայութեամբ, նա օժտուած է եղել անսովոր ուժով, ինքն իրեն գիտցող եւ ինքն իրեն տիրապետող: Հայր Պաւելը միշտ կրել է հասարակ սեւ պարեգօտ եւ արծաթէ լանջախաչ, որ կրում էին գիւղական բոլոր քահանաները: Երբեք չի կրել իր մագիստրոսական խաչը:

Հայր Պաւել Ֆլորենսկին կարելի է ասել, որ անտարբերութեամբ է վերաբերել Ռուսաստանում կատարուող քաղաքական ցնցումներին: 1917 թուականի մարտի 2-ին Ռուսաստանի թագաւոր Նիկողայոս Երկրորդը հրաժարւում է գահից: Ստեղծւում է ժամանակաւոր կառավարութիւն: Նոյն տարուայ աշնանը, հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) բոլշեւիկների (մեծամասնականների) աւագակախումբը, լատիչ վարձկան զինուորների օգնութեամբ, բռնազաւթում է օրինական իշխանութիւնը: Ռուսաստանի եւ իր գերիշխանութեան ներքոյ գտնուող ժողովուրդների համար սկսւում են դաժան ու ողբերգական ժամանակներ: Ռուսաստանում հիմնովին փոխւում են եկեղեցու եւ պետութեան յարաբերութիւնները: Հոգեւորականները անլուր հալածանքների են ենթարկւում: Միայն 1918 թուականին սքեմ կրելու համար շուրջ 300000 հոգեւորական է գնդակահարւում: Հայր Պաւել Ֆլորենսկին տեսնում է ամէն բան, բայց զարմանալիօրէն մնում է անտարբեր: Դրա համար հիմնաւոր երկու պատճառաբանութիւն ունի: Նախ, նա հոգեպէս ազատ մարդ է, հոգեւորական, եկեղեցական, եւ քաղաքական որեւէ ուժիմ չի կարող ազդել նրա հոգեկան կառուցուածքի ու կերտուածքի վրայ: Նա միշտ ներքուստ ազատ է: Եւ յետոյ, նա այն կարծիքին է, որ գիտութեան մարդիկ պէտք է զբաղուեն իրենց գործով եւ իրենց մասնագիտութեամբ եւ երբեք չխառնուեն քաղաքականութեանը:

Այդ տարիներին Հայր Պաւել Ֆլորենսկին շարունակում է իր եկեղեցական լուրջ գործունէութիւնը եւ շարունակում է դասախօսութիւններ կարդալ Հո-

գեւոր ակադեմիայում: Նա դասախօսում է ամենատարբեր թեմաներով՝ հին յունական փիլիսոփաներից մինչեւ Իմմանուել Կանտ, կրօնական պաշտամունքը եւ մշակոյթը, օկուլտիզմը եւ քրիստոնէութիւնը եւ այլն, եւ այլն: Օկուլտիզմը, լատիներէն occultus «գաղտնի», «թաքուն» բառից, սնահաւատ պատկերացումների համակարգ է, գերբնական ու խորհրդաւոր ուժերի գոյութիւն, որոնք, իբր, անմատչելի են գիտական իմացութեանն ու ճանաչողութեանը:

Հայր Պաւել Ֆլորենսկին շարունակում է դասախօսել Հոգեւոր ակադեմիայում 1917–1919 թուականներին: 1920 թուականներին նոր իշխանութիւնները փակում են Հոգեւոր ակադեմիան: Փակումից յետոյ Հայր Ֆլորենսկին շարունակում է տարբեր հաստատութիւններում եւ մոսկովեան հասարակութեան տարբեր հաւաքավայրերում դասախօսութիւններ կարդալ կրօնափիլիսոփայական թեմաներով:

Հայր Ֆլորենսկին այն եզակի անձանցից մէկն էր, որ, շարունակելով ծառայել եկեղեցուն, սկսում է աշխատել խորհրդային տարբեր հաստատութիւններում: Համագործակցելով նոր իշխանութիւններին, Հայր Պաւել Ֆլորենսկին երբեք չի դաւաճանել իր հաւատին, համոզմունքներին եւ դաւանած սկզբունքներին:

1920–ական թուականներին նա վիթխարի ճիգ ու ջանք է թափում Տրոյիցէ-Սերգէեւեան Լաւրայի պատմա-գեղարուեստական հարստութիւնը, ինչպէս նաեւ կրօնական-եկեղեցական արժէքները կործանումից եւ բառացի ոչնչացումից փրկելու եւ պահպանելու համար: Դա առանձին եւ ընդարձակ պատմութիւն է:

1920–ական թուականների առաջին տարիներին, երբ խորհրդային իշխանութիւնը ձգտում էր լիովին ոչնչացնել եկեղեցին եւ եկեղեցական-կրօնական ողջ մշակոյթն ու մտածողութիւնը, Հայր Ֆլորենսկին գրում է մի քանի կարեւորագոյն ուսումնասիրութիւն՝ «Պաշտամունքի փիլիսոփայութեան մասին» (1918), «Իկոնոստաս» (1922) եւ «Յետադարձ հեռանկար» (առաջին մասը գրուած է 1919 թուականին): Ռուսերէն բնագրում «հեռանկար» բառը տրրուած է «պերեսպեկտիւ» բառով: «Պերսպեկտիւ» բառը ֆրանսերէն "perspective" բառից է, որ ծագում է լատիներէն "perspicere" «նայել միջով», «թափանցել հայեացքով» բառից: Հիմնականում նշանակում է առարկաների պատկերումը հարթութեան վրայ համապատասխան նրանց մեծութեան, ուրուագծումների, յտակութեան այն թուացեալ փոփոխութիւնների, որոնք պայմանաւորուած են դիտողից պատկերող առարկայի հեռաւորութեամբ, դիտողի դիտակէտով: «Պերեսպեկտիւ» են անուանում նաեւ հարթութեան վրայ, երկչափ տարածութեան մէջ եռաչափ առարկաների պատկերման կանոնների ամբողջութիւնը:

Իր այդ ուսումնասիրութիւններում Հայր Պաւել Ֆլորենսկին, մի կողմից, ջատագովում է կրօնական-եկեղեցական նկարչութիւնը, այդ արուեստի կրօնական-միստիկական-փիլիսոփայական արժէքն ու առաջնայնութիւնը, միւս կողմից, զարգացնում է արուեստի մէջ տարածութեան դերի շուրջ իր

ինքնօրինակ տեսութիւնները: Ստեղծում է «Մտքի ջրբաժանի մօտ» խորագրով ուսումնասիրութիւնների մեծ շարքը: Շարքը հետեւեալ կազմութիւնն ունի. առաջին մասը կոչւում է «Պատկեր եւ խօսք»: Երկրորդ մասը կոչւում է «Զեւի մարմնաւորումը (գործողութիւն եւ գործիք», երրորդ մասը՝ «Զեւի ըմբռնումը», չորրորդ մասը՝ «Տոհմի անունը (պատմութիւն, տոհմաբանութիւն եւ ժառանգականութիւն)», հինգերորդ մասը՝ «Իդէալիզմ» («Իդէալիզմի իմաստը, տոհմի եւ պատկերի բնագանցութիւնը»), վեցերորդ մասը՝ «Անուններ: Անունի բնագանցութիւնը պատմական լոյսի ներքոյ. անուն եւ անհատականութիւն»), եօթերորդ մասը՝ «Փիլիսոփայութեան մէջ կողմնորոշուելու մասին (փիլիսոփայութիւն եւ կենսագագացողութիւն)», ութերորդ մասը՝ «Երկիր եւ երկինք» (փիլիսոփայութիւն, աստղաբաշխութիւն, բնագիտութիւն), իններորդ մասը՝ «Խորհրդանշանաստեղծագործութիւնը եւ մշտնջենականութեան օրէնքը»: Իրենց հերթին այս մասերից իւրաքանչիւրը բաղկացած է բարդ եւ խորունկ ուսումնասիրութիւններից: «Յետադարձ հեռանկար» ուսումնասիրութիւնը առաջին մասի երրորդ բաժինն է:

Դժուար, բարդ եւ ողբերգական ժամանակներ էին: 1922 թուականին մեծամասնականները բարձր իշխանութիւնների թոյլտուութեամբ Ղրիմից մի նաւով Ռուսաստանից հեռացաւ մօտ երեք հարիւր մտաւորական, Նշանաւոր մարդիկ՝ գրողներ, բանաստեղծներ, փիլիսոփաներ, արուեստագէտներ – բոլորը՝ յայտնի ու ճանաչուած մարդիկ: Ընդունուած է այդ ուղերթը – այդ նաւը անուանել «փիլիսոփաների նաւ»: Այդ նաւից յետոյ խորհրդային երկրի երկաթէ դռները մեկընդմիջտ փակուեցին բոլորի համար: Հայր Պաւել Ֆլորենսկին նոյնպէս կարող էր մեկնել, բայց նա հոգեւին մեկընդմիջտ կապուած էր եկեղեցուն, ռուսական մշակոյթին եւ երկրին:

Մոսկուայում ստեղծուել էր այսպէս կոչուած «Բարձրագոյն գեղարուեստա-տեխնիկական արուեստանոցներ» կրթական հաստատութիւնը (ռուսերէն յապաւումով՝ Վխուտեմաս):

1921 թուականին Հայր Պաւել Ֆլորենսկին ընտրում են Վխուտեմասի պրոֆեսոր, միեւնոյն ժամանակ նա երկրի էլեկտրականացման մեծ ծրագիրը իրագործող հաստատութեան՝ Պետէլեկտրոյի համակարգում գիտական եւ դեկավարական աշխատանքի է կոչում:

Այս տարիները մեծ մտածողի ստեղծագործական գործունէութեան ամենաբարձր ու արդիւնաւոր ժամանակն է: Շարունակում է դասախօսութիւններ կարդալ: Իր դասաւանդած դասընթացների գիտական թեմատիկ բազմազանութիւնը զարմանք է պատճառում: Վխուտեմասում դասաւանդում է «Հումանիստական կրիտիցիզմը իբրեւ այդպիսին», ռազմական ակադեմիայում՝ «Գիւղացիական պատերազմները Ռէֆորմացիայի շրջանում», Գեղարուեստների ակադեմիայում՝ «Բարոյագիտութեան տարգատումը իբրեւ գիտութիւն»... Եւ այսպէս շարունակ:

Այս տարիներին Հայր Պաւել Ֆլորենսկին առաւել զբաղւում է գիտահետազօտական աշխատանքով, հիմնականում ասպարէզ ընտրելով կիրառական

Ֆիզիկան: Պետական փորձարարական էլեկտրատեխնիկական ինստիտուտում Հայր Ֆլորենսկին ստեղծում է նիւթերի ուսումնասիրութեան կենտրոն, անում է մի շարք կարեւոր գիւտեր եւ յայտնագործութիւններ: Այդ ընթացքում հրատարակում է լուրջ եւ ծանրակշիռ ուսումնասիրութիւններ՝ «Դիէլեկտրիկները եւ դրանց տեխնիկական կիրառումը», «Կարբոլին: Դրա արտադրութիւնը եւ իւրապատկութիւնները», «էլեկտրատեխնիկական նիւթաբանութեան դասընթաց» եւ այլն:

Դժուար է պատկերացնել այնպիսի մի եզակի անձնաւորութիւն, որ կատարելապէս տիրապետում է մաթեմատիկական, ֆիզիկայի, փիլիսոփայական, գեղարուեստական եւ կրօնական մտածողութեանը եւ տարիներ շարունակ իր գործունէութեամբ ձգտում է հասնել դրանց բնականոն եւ կատարեալ միասնութեանը:

Այդ եզակի անհատականութիւնը Հայր Պաւել Ֆլորենսկին է, որ իր ողջ կեանքում եղաւ եւ մնաց իսկական հաւատացեալ քրիստոնեայ: Թէպէտեւ Հայր Ֆլորենսկին աշխատում էր խորհրդային զանազան հաստատութիւններում եւ հիմնարկներում, զբաղեցնելով երբեմն բարձր եւ պատասխանատու պաշտօններ, այնուամենայնիւ մշտապէս կրում էր հոգեւորականի իր սքեմը: Դա չտեսնուած բան էր խորհրդային երկրում: Իր սքեմը նա կրեց մինչեւ 1928 թուականը:

1928 թուականին խորհրդային իշխանութիւնը որոշում է վերջնականապէս ոչնչացնել Տրոյիցէ-Սերգէեւեան Լաւրան, ներկայիս Զագորսկը: Մամուլով նախապատրաստում է այդ վայրագութիւնը, սպառնական յօդուածներ են տպագրւում: 1928 թուականին խորհրդային իշխանութեան պատկան մարմինները ներխուժում են Տրոյիցէ-Սերգէեւեան Լաւրա, տակնուվրայ են անում ողջ համալիրը, խուզարկութիւններ են անում եւ բռնազրաւում են եկեղեցու ունեցուածքը: Եւ, ի վերջոյ, ձերբակալում են տասնեակ ու տասնեակ հոգեւորականներ: Ձերբակալում են նաեւ Հայր Պաւել Ֆլորենսկին: Նրա ճակատագիրը արդէն որոշուած էր:

1918 թուականից սկսած Հայր Ֆլորենսկիի դէմ անլուր հալածանք է ծաւալւում: Հայր Ֆլորենսկիին մի կերպ հանդուրժում էին եւ չէին համարձակւում կտրուկ քայլերի դիմել: Հիմա հալածողները հասնում են իրենց նպատակին: Նրան, մեծ մտածողին եւ բացառիկ գիտնականին, հինգ զաւակի հօրը թոյլ չեն տալիս բնակուելու մեծ քաղաքներում եւ առժամանակ աքսորում են Նիժնի Նովգորոդ գաւառական քաղաքը: Բայց աքսորանքը կարճ է տեւում. նշանաւոր գրող Մաքսիմ Գորկու կնոջ՝ Եկատերինա Պեչկովայի միջնորդութեամբ Հայր Պաւել Ֆլորենսկիին ազատ են արձակում:

Հայր Պաւել Ֆլորենսկին իրաւունք է ստանում վերադառնալու Մոսկուա: Բայց կեանքը այլեւս ուրիշ էր:

Ռուսաստանում իշխանութեան էր եկել հասարակութեան տականքը, տգէտ, անկիրթ, բռի եւ սեւամաղձ ամբոխը: 1920-ական թուականներին առաջին տարիներից իշխանութիւնները յայտարարում են «գտում», կուսակ-

ցութեան եւ իշխանութեան շարքերը «զտում» են, ազատում են անցանկալի անձանցից: Փաստօրէն հաշուեյարդար են տեսնում անցանկալի, մանաւանդ մտաւորական մարդկանց հետ: Այս ընթացքը տեւում է տարիներ, եթէ աւելի ճշմարտացի լինենք՝ խորհրդային իշխանութեան բոլոր տարիների ընթացքում: 1930-ական թուականներին այս մոլեգին արշաւանքը ժողովրդի դէմ նոր թափ է առնում: Մի առանձին մոլեգնութեամբ իշխանութիւնները պայքար են սկսում կրօնի եւ եկեղեցու դէմ: Ամբողջ երկրում եկեղեցիները քանդում էին, աւերում կամ պարզապէս պայթեցնում էին: Միայն Ռուսաստանում շուրջ 57000 եկեղեցիից մնում է մօտ 6000-ը: Միլիոնաւոր մարդիկ, որոնց հետ նաեւ մեծաթիւ հոգեւորականներ, յայտնւում են բանտերում, համակենտրոնացման ճամբարներում, աքսորում կամ պարզապէս զնդակահարւում են: Իշխանութեան եկած սեւամաղձ, կրթութիւնից եւ բարոյական արժանիքներից զուրկ ամբոխը առանձնապէս ատում է կիրթ, գրագէտ, մտաւորական մարդկանց: Ոճրագործ բռիների ստեղծած բռնապետութիւնը ձգտում է իսպառ ոչնչացնել միտքն ու մտածող մարդկանց: Շեքսպիրը իր «Յուլիոս Կեսար» ողբերգութեան մէջ Կեսարի շուրթերով հիանալի ձեւակերպել է բռնապետերի եւ բռնապետութեան կարեւոր սկզբունքը՝ «Շատ է մըտածում, այսպիսի մարդիկ վտանգաւոր են»: Իհարկէ, վտանգաւոր էր նաեւ Հայր Պաւել Ֆլորենսկին:

1933 թուականի Փետրուարին Հայր Պաւել Ֆլորենսկիին նորից են ձերբակալում: Նրան մեղադրում են հակայեղափոխական կազմակերպութեան մասնակից լինելու մէջ, որն իբր, նպատակ էր դրել, Եկեղեցու վրայ հիմնուելով, ստեղծել նոր իշխանութիւն: Կեղծ ցուցմունքներ ստանալու համար հետաքննութիւնները ընթանում են խոշտանգումներով եւ կտտանքներով: 1933 թուականի Յուլիոսին Հայր Պաւել Ֆլորենսկիին դահճային եռեակը, երեք հոգուց բաղկացած յատուկ յանձնախումբը 5-10 րոպէսում դատավճիռ էր կայացնում, դատապարտում է տասը տարուայ ազատազրկման պատժիչ աշխատանքային գաղութում: Օգոստոսին Հայր Պաւելին կալանաւորների յատուկ խմբով աքսորում են Հեռաւոր Արեւելք, բախտի դաժան ծաղրով «Ազատ» անունը կրող համակենտրոնացման ճամբարը: Այստեղ նա աշխատում է Համակենտրոնացման ճամբարների արեւելեան կենտրոնի գիտա-հետազոտական բաժնում: Մի քանի ամիս յետոյ նրան տեղափոխում են Սկովորոդինօ կոչուող վայրը սառցակալման փորձարարական կայանում աշխատելու: Այստեղ Հայր Պաւել Ֆլորենսկին ուսումնասիրութիւններ է կատարում, որոնք յետագայում մեծ դեր են խաղում յաւերժական սառածութեան պայմաններում աշխատանքներ ծաւալելու համար:

1934 թուականի Յուլիոսին Հայր Պաւելի կինը եւ երեք երեխան Եկատերինա Պեչկովայի միջնորդութեամբ եւ օգնութեամբ իրաւունք են ստանում համակենտրոնացման ճամբար՝ աքսորավայր մեկնելու եւ տեսակցելու Հայր Պաւելի հետ: Այդ այցելութիւնը զուտ տեսակցութիւնից բացի ունեցել է նաեւ մէկ այլ նպատակ: Չեխոսլովակիայի կառավարութիւնը առաջարկու-

Թիւն է արել բանակցել խորհրդային կառավարութեան հետ՝ Հայր Պաւել Ֆլորենսկիին աքսորից ազատելու եւ Չեխոսլովակիա տեղափոխելու համար: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր իր՝ Հայր Պաւելի համաձայնութիւնը: Հայր Պաւել Ֆլորենսկին կտրականապէս հրաժարուում է:

Ռուսաստանի ծայր հիւսիսում, Սպիտակ ծովում, կայ կղզիների մի խումբ՝ Սոլովեցկեան կղզիներ: Արշիպելագը բաղկացած է վեց կղզուց: Գլխաւոր կղզին Սոլովկին է: Ժամանակին այստեղ եղել է շատ յայտնի եւ կարեւոր մենաստան: Վանական համալիրը գործել է 16-19-րդ դարերում: Խորհրդային իշխանութիւնը Սոլովկին վերածել էր ամենադժուարին աքսորավայրի: Այստեղ էր երկրի ամենամոռայլ ու դժուար բանտերից մէկը: 1934 թուականի Սեպտեմբերին յատուկ պահակախումբով Հայր Պաւելին տեղափոխում են Սոլովեցկի համակենտրոնացման ճամբարը: Այստեղ նա աշխատում է մանիչի (իող) արտադրութեան գործարանում: Այստեղ Հայր Պաւելը զբաղւում է նաեւ մանիչի արդիւնահանման, մասնաւորապէս ջրիմուռներից մանիչ ստանալու խնդիրներով: Այս ասպարէզում նա տասից աւելի յայտնագործութիւն է անում, որոնք արտօնագրւում են: Մանիչի ստացումը բացառիկ ծառայութիւն էր խորհրդային իշխանութեանը. մինչ այդ խորհրդային իշխանութիւնը մանիչը հիմնականում ներմուծում էր: Երբ երկու տարի յետոյ, 1939-ին, խորհրդային իշխանութիւնը պատերազմ կը սկսի Ֆինլանդիայի դէմ եւ յետոյ, 1941-ին, կը մտնի մեծ պատերազմի մէջ, մանիչի առատութիւնը կ'ապահովի հարիւր հազարաւոր վիրաւորների բուժումը: Բայց ոճրագործ իշխանութիւնները ոչ մի ծառայութիւն, ոչ մի արժանիք հաշուի չեն առնում:

1937 թուականին Սոլովեցկեան յատուկ նշանակութեան համակենտրոնացման ճամբարը վերածւում է բանտի: Հայր Պաւել Ֆլորենսկին այլեւս բանտում է, գործարանում չէ:

1937 թուականի Յունիսին Սոլովեցկեան համակենտրոնացման ճամբարում սկսւում են զանգուածային գնդակահարութիւններ: 1937 թուականի նոյեմբերի 25-ին Լենինգրադի մարզի Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի յատուկ եռեակը Հայր Պաւել Ֆլորենսկիին դատապարտում է պատժի առաւելագոյն չափի՝ գնդակահարութեան, «հակայեղափոխական պրոպագանդի համար»: 1937 թուականի դեկտեմբերի 8-ին Հայր Պաւել Ֆլորենսկիին գնդակահարում են:

* * *

1958 թուականին, միլիոնաւոր յանրաւի այլ դատապարտուածների պէս, Հայր Պաւել Ֆլորենսկին արդարացւում է «հակախորհրդային գործունէութեան փաստերի բացակայութեան» հիմնաւորումով: Յաջորդ տարում, 1959-ին, պատկան մարմինները վերահաստատում են նախկին որոշումը նոր ձեւակերպումով՝ «յանցակազմի բացակայութեան պատճառով»:

Բայց ողբերգութիւնը շարունակւում է... 1956 թուականին, երբ պետական որոշումով բոլոր բռնադատուածներին՝ միլիոնաւոր աքսորուածներին,

բանտարկուածներին, տաժանավայր ուղարկուածներին եւ գնդակահարուածներին, դժոխքում հրաչքով ողջ մնացածներին եւ տաժանավայրերում մեռածներին յայտարարեցին անմեղ ու արդար եւ բոլորին արդարացրին, դեռեւս ողջ էին բոլոր տանջողներն ու խոշտանգողները, անմեղ մարդկանց տաժանավայրի եւ գնդակահարութեան դատապարտած քննիչները, դատաւորներն ու դատախազները: Եւ ոչ ոքի, ոչ ոքի մի օր չասացին, թէ ինչն^օ էք անմեղ մարդկանց տանջել, խոշտանգել, մահուան դատապարտել եւ սպանել: Ոչ ոք նրանցից հաշիւ չպահանջեց, պատասխանատուութեան չկանչեց: Հակառակը, բոլոր այդ մարդիկ ոչ միայն շարունակում էին մնալ իրենց պաշտօններում, այլեւ արժանանում էին նորանոր պարգեւներ, շքանշանների, ստանում էին նոր կոչումներ եւ աստիճաններ, արժանանում էին նոր, աւելի բարձր պաշտօնների: Սա անբարոյական իշխանութեան եւ անբարոյական իրականութեան բացարձակումն էր: Ոչնչացուել, ճամբարային փոշի էին դարձել հազարաւոր մեծատաղանդ ու հանճարեղ մարդիկ՝ բանաստեղծներ, գրողներ, երաժիշտներ, դերասաններ, նկարիչներ, գիտնականներ, որոնցով Ռուսաստանը այսօր աշխարհի առաջ հպարտանում է, պարծենում է նրանցով:

Եւ այնուամենայնիւ, խորհրդային բոլոր հանրագիտարաններում, ինչպէս նաեւ այսօրուայ ռուսական հանրագիտարաններում նրանց անուան դիմաց պարզապէս գրուած է՝ «վախճանուել է 1937 թուականին»: Թէ ինչպէ՞ս եղաւ, որ բոլոր այդ մեծատաղանդ մարդիկ մեռան նոյն տարում եւ ինչի՞ց մեռան, հիւանդութիւնի՞ց, թէ՞ ինչից, ոչ մի բառ չի ասուում: Այնպէս որ խորհրդային ռէժիմը իր բոլոր այլանդակութիւններով, աւելի ծաղկուն եւ աւելի փարթամ, շարունակում է: Այդպէս էլ պետական որակում, պետական գնահատութիւն չի տրուել, ընդհանրական բառով ասուած, 1937 թուականին: Թաթար-մոնղոլական հորդայի բռնապետութեան այսօրուայ խանը արգելել է խօսել այդ մասին:

Բռնապետութիւնները ոչնչանալու են, թագաւորները, կոմունիստական կուսակցութեան ողորմելի գլխաւոր քարտուղարները, թաթար-մոնղոլական բռնապետութեան նախագահներն ու խաները, այսօրուայ չարաբաստիկն էլ հետները, փոշի են դառնալու, Պաւել Ֆլորենսկին եւ բոլոր Պաւել Ֆլորենսկիները ապրելու են, շարունակելու են ապրել, որովհետեւ նրանք Աստուծոյ պարգեւն են մարդկութեանը, մարդկութեան խիղճն են ու ստեղծագործ հանճարը:

Իբրեւ պարզ մարդ, երբ խօսում ես Հայր Պաւել Ֆլորենսկիի մասին, երկիւղածութեամբ խոնարհւում ես իր նկարագրի առջեւ, եւ իբրեւ հայ, ներքին մի թաքուն հպարտութիւն ես զգում, որ Հայր Պաւել Ֆլորենսկիի երակներում նաեւ հայկական արիւն կար: Ո՞վ գիտի, միգուցէ թէ հայկական արեան ճա՞յնն է իր մեծ Սկիզբը...

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ*

ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ¹

Կանտի բարոյագիտութեան հիմնաւորումէն ետք, այժմ ծանօթանանք Կանտի բարոյագիտութեան կիրառմանը, մարդոց անձնական ու հրապարակային-հասարակական կեանքին մէջ:

Կանտ ծանօթ է, որպէս ծայրայեղ խստաբարոյ (խստապահանջ, Rigorist) եւ խիստ բծախնդիր (մանրախնդիր, Pedant) անձնաւորութիւն մը, որ այդքան ալ իրականութեան չի համապատասխաներ, որովհետեւ գիտնական փիլիսոփան բոլոր մեծ հարցերու նկատմամբ եղած է միշտ լայնամիտ ու մեծահոգի: Եւ ասիկա կարելի է հաստատել Կանտի երկերուն մէջ ընդհանրապէս եւ «Առաքինութեան ուսմունք»ին մէջ մասնաւորաբար, որ ինչպէս նշեցինք «Բարոյականութեան բնագանցութիւնը» երկի երկրորդ մասը կը կազմէ եւ որուն մասին հետագային, առանձնաբար պիտի անդրադառնանք:

Կանտ թէ՛ իր բարոյագիտական երկերուն մէջ եւ թէ՛ իր անձի գործնական օրինակով առաջնահերթութիւն կու տայ ճշմարտացիութեան (գերմ.՝ Wahrheithaftigkeit, անգլ.՝ Truthfulness), նախ ինքնիրեն հանդէպ ապա ուրիշներուն հանդէպ, որով արգիլուած կը համարուի որեւէ ինքնախաբէութիւն եւ ստախօսութիւն: Կանտի համաձայն, սոստը կամ գիտումնաւոր անձնարտութիւնը մարդկային բնութեան «նեխած արատն»² է եւ մարդու ինքնիրեն հանդէպ

* Նիւթը, մեծ մասամբ քաղուած եւ յօդուածի վերածուած է հեղինակին նոր լոյս տեսած «ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» գիրքէն (632 էջ), Անթիլիաս, 2021:

¹ Հիմնաւորում – (գերմ.՝ Begründung, անգլ.՝ Grounding).- հասկացութիւնը փիլիսոփայութեան մէջ կը նշանակէ նիւթի մը կամ դրոյթի մը պատճառներու, փաստարկներու կամ ապացոյցներու բացատրութիւնը տալ, որ արդարացում մը կը թելադրէ: Հիմնաւորման (ու արդարացման) փորձերը կը ձգտին հասնիլ «վերջնական հիմնաւորման» (գերմ.՝ Letztbegründung, անգլ.՝ Ultimate Grounding) մը, որ կը յատկանշուի իր՝ ապահով, բացարձակ, ճշմարիտ, ստոյգ, անհերքելի ու վերջնական ըլլալու հանգամանքներով:

² Կանտի «Սոստը, մարդկային բնութեան նեխած արատն է» = "Die Lüge ist der faule Fleck in der menschlichen Natur" արտայայտութիւնը քաղուած է իր "Verkündigung des nahen

եղած՝ մեծագոյն օրինազանցութիւնը ու արժանապատուութեան անարգումը: Կանտ կը մերժէ ընդունիլ քաղաքավարութենէ մղեալ սուտերը, ինչպէս օրինակ նամակագրութեան մէջ գոնէ իր ժամանակին սովորութիւն դարձած ստորագրութեան ձեւը՝ «Ձերդ հնազանդ ծառան, խոնարհարար», եւայլն...:

Կանտ, իր «Մարդասիրութենէ մղեալ ստախօսութեան ենթադրեալ իրաւունքի մը մասին» (1797, գերմ. բնագիր՝ "Über ein vermeintes Recht aus Menschenliebe zu lügen", անգլ.՝ "On the supposed right to lie because of philanthropic concerns") երկին մէջ, կը մերժէ ընդունիլ, նաեւ այսպէս կոչուած, «անհրաժեշտութեան սուտը» (գերմ.՝ "Notlüge") կամ «սպիտակ սուտը» (անգլ.՝ "White Lie"), որուն պատճառով, իրականութեան մէջ, ոչ ոք անհատապէս կը տուժէ, բայց կրնայ որոշ առաւելութիւններ ընձեռել, այսուհանդերձ, Կանտի համաձայն, ինքնին սուտը ընդհանրապէս կը վնասէ... Եթէ անհատներու չվրնասէ, կը վնասէ՝ մարդկութեան:

Կանտ, բարեսրտութենէ մղուած ստախօսութեան (սուտի) շօշափելի հետեւեալ օրինակը կը բերէ.՝ Ոճրագործ մը մտադրած է տանդ մէջ ապաստանած ընկերդ սպաննել եւ քեզի կը հարցնէ՝ ընկերոջդ կեցութեան վայրը: Գիտնալով ոճրագործին վատ մտադրութիւնը, երկընտրանքի մը առջեւ կը գտնուիս. ճշմարտութիւնը յայտնէ՞ թէ ստել, փրկելու համար ընկերոջդ կեանքը: Կանտի համաձայն, ճշմարտացիութիւնը միանշանակ՝ մարդկային բացարձակ պարտաւորութիւն մըն է, բայց միայն անոնց հանդէպ, որոնք ճշմարտութիւնը իմանալու իրաւունքը ունին: Կանտի համաձայն, անձ մը երբ կը ստէ, նախ անարգած կ'ըլլայ ինքզինք եւ իր մէջ գտնուող մարդկութիւնը:

Կանտ մեծ կարեւորութիւն կը շնորհէ նաեւ մարդու «քաջարի ինքնուրոյնութեան», որ առնչուած է ներքին անկախութեան եւ ազատութեան: Կանտի բառերով՝ «ազատ է այն մարդը, որ միայն ինքնիրմէ կախեալ է»: (Ազատութիւն հասկացութիւնը արդէն մանրամասնած ենք:)

Իսկ «քաջարիութիւն»ը կամ «արիութիւն»ը (յուն.՝ andreía) կեանքի ընթացքին, սեփական արժանապատուութեան (ուրիշներու դէմ) պահպանման կողքին, կը բացայայտուի մանաւանդ անձնական կիրքերու զսպումին կամ ընդհանրապէս ինքնագապումին եւ չափաւորութեան միջոցներով:

«Չափաւորութիւն»ը (յուն.՝ sôphrosynê) ծայրայեղութիւններէն ինքնագապումի ու խոհեմութեան միջոցով խոստափիլն է: Ան մեզ կ'առաջնորդէ դէպի համեստութիւն: Օրինակ՝ «արիութիւնը» Արիստոտէլի համաձայն առաքինութիւն մըն է, երբ խոհեմաբար կը խոստափիս անոր երկու ծայրայեղութիւններէն՝ վայրագութենէն եւ երկչոտութենէն եւ կ'ընտրես երկուքին «միջին»ը (յուն.՝ mesôtês):

Կանտ, այս հարցի առնչութեամբ, բոլորովին տարբեր մօտեցում ունի: Կանտ, նախ կը հակաձառէ «միջին»ի գաղափարին ապա Կանտի մօտ արիւ-

Abschlusses eines Traktats zum ewigen Frieden in der Philosophie" (1796, «Փիլիսոփայութեան մէջ յաւերժական խաղաղութեան մասին ուսումնասիրութեան մօտակայ աւարտի հոշակումը») երկէն:

Թիւնը (լատ.՝ fortitudo) բարոյական արիութիւնն³ է (լատ.՝ fortitudo moralis), որ կ'առնչուի ինքնագուստումին եւ չափաւորութեան ու կը շեշտուի՝ «քաջարի ինքնուրոյնութեան» պարագային, որ իր կարգին կապ ունի «ազատութեան» հետ:

Իսկ վերոյիշեալ խոհեմութիւնը (յուն.՝ phronêsis) սերտ առնչութիւն ունի իմաստութեան (յուն.՝ sophía) հետ:

Կանտ մեծ կարեւորութիւն տուած է նաեւ «արդարութեան» (յուն.՝ dikaiosynê), որպէս առաքինութիւն, որու միջոցով բարոյագիտութիւնը անհատական ոլորտէն կ'անցնէր՝ ընկերային ոլորտ: Կանտի համաձայն, **արդարութիւնը մարդոց ուրիշներու հանդէպ ունեցած պարտաւորութիւն մըն է:** Այս մասին, հետագային, աւելի մանրամասն՝ «Կանտի առաքինութեան ուսմունքը» բաժնին մէջ:

Հակառակ անոր, որ Կանտ իր երկերուն մէջ ոչ մէկ ուղղակի ակնարկութիւն ըրած է յոյն փիլիսոփայ Պլատոնի չորս գլխաւոր առաքինութիւններուն⁴ մասին, այսուհանդերձ, ինչպէս տեսանք, անոնք արդէն առկայ են Կանտի երկերուն մէջ, սակայն Կանտի իւրայատուկ մօտեցումով եւ հասկացողութեամբ:

Հակառակ անոր, որ Կանտ քաջ ծանօթ էր հռոմէացի ստոյիկեան փիլիսոփայ Կիկերոնի (Cicero) բարոյագիտութեան, որ աւելի սովորական կեանքին կ'առնչուէր եւ ընդհանրապէս կը հիմնուէր՝ պատիւ (լատ.՝ honestas), հաւատարմութիւն (լատ.՝ fides), ընկերակցութիւն (լատ.՝ societas), պատշաճութիւն (լատ.՝ decorum) եւ նմանօրինակ հասկացութիւններու վրայ, սակայն Կանտի համար ասոնք շատ մակերեսային էին եւ կարելի չէր նման հասկացութիւններով բարոյագիտութիւնը ըմբռնել եւ հիմնաւորել:

Կանտի համաձայն, օրինակ, պատիւ հասկացութեան կարելի չէ բարոյական պարտաւորութիւններ հետեւցնել, այլեւ բարոյական պարտաւորութիւնները կարելի է գտնել միայն մեր մէջ, մեր բանականութեան մէջ: Նոյնպէս, ընկերութեան մը մէջ ունեցած մեր դիրքն ու վիճակը (Status), բարոյականութեան չափանիշ մը չի կրնար ըլլալ... որպէս բարոյական անհատներ, բոլորը հաւասար են: Եթէ նկատի ունենանք Կանտի ապրած դարաշրջանը՝ պահպանողական կայսերական Գերմանիոյ մէջ, ապա նմանօրինակ տեսակէտները կարելի է «յեղափոխական» նորարարութիւն համարել:

Կանտի բարոյագիտութեան կիրառման մաս կը կազմեն նաեւ հետեւեալ երկու շատ կարեւոր բաժնիները, որոնք յաջորդաբար պիտի մանրամասնուին.-

- Կանտի «անպայմանական հրամայականը» եւ
- Կանտի «առաքինութեան ուսմունքը»:

³ Կանտի «Բարոյական արիութիւն» (լատ.՝ fortitudo moralis) բառակապակցութիւնը քաղուած է իր "die Metaphysik der Sitten" (MdS, 1797, «Բարոյականութեան բնագանցութիւնը») երկէն, էջ A 46, «Առաքինութեան մասին ընդհանրապէս» ենթավերնագրի տակ:

⁴ Պլատոնի (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) չորս գլխաւոր առաքինութիւններն են. իմաստութիւն, արիութիւն, չափաւորութիւն եւ արդարութիւն:

**ԿԱՆՏԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԱՆՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ**

Բարոյագիտութեան մասին գիրքի մը սկիզբը գրուած է՝ «Մարդը հարկադրուած է վարուելու»: Այլ խօսքով, մարդը անհրաժեշտօրէն եւ յարատեւ պէտք է որոշումներ կայացնէ եւ ըստայնմ վարուի, սկսելով կենցաղային պարզ վարմունքի օրինակներէն, մինչեւ բարոյական բարդ վարմունքի օրինակները: Եթէ մտածեմ, որ իմ որոշումս պէտք է կայանայ միայն ի՛մ բանականութենէն ելլելով ու ես (տեսակ մը) պարտաւորուած եմ՝ իմ բանականութեան անսալու, այն ատեն վարմունքիս ելակէտը եւ հիմնաւորումը՝ պարտագիտական է, որու վրայ հիմնուած է Կանտի պարտագիտական բարոյագիտութեան (գերմ.՝ Pflichtethik, անգլ.՝ Deontological Ethics) տեսութիւնը:

Կանտ, ինչպէս նշեցինք, բարոյագիտական իր տեսութիւնը կը հիմնէ հիմնական սկզբունքի մը վրայ, զոր կը կոչէ՝ անպայմանական հրամայական (գերմ.՝ Kategorischer Imperativ, անգլ.՝ Categorical Imperative): Այստեղ մարդուն պարտաւորութիւնը կը ներկայանայ, գործնական բացարձակ հրամայականով, առանց որեւէ նախապայմանի: Այս սկզբունքը Կանտ մանրամասնօրէն կը ներկայացնէ, իր բարոյականութեան մասին գրած երեք նշանաւոր երկերէն առաջինին մէջ «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան» (գերմ. բնագիր՝ "Grundlegung zur Metaphysik der Sitten", GMS, 1785):

Կանտի համաձայն, անպայմանական հրամայականի հասկացութիւնը, եթէ յստակ այլ պայմաններ չնախատեսէ, նաեւ ընդհանրականացման գաղափարը կը բովանդակէ. այսինքն՝ ան ի զօրու է՝ բոլոր բանական էակներուն (օրինակ՝ մարդոց) համար եւ ամէնուրեք:

Կանտի անպայմանական հրամայականը ինքնին կանոն մը չէ, այլ՝ չափանիշ մը: Ով որ գիտնալ ուզէ, որ իր մտադրած կամ արդէն կատարած վարմունքը բարոյապէս միշտ է, պէտք է փորձէ այդ վարմունքը, որպէս ընդհանրականացած կանոն տեսնել, քննել ու դատել՝ արդեօք կարելի՞ է այդ կանոնը, առանց հակասութեան կամ առարկութեան, որպէս ընդհանուր կանոն ընդունիլ եւ ընդունիլ տալ: Այս գաղափարը կարելի է օրինակով մը աւելի յստակացնել: Կրնա՞յ գողը իր գողցած ապրանքը իր սեփականութիւնը նկատել, պարզապէս հետեւելով սեփականութեան օրէնքին: Անշուշտ ոչ, որովհետեւ «ես կը գողնամ, սեփականութիւն ձեռք բերելու համար» իմ անձնական կանոնը (մաքսիմը) կարելի չէ որպէս ընդհանուր կանոն ընդունիլ՝ ինքնին հակասութեան մէջ ըլլալուն պատճառով: Այստեղ գողը սեփականութեան օրէնքը խախտած կ'ըլլայ, երբ ուրիշի մը սեփականութիւնը փորձէ իրը դարձնել:

Կանտի անպայմանական հրամայականը, պարզապէս անձնական կանոնի մը առանց հակասութեան ընդհանրականացումը չէ միայն, այլեւ պէտք է նկատի առնել՝ վարմունքին նպատակը (գերմ.՝ Zweck, Ziel, անգլ.՝ End, Purpose), վարմունքը ինքնին եւ վարմունքը կատարող անհատը:

Կանտի համաձայն, մարդոց գործնական բանակութիւնը, ի յառաջագունէ (a priori), բարոյականութիւնը կանխող հիմնական սկզբունք մը կը պարունակէ, որով բարոյականութիւնը ընդհանրապէս կարելի կը դառնայ: Այս հիմնական սկզբունքը, որ առկայ է բոլորի մօտ եւ ամէնուրեք, կը ներկայանայ նաեւ որպէս մարդկային բարի խիղճը, որ անհրաժեշտ է լաւ ու բարի վարուելակերպի համար, սակայն Կանտի համաձայն դեռ բաւարար չէ: Ուրեմն այս հիմնական սկզբունքը, որ խիղճն⁵ է (գերմ. Gewissen, անգլ.՝ Conscience) կը սահմանէ անպայմանական հրամայականը, որ պարտագիտական բնոյթ կը կրէ: Ասոր կողքին, վարմունքի մը բերած օգուտէն եւ անոր հետեւանքներէն աւելի կ'արժեւորուի վարմունքի մը դիտաւորութիւնը. եթէ կամքը բարի է, այն ատեն վարմունքն ալ բարոյապէս ճիշդ է:

Կանտ, խիղճէն անմիջապէս առաջ կարեւորութեամբ կը յիշէ նաեւ բարոյական զգացումը (գերմ.՝ Moralisches Gefühl, անգլ.՝ Moral Feeling), որ բարոյական օրէնքին հանդէպ յարգանքն ու հետաքրքրութիւնը կը ներկայացնէ: Բարոյական զգացումը կրնայ՝ հաճելի կամ անհաճոյ (տհաճ) ըլլալ:

Վերոյիշեալ հիմնական սկզբունքի կամ խիղճի մասին հարկ է այստեղ փակագրիծ մը բանալ եւ մանրամասնել զայն, ըստ Կանտի:

➤ ԽԻՂՃ

Ընդհանուր ըմբռնողութեամբ խիղճը, մարդկային մտքի մէջ խարսխուած այն զգացողութիւնն է, որով կարելի է պարտաւորութիւնները ճանչնալ. ան կը զանազանէ բարին ու չարը, ճիշդն ու սխալը եւ անկէ կը յառաջանայ անձնական համոզման պահանջք մը՝ բարոյական վարմունք ունենալու:

Խիղճը, սակայն, ներքին օրինագիրք մը ըլլալէ աւելի ներքին դատարան մըն է, որուն առջեւ մարդ պատասխանատու կը նկատուի իր ըրած կամ ընելիք արարքներուն համար: Այլ խօսքով խիղճը կը դատէ արդէն կատարած արարքներդ, որպէս «բարի ու ճիշդ» կամ «չար ու սխալ» եւ բարոյական արժեքաւորումով կ'ազդարարէ ծրագրած արարքներդ:

Խիղճը կը կազմաւորուի ժամանակի ընթացքին, որպէս արդիւնք զանազան ազդեցութիւններու, ինչպէս՝ նկարագրի հիմնական յատկութիւնները, ընկերային, քաղաքական ու կրօնական կանոնները եւ դաստիարակութիւնը: Այս իմաստով, ժամանակի ընթացքին վերոյիշեալ ազդեցութիւններու փոփոխութեան պարագային, նաեւ խիղճը փոփոխութեան ենթակայ է: Խիղճը ներքին յոյզերու հայելին է: Խիղճը նաեւ անկողմնակալ դատաւորն է, որ անսխալ կը զանազանէ՝ չարն ու բարին:

Հայերէնի մէջ խիղճ եզրոյթէն կազմուած են բազմաթիւ բառեր, ինչպէս՝ խղճմտանք (= խիղճ մտաց), խղճամտութիւն, խղճահարութիւն կամ պատ-

⁵ Կանտի «Խիղճ» (գերմ. Gewissen, անգլ.՝ Conscience) հասկացութեան մասին նշուած զաղափարները քաղուած են իր "Die Metaphysik der Sitten" (MdS, 1797, «Բարոյականութեան քննադանգութիւնը») երկէն, էջ A 38:

կերպար բառակապակցությամբ՝ խիղճի խայթ կամ խիղճի տանջանք:

Եւրոպական լեզուներու մէջ, խիղճին հոմանիշ է՝ Conscience (անգլ. եւ ֆրնս.) եզրոյթը, որ յառաջացած է լատիներէն եզրոյթէն: Հետաքրքրական է հաստատել, որ թէ՛ հին-յունարէնի "syneidêsis" եւ թէ՛ լատիներէնի "conscientia" եզրերուն մէջ, գիտակցութիւնը եւ խիղճը կ'արտայայտուին նոյն յիշեալ եզրոյթերով, որոնք բառացի թարգմանությամբ նաեւ կը նշանակեն՝ «հետը գիտնալ» կամ «մէկտեղ գիտնալ»: (Վերոյիշեալ եզրերուն մէջ syn- եւ con- նախամասնիկները կը նշանակեն՝ «հետը» կամ «մէկտեղ»:) Իսկ գերմաներէնի մէջ, հոմանիշ Gewissen եզրոյթին մէջ եւս կը գտնենք գիտնալու (Wissen) գաղափարը:

Հոգեբանութեան ոլորտին մէջ, կարելի է եզրակացնել, որ ընդհանրապէս, երբ մարդ խիղճով կը գործէ կամ բարեխիղճ է, ներքնապէս աւելի հանգիստ կը զգայ. իսկ եթէ անխիղճ կերպով գործէ՝ կը խղճահարի կամ խիղճի խայթ կ'ունենայ:

Քրիստոնէական աստուածաբանութեան համաձայն, խիղճը առնչուած է աստուածային կամքին: Հետաքրքրական է հաստատել, որ Հին Կտակարանին մէջ «խիղճ» եզրը երբեք չէ յիշուած, անոր փոխարէն յաճախ օգտագործուած են մարդկային «սիրտը» եւ «երիկամը»: Իսկ Նոր Կտակարանին մէջ յաճախ յիշուած է յունարէն խիղճ (syneidêsis) եզրոյթը: Բողոքականութեան հիմնադիր **Մ. Լութեր** (գերմ.՝ Martin Luther, 1483 – 1546 թ.), մեծապէս կը շեշտէ խիղճի կարելորութիւնը եւ անոր ազատութիւնն ու անհատականութիւնը:

Փիլիսոփայութեան բնագաւառին մէջ, խիղճը, հնադարեան ժամանակներուն, **Սոկրատէսի** համաձայն՝ «ներքին ձայն»ն է: Աւելի ուշ, Միջնադարուն, **Թոմաս Աքուինացին**, խիղճը կ'առնչէ՝ «բանականութեան». իսկ Արդի Դարաշրջանին, **Կանտ**, խիղճը կ'առնչէ «գործնական բանականութեան»:

Կանտի համաձայն, գործնական բանականութիւնը իր մէջ կը պարփակէ՝ բարոյականութիւնը կանխող, ի յառաջագունէ (a priori) հիմնական սկզբունք մը, որ կ'որոշէ՝ բացարձակ եւ ամենուրեք գործող **անպայմանական հրամայականը** (Categorical Imperative): Հիմնական այս սկզբունքը կը ներկայանայ նաեւ որպէս մարդկային *բարի խիղճը*, որ շատ անհրաժեշտ է՝ *լաւ ու բարի* վարուելակերպին համար, սակայն Կանտի համաձայն ասիկա դեռ բաւարար չէ, այլ հարկաւոր է՝ պարտաւորութիւնը:

Նոյնպէս, **Կանտի** համաձայն, խիղճը՝ մարդու «ներքին դատարանի գիտակցութիւնը»⁶ կամ «ինքնաուղղուած բարոյական դատողութիւնն է»⁷:

Այսօր, կարելի չէ բարոյագիտութենէն բոլորովին անջատել խիղճի քննարկումը, իր զանազան հարցերով, ինչպէս՝ խիղճի ազատութիւնը, խիղճի անսխալականութիւնը, խիղճի բռնադատութիւնը, եւայլն...:

⁶ **Կանտի** յիշեալ մէջբերումը քաղուած է իր «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան» (1785, "Grundlegung zur Metaphysik der Sitten") երկէն, էջ 438:

⁷ **Կանտի** յիշեալ մէջբերումը քաղուած է իր «Կրօնը, լոկ բանականութեան սահմաններու մէջ» ("Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft", 1793) երկէն:

Կանտի անպայմանական հրամայականը, յաճախ կը շփոթուի «ոսկեայ կանոնին»⁸ հետ, որու բանաձեւն է. – «Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դուն ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ»:

Այստեղ հարկ է փակագիծ մը բանալ եւ մանրամասնել «ոսկեայ կանոն» հասկացութիւնը, ըստ Կանտի:

➤ ՈՍԿԵԱՅ ԿԱՆՈՆ

Որպէս գործնական բարոյագիտութեան հիմնական սկզբունք, **«ոսկեայ կանոնը»** ծանօթ է հնադարեան ժամանակներէն ի վեր, իր հետեւեալ դրական ու բացասական բանաձեւերով՝

«Այլոց հանդէպ վարուէ՛ այնպէս, ինչպէս որ կ'ուզես, որ անոնք քեզի հետ վարուին».

«Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն, դուն ալ (այդ) ուրիշներուն մի՛ ըներ»

Պատմութեան ընթացքին, կարելի է հանդիպիլ «ոսկեայ կանոնի» բազմաթիւ նմանօրինակ բանաձեւերու, որոնք կու գան արեւելեան կրօնա-փիլիսոփայական տարբեր ուղղութիւններէ. – Կոնֆուցիականութիւն (Confucianism), Հինդուականութիւն (Hinduism), Բուդդայականութիւն (Buddhism) եւ Զրադաշտականութիւն (Zoroastrianism):

Այնուհետեւ «ոսկեայ կանոնի» տարբերակներ կը տեսնենք յունական հին մշակոյթի եւ փիլիսոփայութեան մէջ, ինչպէս նաեւ զանազան կրօնքներու մօտ. – Յուդայականութիւն (Judaism), Քրիստոնէութիւն (Christianity) եւ Իսլամութիւն (Islam):

Որպէս օրինակ պիտի յիշեմ չին փիլիսոփայ Կոնֆուցիոսը (Confucius, 551 – 479 մ.թ.ա.), որ ըսած է՝ «Վարուէ՛ այնպէս, ինչպէս որ կ'ուզես որ քեզի հետ վարուին»: Նաեւ քրիստոնէական բարոյագիտութեան մէջ, կը յիշուի Յիսուսի մէկ խօսքը. – «Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց» (Մտ. 7 / 12): Տարբեր մշակոյթներու մէջ օգտագործուած ոսկեայ կանոնի բանաձեւերը կը նշեն մարդկային յարաբերութեան նուազագոյն համաձայնութեան մը գոյութիւնը, որ բարոյական ուղենիշ դարձած է:

Մանաւանդ Լուսաւորութեան Դարաշրջանէն սկսեալ, փիլիսոփայութեան ոլորտէն ներս կը տեսնենք բազմաթիւ դրական կամ բացասական քննադատութիւններ՝ ոսկեայ կանոնի առնչութեամբ: Քննադատները ոսկեայ կանոնը կը նկատէին բարոյագիտութեան ոչ պիտանի կամ պակասաւոր: Կանոն մը, որ ամբողջացման եւ յստակեցման կարիքը ունի, որովհետեւ ինքնին բարոյական որեւէ կանոն չի բովանդակեր ու երբեք չի բացայայտեր վարմունքի մը *ճիշդ* կամ *սխալ* ըլլալը: Ոսկեայ կանոնը ենթադրական բնոյթ կը կրէ եւ սերտօրէն

⁸ **Կանտի** «Ոսկեայ կանոն» հասկացութեան մասին կատարած լատիներէն մեջբերումը ("quod tibi non vis fieri" = «Ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն») քաղուած է իր «Հիմունք բարոյականութեան բնագանցութեան» ("Grundlegung zur Metaphysik der Sitten", 1785) երկի էջատակի մէկ ծանօթագրութենէն, էջ B 69:

առնչուած է խնդրոյ առարկայ անհատին:

Ոսկեայ կանոնի մասին արտայայտուած են բազմաթիւ փիլիսոփաներ, որոնցմէ պիտի յիշեմ միայն Իմմանուէլ Կանտը (նկատի ունենալով ներկայ յօդուածին Կանտի առնչութիւնը): Կանտ, իր երկերուն մէջ, ուղղակիօրէն կը հակաճառէ ոսկեայ կանոնի գաղափարին եւ կը մերժէ անոր **ընդհանուր օրէնք** ըլլալու կարելիութիւնը, որովհետեւ Կանտի համաձայն, այդտեղ կը պակսի անհատի պարտաւորութիւններու հիմքը՝ թէ՛ անհատը իր անձին հանդէպ եւ թէ՛ ուրիշներու հանդէպ:

Հակառակ բազմաթիւ քննադատութիւններուն, ոսկեայ կանոնը կարելի է նկատել մարդկային խոհեմութեան ուղղուած կոչ մը, որպէսզի անհատը խորհրդածէ իր վարմունքի առաւելութիւններուն ու թերութիւններուն մասին. կոչ մը՝ դէպի արդարութիւն եւ մարդկային արժանապատուութիւն: Ոսկեայ կանոնը կարելի է նկատել նաեւ կարելոր քայլ մը՝ մարդոց, դէպի բարոյականութիւն մատնանշող, անհատական պատասխանատուութեան: Անհատը կը փորձէ ոսկեայ կանոնով, այլ անհատի մը դրութեան մէջ մտնել եւ բարոյական ճիշդ վարմունքը ընտրել կամ եթէ ինք, անձամբ, բարոյական խտտոր ու վատ ուղիի մը մէջ գտնուի, կրնայ ոսկեայ կանոնով՝ իր իրավիճակը ուղղել եւ ճիշդը ընտրել:

Կանտի անպայմանական հրամայականի բանաձեւը եւ ոսկեայ կանոնի բանաձեւը, բոլորովին կը տարբերին իրարմէ: Ոսկեայ կանոնը եմփադրական հրամայական մըն է, **քանի որ շատ յստակօրէն նպատակադրում մը կը հետապնդէ: Այդ նպատակը կը տեսնենք բանաձեւի առաջին բաժնին մէջ** («*ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն...*»): **Կանտ, ինչպէս նշեցինք, իր երկերուն մէջ ուղղակիօրէն կը հակաճառէ ոսկեայ կանոնի գաղափարին, ուր կը պակսի անհատի պարտաւորութիւններու հիմքը՝ թէ՛ անհատը իր անձին հանդէպ եւ թէ՛ անհատը ուրիշներու հանդէպ:**

Իրականութեան մէջ, Կանտ բնութեան օրէնք մը (գերմ.՝ Naturgesetz, անգլ.՝ Natural Law) կը փնտռէր, որով կարելի ըլլար մեր բարոյական վարմունքները բնականօրէն վարել եւ գտաւ անպայմանական հրամայականը, որ իր կարգին բարոյական օրէնք (Moral Law) մըն է, բնութեան (ինչպէս բնագիտութեան = Physics) զանազան օրէնքներու նման:

Կանտ, իր երկերուն մէջ, կը ներկայացնէ «անպայմանական հրամայականի» բանաձեւի զանազան տարբերակներ, որոնք մինչեւ այսօր բարդ քրննարկումներու եւ տարակարծիք մեկնութիւններու նիւթ եղած են: Այս աշխատասիրութեան մէջ, ստորեւ, պիտի նշուին անոնցմէ հինգ կարեւորները միայն:

1. Ընդհանրականացման բանաձեւը⁹

«Վարուէ՛ միայն այնպիսի անձնական կանոնով (մաքսիմ), որով միաժամանակ կարենաս ցանկայ, որ այդ՝ ընդհանուր օրէնք դառնայ»:

⁹ Կանտի «ընդհանրականացման բանաձեւը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկին մէջ, էջ BA 52:

Այս հանրածանօթ ու ամենաշատ օգտագործուած հիմնական բանաձեւին համաձայն, մենք պէտք է վարուինք այնպիսի անձնական կանոններով (մաքսիմներով), որոնցմով կարենանք ցանկալ, որ անոնք ընդհանուր բարոյական օրէնքներ (Moral Law) դառնան: Այստեղ որոշ կարեւորութեամբ կը շեշտեմ՝ «ցանկալ կարենալ» բառակապակցութիւնը, որովհետեւ մենք կրնանք անձնական կանոն (մաքսիմ) մը ցանկալ միայն այն ատեն, երբ զայն, որպէս ընդհանուր օրէնք, առանց հակասութեան, կարելի ըլլայ մտածել եւ այս անձնական կանոնին (մաքսիմ) կամքը ինքնիրեն արգելք չհանդիսանայ:

Այս գաղափարը կարելի է գողութեան օրինակով աւելի յստակացնել. նիւթական վիճակս բարելաւելու համար եթէ դրամատուն մը կողոպտեմ, ինչպէ՞ս արժեւորելու է այս վարմունքս: Կանտ համաձայն չէ, որ ես աստուածաշնչեան տասը պատուիրաններէն ութերորդին («մի՛ գողնար») հետեւիմ, որովհետեւ դիմած կ'ըլլամ արտաքին հեղինակութեան մը: Կանտ կը թելադրէ, որ այս անբարոյական վարմունքին արժեւորումը ի՛մ բանականութենէն բխի, հետեւեալ գործընթացով կամ ձեւով. -

Ա) նախ պէտք է անձնական կանոն (մաքսիմ) մը կազմեմ, որ ինծի համար ի գօրու ըլլայ իմ ամբողջ կեանքի ընթացքին: Վերոյիշեալ օրինակին պարագային, իմ անձնական կանոնը հետեւեալ տարազը կրնայ ունենալ. - «ամէն անգամ, որ նիւթական վիճակս բարելաւել ուզեմ, դրամատուն մը կը կողոպտեմ»:

Բ) ապա պէտք է այս անձնական կանոնը (մաքսիմ) ընդհանրականացնել փորձեմ եւ որպէս ընդհանուր օրէնք ներկայացնեմ: Արդեօք կարելի՞ է երեւակայել նմանօրինակ օրէնք մը, երբեւիցէ, որեւէ տեղ: Արդեօք ես պիտի ուզե՞մ, որ դրամատան մէջ պահ դրուած իմ նիւթական խնայողութիւնը ուրիշներու կողմէ կողոպտուի: Անշուշտ որ յիշեալ երկու հարցերուն բանականութեան պատասխանը «ո՛չ» պիտի ըլլայ...:

2. Բնութեան օրէնքի բանաձեւը¹⁰

«Այնպէս վարուէ՛, իբր թէ վարմունքիդ անձնական կանոնը (մաքսիմ), կամքիդ միջոցով, ընդհանուր բնութեան օրէնք դառնայ»:

Կանտ, իր ընդհանրականացման բանաձեւէն անմիջապէս (քանի մը տող) ետք, կը յիշէ նմանօրինակ իր բնութեան օրէնքի բանաձեւը, որու քննարկումն ալ նմանակերպ է, նկատի ունենալով որ միայն մէկ անպայմանական հրամայական կայ:

Կանտի բանաձեւի այս երկրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղայ՝ բնութեան օրէնք հասկացողութիւնը: Կանտի համաձայն, փորձառու-

¹⁰ Կանտի «բնութեան օրէնքի բանաձեւը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագիտութեան») երկին մէջ, էջ BA 52:

կան-զգայական բնութիւնը նուազ կարեւորութիւն ունի, որովհետեւ ան ունի իր իւրայատուկ օրէնքները եւ ինքնավարութեան (ինքնօրինութեան, Autonomy) փոխարէն, այլօրինութիւնն (Heteronomy) է այստեղ իշխողը: Այս պատճառով հարկ է, որ զուտ կամքի երեւակայութիւնը գերզգայական բնութեան մը նախագիծը տրամադրէ, ուր օրէնքները կախեալ չըլլան փորձառական պայմաններէն եւ միայն զուտ բանականութեան պատկանին: Այլ խօսքով, հեղինակի դրութեան մէջ մտնելով, պէտք է բնութեան նոր օրինակարգ մը պատկերացնել, որ ինքնին անառարկելի ըլլայ, կարելիութիւն ունենայ վարուելակերպ ծրագրելու եւ անձնական կանոնները (մաքսիմները) բանականութեան յարմարցնելու: Կանտի համաձայն, թէեւ կարելի է անձնական կանոնի (մաքսիմ) մը «պարտաւորութեան համաձայն» ըլլալը անոր «բնութեան համաձայն» ըլլալէն եզրակացնել, սակայն կարելի չէ հաստատել անոր՝ «պարտաւորութենէն բխած» ըլլալը: Ասոր կողքին, սակայն, մարդկային միտքը բարոյական օրէնք մը պատկերացնելու համար, երբեք ստիպուած չէ բնութեան օրէնքին դիմել:

Կանտ, բնութեան օրէնքի բանաձեւը կը ներկայացնէ, որպէս օժանդակ բանաձեւ, աւելի յստակացնելու համար բարոյականութեան սկզբունքը եւ բարոյական օրէնքը, որ իր անպայմանական հրամայականն է:

Այնուհետեւ Կանտ կը յիշէ իր նշանաւոր ու պատկերաւոր չորս օրինակները, որոնք (այս աշխատասիրութեան մէջ) տեղադրուած են հինգ բանաձեւերէն ետք:

3. Մարդկութեան բանաձեւը¹¹

«Այնպէս վարուէ՛, որ դուն մարդկութիւնը, ինչ անձի եւ ուրիշ անձի համար, երբեւիցէ, որպէս նպատակ եւ երբեք լոկ որպէս միջոց օգտագործես»:

Կանտի բանաձեւի այս երրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղան՝ նպատակ եւ միջոց հասկացութիւնները: Կանտի համաձայն, բոլոր նիւթական նպատակները իրականացնելու համար պէտք ունինք միջոցներու. այս պատճառով անոնք (նիւթական նպատակները) կ'ենթարկուին՝ ենթադրական հրամայականին (hypothetical imperative) եւ չեն կրնար «ինքնին» (գերմ.՝ "an sich", անգլ.՝ "in itself") նպատակ ըլլալ: Յիշենք այս առնչութեամբ գնացքի ծանօթ օրինակը. – «գնացքիդ հասնելու համար, հարկ է որ հիմա ճամբայ ելլես». կամ՝ «Չութակ լաւ նուազելու համար, պէտք է օրական փորձ կատարես»:

Այնուհետեւ Կանտ կը հաստատէ, որ միայն մէ՛կ «ինքնին» նպատակ կայ, որ մարդն է: Միայն բանականութեան տէր մարդն է, որ ինքնանպատակ գոյութիւն ունի եւ երբեք որպէս՝ միջոց շահագործուելու է, թէ՛ մարդը ինքն իր նկատմամբ եւ թէ՛ ուրիշ մարդոց նկատմամբ: Կանտի համաձայն, քանի որ

¹¹ Կանտի «մարդկութեան բանաձեւը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագիտութեան») երկին մէջ, էջ BA 67:

մարդը ազատութիւն ունի, ուրեմն նաեւ արժանապատուութիւն ունի, որ երբեք թոյլ չի տար՝ որպէս միջոց իր անձի շահագործումը: Անշուշտ որ, մարդոց պարագային, կարելի չէ բոլորովին ձերբազատիլ զանոնք որպէս միջոց օգտագործելէ, սակայն երբ մարդ մը որպէս միջոց օգտագործեմ, պէտք է իմ անձնական կանոնը (մաքսիմ) մարդու արժանապատուութեան համապատասխանէ, առանց զայն նուաստացնելու: Արդէն բանաձեւին մէջ կը յիշուի՝ «երբեք լոկ որպէս միջոց օգտագործես» արտայայտութիւնը, ուր պէտք է նկատի ունենալ «լոկ» (միայն) եզրի գոյութիւնը:

4. Ինքնավարութեան Բանաձեւը¹²

«Այնպէս վարուէ՛, որ կամքը իր անձնական կանոնի (մաքսիմ) միջոցով, ինքզինք միաժամանակ որպէս ընդհանուր օրէնսդիր նկատել կարենայ»:

Կանտի բանաձեւի այս չորրորդ տարբերակին մէջ վճռական դեր կը խաղայ մարդկային կամքի ինքնավարութիւնը: Կանտի համաձայն, սա կը նշանակէ, որ իմ կամքը ինքնավար ըլլալու կարողութիւն ունի եւ ես կրնամ որոշել ու վարմունքի բազմաթիւ կարելիութիւններէն բարոյական ճիշդ վարմունքը ընտրել: Այլ խօսքով, իմ ինքնավար կամքը կը դառնայ ընդհանուր օրէնսդիր կամք մը եւ ես կը կամենամ ընել, ինչ որ պէտք է:

Ինքնավարութեան կամ ինքնօրինութեան (Autonomy, յուն.՝ nomos = օրէնք) հակառակն է՝ այլօրինութիւնը (Heteronomy), որ մեզ կ'առաջնորդէ դէպի ենթադրական հրամայական եւ ենթակայական նպատակադրում. այս պարագային ես պէտք է բան մը ընեմ, որովհետեւ այլ բան մը կը կամենամ. արդարեւ ընթացք մը, որ երբեք չի համապատասխաներ անպայմանական հրամայականին կամ բարոյական օրէնքին:

5. Նպատակներու իշխանութեան Բանաձեւը¹³

«Այնպէս վարուէ՛, որ դու անձնական կանոնի (մաքսիմ) միջոցով, երբեւիցէ օրէնսդիր մարմին դառնաս՝ նպատակներու ընդհանուր իշխանութեան մէջ»:

Կանտի բանաձեւի այս հինգերորդ ու վերջին տարբերակին մէջ եւս, վճռական դեր կը խաղայ մարդկային կամքի ինքնավարութիւնը, որու միջոցով նաեւ օրէնսդիր մարմին ըլլալու հանգամանքը: Կանտի համաձայն, սա կը նշանակէ, որ մարդը եւ իր մերձաւոր անհատները, նպատակներու ընդհանուր իշխանութեան մը մէջ ըլլան՝ թէ՛ որպէս օրէնսդիր մարմին եւ

¹² Գանտի «ինքնավարութեան բանաձեւը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկին մէջ, էջ BA 76:

¹³ Գանտի «նպատակներու իշխանութեան բանաձեւը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագանցութեան») երկին մէջ, էջ BA 79:

Թէ՛ որպէս քաղաքացի:

Կանտի համար, նպատակներու իշխանութիւնը բարոյական իտէալներու այն ընդհանուր ընկերութիւնն է, ուր բոլոր բանական էակները կ'ենթարկուին այն օրէնքին, որու շրջագծի մէջ մարդը ինքնիր հետ եւ իր մերձակորներուն հետ, երբեք լո՛կ որպէս միջոց, այլ որպէս նպատակ վարուելու է:

Իսկ մարդու կամքի ինքնավարութիւնը այս պարագային կը նշանակէ, որ մարդ իր ազատ կամքով կը դառնայ անդամ բարոյական ընկերութեան, ուր օրէնսդիր ըլլալու հանգամանքը կ'օգտագործէ՝ որպէս չափանիշ իր անձնական կանոններու (մաքսիմներու) ընտրութեան համար: Այլ խօսքով, երբ վարմունքի անձնական կանոնները (մաքսիմները) կ'ընտրուին բարոյական իտէալ ընկերութեան միաժամանակ օրէնսդիր անդամի մը կողմէ, այն ատեն այդ վարմունքը կը վայելէ բարոյական ճիշդ վարմունք ըլլալու յատկանիշը:

Վերոյիշեալ հինգ բանաձեւերէն ետք, այժմ կը ներկայացնեմ Կանտի չորս պատկերաւոր օրինակները, որոնք յիշուած են Կանտի երկրորդ, բնութեան օրէնքի բանաձեւէն ետք, զայն աւելի յստակացնելու համար: Այս օրինակները ունին տրամաբանական կառոյց, բաժնուած են՝ կատարեալ եւ անկատար պարտաւորութիւններու եւ իւրաքանչիւրի մասին կան երկուքական օրինակ, նախ «մենք՝ մեր հանդէպ» ապա «մենք՝ ուրիշներու հանդէպ»:

Պարտաւորութիւն	Մենք՝ մեր հանդէպ	Մենք՝ ուրիշներու հանդէպ
կատարեալ պարտաւորութիւն	անձնասպանութեան օրինակը	խոստումի օրինակը
անկատար պարտաւորութիւն	տաղանդի օրինակը	օգնութեան օրինակը

Կանտի համաձայն, կատարեալ պարտաւորութեան պարագային, անձնական կանոնի (մաքսիմ) առանց հակասութեան ընդհանրականացում մը մտածելի չէ (այսինքն՝ կարելի չէ պատկերացնել) եւ կամեցողութեան հակառակ է: Իսկ անկատար պարտաւորութեան պարագային, անձնական կանոնի (մաքսիմ) առանց հակասութեան ընդհանրականացում մը թէեւ մտածելի է (այսինքն՝ կարելի է պատկերացնել), սակայն կը մնայ կամեցողութեան հակառակ:

Ստորեւ տրուած չորս օրինակներով, աւելի կը յստականայ այս գաղափարը:

1. Անձնասպանութեան օրինակը¹⁴

Անձ մը, որ ծանր ու աղիտալի կեանք ունեցած է ու քաղմաթիւ դրժուարութիւններու մէջ է, կը մտածէ անձնասպան ըլլալ եւ ազատիլ այս անտանելի կեանքէն:

¹⁴ Կանտի «անձնասպանութեան օրինակը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագիտութեան») երկին մէջ, էջ BA 53:

Կանտ, իր այս առաջին օրինակին մէջ, եսասիրութեան (Egoism) սկզբունքով, նկատի կ'առնէ հետեւեալ անձնական կանոնը (մաքսիմ)․ «Եթէ կեանքս ծանր ու անտանելի ըլլայ, եսասիրութեան սկզբունքով ես կը դիմեմ անձնասպանութեան»։ Այստեղ պէտք է հարց տալ, որ եսասիրութեան սկզբունքը կրնա՞յ բնութեան օրէնք եւ անով՝ բարոյական օրէնք դառնալ, երբ մէկ կողմէ եսասիրութեամբ՝ կեանքը երկարելու, իսկ միւս կողմէն՝ կեանքը կրճատելու մասին կարելի է մտածել։ Անշուշտ հակասութիւն մըն է, երբ նոյն օրէնքը կ'օգտագործուի երկու հակադիր տեսակէտներու առնչութեամբ։

Այլ տեսանկիւնէ դիտուած, անձնասպանը ինքզինք կ'օգտագործէ, լոկ որպէս միջոց, որպէսզի ազատի իր ծանր ու անտանելի վիճակէն։ Երրորդ բանաձեւին մէջ սակայն, տեսանք, որ մարդը պարզ նիւթական միջոց մը չէ, այլ ինքնին նպատակ մը, ուրեմն կարելի չէ անձնասպանութեան դիմել։

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ անձնասպանութիւնը, մենք մեր հանդէպ ունեցած արարք մըն է, որու պարագային առանց հակասութեան ընդհանրականացում մը կարելի չէ պատկերացնել եւ միաժամանակ ան օրինական չէ (բնութեան օրէնքը նկատի ունենալով)։

2. Խոստումի օրինակը¹⁵

Այլ անձ մը, որ նիւթական դժուարութեան մէջ է, ստիպուած է պարտքի դրամ վերցնել, խոստանալով որոշ ժամանակ ետք վերադարձրնել գումարը, գիտնալով հանդերձ, որ ինք այդ գումարը երբեք պիտի չկարենայ վերադարձնել։

Կանտ, իր երկրորդ օրինակին մէջ, դարձեալ եսասիրութեան (Egoism) սկզբունքով, նկատի կ'առնէ հետեւեալ անձնական կանոնը (մաքսիմ)․ «Եթէ ես նիւթական դժուարութեան մէջ ըլլամ, պարտքի դրամ կը վերցնեմ ու կը խոստանամ որ գումարը պիտի վերադարձնեմ, գիտնալով հանդերձ, որ այդ գումարը երբեք պիտի չկարենամ վերադարձնել»։ Այստեղ դարձեալ պէտք է հարց տալ, որ այս անձնական կանոնը (մաքսիմ) կրնա՞յ ընդհանուր բնութեան օրէնք դառնալ եւ առանց որեւէ հակասութեան ընդհանրականացուի։ Այլ խօսքով, կարելի՞ է երբեւիցէ մարդկային ընկերութիւն մը պատկերացնել, ուր խոստումներու դրժումը կամ ստախօսութիւնը ընդհանուր օրէնք նկատուի։

Նաեւ այստեղ, այլ տեսանկիւնէ դիտուած, խոստումնադրուժ ստախօսը այլ անձ մը կ'օգտագործէ, լոկ որպէս միջոց, որպէսզի ազատի իր նիւթական ծանր վիճակէն։ Երրորդ բանաձեւին մէջ սակայն, տեսանք, որ մարդը պարզ

¹⁵ Գանտի «Խոստումի օրինակը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան քննադատութեան») երկին մէջ, էջ BA 54:

նիւթական միջոց մը չէ, այլ ինքնին նպատակ մը, ուրեմն բարոյապէս կարելի չէ ուրիշները շահագործել, անձնական վիճակը բարելաւելու համար:

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ ստախօսութիւնը կամ խոստմնադրուժ ըլլալը մեր կողմէ, ուրիշներու հանդէպ, բոլորովին անբարոյական արարքներ են եւ առանց հակասութեան երբեք կարելի չէ ընդհանրականացնել զանոնք: Անոնք նաեւ կամեցողութեան համառակ են:

3. Տաղանդի օրինակը¹⁶

Երրորդ անձ մը թէւ բնութեամբ տաղանդաւոր է, սակայն կը նախընտրէ իր տաղանդը չգարգացնել ու առանց տէնացան աշխատանքի միայն հանդիմանելու հետեւիլ:

Կանտ, իր երրորդ օրինակին մէջ, անձնական կանոնի (մաքսիմ) առանց հակասութեան ընդհանրականացում մը թէեւ մտածելի սակայն կամքի ու կամեցողութեան հակառակ կը նկատէ: Այլ խօսքով, թերեւս կարելի է պատկերացնել, որ շատեր իրենց ունեցած տաղանդի հանդէպ անփոյթ ու անուշադիր վերաբերմունք ունենան ու նախընտրեն դատարկապորտի զուարճալի ու հանգստաւէտ կեանք մը ապրիլ. ասիկա սակայն կարելի չէ, որպէս անձնական կանոն (մաքսիմ) ընդհանրացնել, որովհետեւ՝ կամքի ու կամեցողութեան հակառակ է. ասիկա նոյնիսկ լքումն է կամքին: Ով որ դատարկապորտի ուղիին հետեւի ան ընդհանրապէս հետաքրքրուած չէ իր անձնական զանազան կարելիութիւնները իրականացնելով. այսինքն՝ կամք մը, որ կամազրկութեան դատապարտուած է:

Այլ տեսանկիւնէ դիտուած, տաղանդի կատարելագործումը ինքնին մարդկային բնութեան նպատակին կը ծառայէ: Տաղանդի հանդէպ, որեւէ անտեսում կամ անփոյթ ու անուշադիր վերաբերմունք եթէ մարդու ինքնանպատակ գոյութիւնը չի խանգարեր, սակայն մեծապէս կը վնասէ անոր զարգացման ու յառաջդիմութեան: Մարդկութիւնը որքա՛ն պիտի վնասէր, եթէ գոյութիւն չունենային պատմութեան մէջ գոյութիւն ունեցող կամ ժամանակակից նշանաւոր ու տաղանդաւոր այն գիտնականները, արուեստագէտներն ու մտաւորականները, որոնց տաղանդը կամ տաղանդի պտուղները, այսօր, կը ճոխացնեն մեր կեանքը:

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ մարդկային բարի կամքը (ինչպէս տեսանք) կը յառաջանայ բանականութենէն. եւ միայն բանականութեամբ գործող իմ կամքով է, որ պիտի ջանամ զարգացնել իմ տաղանդը: Իսկ եթէ կամայականօրէն անտեսեմ իմ տաղանդը, այն ատեն ես դադրած կ'ըլլամ բանականութեան տէր էակ մը ըլլալէ:

¹⁶ Գանտի «տաղանդի օրինակը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագիտութեան») երկին մէջ, էջ BA 55:

4. Օգնութեան օրինակը¹⁷

Չորրորդ անձ մը, կը հանդիպի դժուարութեան մէջ գտնուող այլ անձի մը, որուն ինք կրնայ օգնել, սակայն կը զլանայ անոր իր օգնութիւնը:

Կանտ, իր չորրորդ եւ վերջին օրինակին մէջ, երբեք նկատի չունի փոխադարձ օգնութեան (իրերօգնութեան) սկզբունքը: Այլ խօսքով, երբ ես որպէս անձնական կանոն (մաքսիմ) ընդունիմ «դժուարութեան պարագային՝ ուրիշներուն կ'օգնեմ, որպէսզի անոնք ալ ինծի օգնեն» գաղափարը. այն ատեն ես յատուկ նպատակադրում մը կը հետապնդեմ, որ զիս տրամաբանականօրէն կ'առաջնորդէ դէպի՝ ենթադրական հրամայական (hypothetical imperative): Նոյնն է նաեւ նպատակադրումի պարագան, նախապէս յիշուած գնացքի կամ ջոկածի օրինակներուն: Այսուհանդերձ, օգնութեան կամ երերօգնութեան այս օրինակին մէջ վճռական մեծ դեր կը խաղայ՝ նպատակ հասկացութիւնը:

Հիմնականօրէն, մարդոց վարմունքը սերտօրէն առնչուած է նպատակին: Վարուիլ, ընդհանրապէս, կը նշանակէ՝ նպատակ մը հետապնդել: Նպատակի պարագային, մեծ կարեւորութիւն ունի նաեւ՝ նպատակի ընդհանրականացումը եւ անհրաժեշտութիւնը. իսկ փիլիսոփայութեան ոլորտի մէջ՝ նպատակին ի յառաջագունէ (a priori) ըմբռնելի ըլլալը: Այլ խօսքով, կարելի չէ հաստատել՝ ջոկածի նուազելու անհրաժեշտութիւնը եւ անոր մարդոց համար ընդհանրականացման կարեւորութիւնը, սակայն, համայն մարդկութեան համար անհրաժեշտ է հետապնդել նպատակ մը, ինչպէս՝ **իրերօգնութիւնը**, որ կենսական մեծ կարեւորութիւն ունի եւ միաժամանակ ան ատակ է՝ ընդհանրականացման:

Որպէս եզրակացութիւն կարելի է հաստատել, որ **իրերօգնութեան** կարիքը խարսխուած է մարդկային բնութեան մէջ եւ կարելի է զայն ի յառաջագունէ (a priori) ըմբռնել, ինչպէս «այրի» բառէն կարելի է ի յառաջագունէ ըմբռնել՝ «ամուսինը մահացած կին» իմաստը կամ «աշխատ» բառէն կարելի է ըմբռնել՝ «չիկակարմիր ձի» իմաստը:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՉԵԱԵԱՆ

Գերմանիա


(Շար. 5)

¹⁷ Կանտի «օգնութեան օրինակը» նշուած է իր "Grundlegung zur Metaphysik der Sitten" (1785, «Հիմունք՝ բարոյականութեան բնագիտութեան») երկին մէջ, էջ BA 56:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՎԵՀԱՓԱՌԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՐՔԸ

Ազգային նշանաւոր դէմքերը, եւ առհասարակ խոշոր անհատականութիւնները երկրի խարխախն են, ժամանակին դիմագիծ տուողները, հասարակութեան կերպար-պատկերը ձեւաւորողները: Նրանք ապրում են իրենց առօրեայ կեանքով, անում են իրենց վստահուած գործը, գլխովին նուիրում են իրենց պարտքին ու պարտականութեանը, եւ ժամանակն է, որ արժեւորում է նրանց կեանքն ու գործը:



Հրապարակի վրայ է մի կարեւոր գիրք, մի նշանակալից հրատարակութիւն: Հատորը խորագրուած է «Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. Հայրապետական 25-ամեայ գահակալութիւն (1995-2020). Արժեւորում եւ վկայութիւններ»: Գիրքը տպագրել է Անթիլիասը 2019 թուականին: Ինչպէս խորագիրն է ասում, մեծադիր եւ մեծածաւալ (642 էջ) հատորը ներկայացնում է Վեհափառ Հայրապետի 25-ամեայ գահակալութեան պատմութիւնը: Հատորը բազմակողմանիօրէն եւ մանրամասնաբար ներկայացնում է Վեհափառ Հայրապետի 25-ամեայ գործունէութիւնը:

Հատորը բազմահեղինակ է: Ի դէպ, շատ կարեւոր եւ նշանակալից է, որ Սփիւռքի եւ Հայաստանի մտաւորականութիւնը, գրքում իրենց խօսքը ասած Սփիւռքի եւ Հայաստանի հեղինակները միասնական են Վեհափառ Հայրապետի անձի եւ գործունէութեան հանդէպ ունեցած ակնածալից վերաբերմունքի մէջ: Վեհափառի գործունէութեան մասին իրենց յարգանքի ու մեծարանքի խօսքն են ասում, նախ, պետական մարդիկ: Հատորը բացուում է Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշէլ Աունի խօսքով: Յաջորդում են Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի,

վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի ջերմ ուղերձները:

Այնուհետեւ գնահատումի եւ արժեւորումի իր խօսքն է ասել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Յաջորդում է Վեհափառի համառօտ կենսագրութիւնը: Դա եկեղեցական ու ազգային գործիչի, պետական մտածողութիւն ունեցող անձի, հասարակական-քաղաքական նշանաւոր դէմքի կենսագրութիւն է: Պատմահայր Խորենացին ասում է՝ «Ինչ որ մարդու գործերն են, այն էլ նրա պատմութիւնն է»: Վեհափառ Հայրապետի կենսագրութիւնը փաստօրէն իր գործերի, իր եկեղեցական ու ազգային գործերի պատմութիւնն է:

Այնուհետեւ իրենց ջերմ խօսքերով միմեանց են յաջորդում կրօնական նշանաւոր դէմքեր, ճանաչուած գիտնականներ, հասարակական-քաղաքական եւ գրական-մշակութային կեանքի յայտնի գործիչներ... Նրանցից իւրաքանչիւրը ձգտել է տեսնել եւ ներկայացնել Արամ Առաջինի առաւել ամբողջական կերպարը, բացայայտել կրօնական եւ ազգային գործիչի նկարագիրի ու կերպարի առաջին հայեացքից անտեսանելի, չերեւացող ու չնկատուող իւրայատկութիւնները, ընդգծել Կաթողիկոսի գործունէութեան կարեւորագոյն կողմերը: Պէտք է ասեմ, որ մեծարանքի ու բարեբանումի արժանի խօսքերի կողքին հատորում առկայ են փաստերով լեցուն, վերլուծութիւններով յագեցած ընդարձակ հատուածներ, որոնք առաւել մօտ են գիտահետազոտական լուրջ հաշուետուութիւններին:

Հատորի նիւթերը ներկայացուած են բաժիններով, որոնց խորագրերը շատ խօսուն են եւ ընդգծում են Վեհափառի գործունէութեան կարեւոր մէկ կողմը:

Արդարացիօրէն գրքի նիւթերի առաջին բաժինը ներկայացնում է կրօնական եւ եկեղեցական նշանաւոր գործիչին («Հաւատքի առաքելութեան Հայրապետը»): Լիբանանի հայկական համայնքը ապրում էր երկրի միասնական կեանքով եւ, բնականաբար, անցել էր մեծ արհաւիրքների միջով, ունէր ընկերային բազմաթիւ խնդիրներ եւ դժուարութիւններ: Եւ, հասկանալի է, որ բոլոր այդ դժուարին ու կնճռոտ խնդիրները եղել են ազգային առաջնորդ Հայրապետի ուշադրութեան ու հսկողութեան ներքոյ («Ընկերային ծառայութեան առաքեալը»): Բայց համայնքի ընկերային կեանքից զատ կային ազգային մեծ խնդիրներ, որոնք պահանջում էին հետեւողական ու ծայրայեղօրէն լուրջ եւ պատասխանատու մօտեցում («Ազգային պահանջատիրութեան անգիջող Հայրապետը»): Քսաներորդ դարի մեծ մտածողներից մէկը՝ Թէոֆոր Ադորնօն ասում է, որ ներկայ ժամանակներում ազգերի ինքնութեան մեծագոյն յատկանիշը ազգային մշակոյթն է, ազգային գրականութիւնն ու արուեստը: Արդարացիօրէն հատորի յաջորդ բաժինը նուիրուած է Վեհափա-

ուի մշակութային գործունեությունը («Մշակութային արժեքներ վերակերտողը»): Եւ ի հարկէ, Սփիւռքի հայկական կեանքի մեծագոյն խնդիրը մնում է օտար երկնքի տակ, օտար իրականութեան մէջ, քաղաքական եւ ընկերային բարդ իրավիճակների մէջ հային հայ պահելը: Եւ Վեհափառի գործունեություն մէջ այս խնդիրը մեծ տեղ է զբաղեցրել («Հայակերտումի ու ազգակերտումի յանձնառու դեկավարը»): Սփիւռքի կեանքի կարեւորագոյն խնդիրներից մէկը մշտապէս եղել է Հայաստանի հետ կապի ու յարաբերութիւնների խնդիրը: 1991-ից յետոյ Հայաստանը յայտնուում է քաղաքական նոր իրադրութեան մէջ, ուստի եւ պահանջում էր նոր մօտեցում: Այդ նոր մօտեցումը իրագործում է Արամ Առաջինը («Հայաստան-Սփիւռք գործակցութեան ռազմավիրան»): Վեհափառ ուշադրութեան կեդրոնում միշտ եղել է երիտասարդութիւնը, որովհետեւ երիտասարդութիւնն է դառնալու Սփիւռքի ապագան («Երիտասարդութեան պաշտպանը»): Վեհափառ Հայրապետը նաեւ կառուցող է. համայնքի կրօնական կեանքը կարիք ունէր կառուցումների («Շինարար Կաթողիկոսը»):

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը միջազգային ճանաչում ունեցող կրօնական եւ եկեղեցական գործիչ է, հմուտ եւ խորագէտ աստուածաբան: Պատահական չէ, որ Վեհափառ Հայրապետի միջ-եկեղեցական իմաստաւոր գործունեությունը նուիրուած է հատորի երկու բաժինը («Միջ-եկեղեցական շարժումին առաջնորդը», «Միջ-կրօնական երկխօսութեան ջատագովը»): Սիրիա երկիրը եւ Սիրիոյ հայկական համայնքը, Բերիոյ թեմը տարիներ շարունակ յայտնուեցին շատ ծանր, ողբերգական իրավիճակի մէջ: Եւ Վեհափառ Հայրապետը եղել է հայկական համայնքի տաղանայների հիմնական դիմագրաւողը («Տաղանայները խոհեմութեամբ եւ քաջութեամբ դիմագրաւող Հայրապետը»): Նոր հազարամեակի շեմին, քսանմէկերորդ դարի սկզբին աշխարհը արդէն մեծապէս փոխուած էր, ուրիշ իրականութիւն էր ամբողջ աշխարհում: Այլեւս ուրիշ էր աշխարհի քաղաքական եւ ընկերային պատկերը: Անհրաժեշտ էր, որ Սփիւռքի հայկական կեանքում փոխուէր շատ բան, անհրաժեշտ էր նոր ճկունութիւն եւ հեռատեսութիւն («Սփիւռքի վերակազմակերպման յառաջատեսիլ Հայրապետը»):

Չմոռանանք, որ Վեհափառ Հայրապետը այս բոլորի հետ եւ ամէնից առաջ բարձր մտաւորական է, գրող, գրաւոր խօսքի հմուտ վարպետ: Իր մտաւորականութեան բարձր հանգամանքն է, որ արտայայտուել է իր գործունեությունից բոլոր ասպարէզներում («Մտաւորական Հայրապետը»):

Այնուհետեւ գալիս է «Վկայութիւններ» բաժինը: Այստեղ իրենց իմաստալից խօսքն են ասում հասարակական եւ մշակութային, կրօնական եւ եկեղեցական յայտնի գործիչներ, եւ ոչ միայն հայ, այլեւ օտարազգի:

Հատորի վերջին բաժինը ներկայացնում է Արամ Առաջին կաթողիկոսի

այցելութիւնները, ինչպէս նաեւ հանդիպումների եւ դասախօսութիւնների ժամանակագրական ընդարձակ ցանկը:

Ինձ համար այս հատորը երկու կարեւոր արժանիք ունի:

Առաջին. մէկ անձի գործունէութեան մէջ արտացոլում եւ յստակօրէն երեւում է Մեծի Տանն Կիլիկիոյ եկեղեցու ողջ գործունէութիւնը՝ իր թեմերի հետ միասնական ամբողջութեան մէջ:

Երկրորդ արժանիքը Լիբանանի հայկական կեանքի արտացոլումն է Վեհափառ Հայրապետի գործունէութեան մէջ: Այդ կեանքի ներքին միասնականութիւնը, դա պարզ երեւում է, – պայմանաւորուած է Վեհափառ Հայրապետի գործունէութեամբ:

Այս նշանակալից հատորը, որ, ինչպէս վերեւում ասացի, խորին յարգանք եւ պատկառանք է յարուցում, – մէկ անգամ եւս հաստատում է այն ճշմարտութիւնը, որ ուժեղ կամային անհատը, խոշոր անհատականութիւնը, բացառիկ տաղանդ եւ արժանիքներ ունեցող անհատը միշտ էլ մեծ դեր ունի ինչպէս ազգի եւ ժողովուրդի կեանքում, այնպէս էլ պատմութեան մէջ:

ԵՐՈՒԱՆԴ՝ ՏԷՐ–ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՑԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՅԱՅՏՆԵՑ ԱՆԳԼԻՈՅ ԷԼԻԶԱՊԵԹ Բ. ԹԱԳՈՒՅԻՆ
ՍԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԵՒ ՈՂՋՈՒՆԵՑ
ՉԱՐԼՉ Գ.Ի ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԻ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ**

Երկուշաբթի, 19 Սեպտեմբերին, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահե Արք. Փանոսեան հանդիպում ունեցավ Լիբանանի մօտ Անգլիոյ դեսպան Յէյմըշ Գաուրլի հետ: Այս առիթով, առաջնորդ սրբազանը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Լիբանանի հայութեան անունով ցաւակցութիւն յայտնեց դեսպանին՝ Էլիզապեթ Բ. թագուհիին մահուան առիթով եւ ողջունեց Չարլզ Գ. թագաւորին թագաւորական պաշտօնի ստանձնումը, ինչպէս նաեւ դեսպանին յանձնեց Նորին Ս. Օծութեան յղած նամակը:



Իր նամակին մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով Էլիզապեթ Բ. թագուհիին գահակալութեան, յիշեց, թէ ան յատկանշական իրագործումներով լեցուն նոր էջ մը բացաւ Անգլիոյ պատմութեան մէջ եւ իր նախաձեռնութիւններով մեծապէս սիրելի դարձաւ իր ժողովուրդին: Նորին Ս. Օծութիւնը ողջունելով թագուհիին աւագ գաւակին՝ Չարլզ Գ.ի թագաւորական պաշտօնի ստանձնումը, անոր մաղթեց յաջողութիւն, յատկապէս նորանոր մարտահրաւերներով ու տագնապներով լեցուն ներկայ ժամանակներուն մէջ:

Հ Ա Յ Դ Ա Տ

**ՀԱՄԱՍՓԻՌՔԵԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Չորեքշաբթի, 14 Սեպտեմբերի գիշերը, նախաձեռնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական նիստ, որուն մասնակցեցան համասփիլոքեան-համահայկական գործունէութիւն ունեցող եկեղեցական, ազգային, կուսակցական եւ միութենական կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Նիստին միակ օրակարգն էր Հայաստանի Հանրապետութեան դէմ Ազրպէյճանի սանձազերծած յարձակումին պատճառով ստեղծուած կացութեան քննարկումը եւ Միլոնքի մէջ գործող հայկական կազմակերպութիւններու աշխատանքներուն ուղենիշներ ճշդելը:

Խորհրդակցական հանդիպման բացման նիստին, կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի վարիչ՝ Հոգչ. Տ. Յովակիմ Վրդ. Բանձարձեան ընթերցեց Վեհափառ Հայրապետին հրապարակած կոչը՝ Հայաստանի դէմ Ազրպէյճանի սանձազերծած յարձակման առիթով:

Նորին Ս. Օծութեան նախաձեռնութիւնը ողջունեցին՝ հայ կաթողիկէ համայնքապետ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը եւ աւետարանական համայնքի ներկայացուցիչ վերապատուելին, երեք կուսակցութիւններու եւ միութիւններու համասփիլոքեան կառույցներու ներկայացուցիչները՝ շեշտելով նման ձեւաչափով խորհրդակցութիւններու անհրաժեշտութիւնը: Անոնք ընդգծեցին նման պայմաններու մէջ հարցերը միասնականօրէն քննարկելու եւ համակարգուած աշխատելու կարեւորութիւնը:

Նիստի ընթացքին ներկայացուեցան զեկուցումներ ռմբակոծուող տարածքներուն, թշնամիին կողմէ թիրախ դարձած աշխարհագրական գօտիին, հայոց բանակի դիմադրութեան, միջազգային արձագանգումին եւ ռազմական գործողութիւններով Ազրպէյճանի հետապնդած նպատակներուն մասին:

Քննարկելէ ետք ստեղծուած իրավիճակին պատերազմական, քաղաքական եւ դիւանագիտական ուղղութիւնները, նիստը հաստատեց. –

Ա) Հայաստանի Հանրապետութեան տարածքներուն դէմ Ազրպէյճանի նախաձեռնած լայնածաւալ յարձակումը մէկ օղակն է Պաքուի յարձակողապաշտութեան: Ազրպէյճանը այս ձեւով պատերազմը Արցախեան տարածքներէն կը տեղափոխէ դէպի Հայաստանեան տարածքներ՝ խախտելով միջազ-



գային օրէնքներն ու Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը:

Բ) Ձեռնարկելով զինուորական գործողութիւններու, Պաքուն կը մերժէ խաղաղ բանակցութիւններով հարցերը լուծելու ընտրանքը եւ կը տապալէ բանակցային գործընթացը:

Գ) Այս պայմաններուն մէջ մեզի կը մնայ ձեռնարկել համաժողովրդային պայքարի՝ ընդդէմ ազրպէյճանական յարձակումներուն: Համաժողովրդային պայքարը պիտի ներառնէ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններն ու Սփիւռքը:

Դ) Մեր հայրենիքի դիմագրաւած այս վտանգաւոր իրադարձութիւններուն դիմաց խիստ հրամայական կը դառնայ համազգային միասնականութիւնը: Մեր բոլոր՝ եկեղեցական, ազգային, կուսակցական եւ միութենական կառույցները իրենց առաջնահերթ օրակարգին պէտք է վերածեն մեր հայրենիքի տարածքային ամբողջականութեան պահպանումն ու մեր սահմաններուն անսասանելիութիւնը:

Ե) Ամբողջական զօրակցութիւն յայտնել թշնամիին ներթափանցումներուն դէմ մաքառող հայ բանակին եւ քննել գործնապէս հայկական զինեալ ոյժերուն սատար կանգնելու հնարաւորութիւնները:

Զ) Մեր միասնական ու համակարգուած աշխատանքը, անկոտրում կամքը եւ հայկական աշխարհի մէջ ծաւալելիք համազգային դիմադրութիւնը կրնայ դէմ դնել թշնամիին եւ ձախողցնել մեր հայրենիքին սպառնացող անոր ծրագիրները:

Է) Մեր աշխարհատարած կառույցները ցուցական, քաղաքական, քարոզչական եւ դիւանագիտական ուղղութիւններով պարտին լծուիլ համազգային եւ համաժողովրդային դիմադրութեան՝ փրկելու համար մեր հայրենիքը:

Ը) Վեհափառ Հայրապետին թելադրանքներէն մղուած, կազմել համասփիւռքեան-համահայկական կառույցներու ներկայացուցիչները համախմբող միացեալ խորհուրդ՝ հակաճգնաժամային ծրագիրներ մշակելու եւ միասնական համագգային աշխատանքներ իրականացնելու համար:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԶՐՊԷՅՅԱՆԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Այո՛, հայոց բանակին կողմէն համահայկական ու համաժողովրդային դիմադրութիւն ցեղապաշտ, արիւնարբու ու յարձակողապաշտ Ազրպայէյնանի դէմ: Փաստօրէն այլ բանապարհ չկայ՝

Երբ 4-օրեայ ու 44-օրեայ պատերազմներով ու ապա շարունակուող յարձակումներով Ազրպայէյնան կը փորձէ ինքնիշխան ու խաղաղ ապրելու մեր ժողովուրդին իրաւունքը խլել:

Երբ անտեսելով միջազգային օրէնքը, թէ՛ պատերազմի եւ թէ՛ զինադադարի շրջանին, կը փորձէ դիմել անմարդկային ու անարգ միջոցներու:

Երբ արհամարհելով քաղաքական բանակցութիւնները, կը փորձէ գէնքի ոյժով ինքզինք պարտադրել:

Երբ իր անպատասխանատու մօտեցումով, յարձակողապաշտ ոգով եւ բիրտ միջոցներով կը փորձէ իր տեսակէտները պարտադրել նոյնիսկ միջազգային համայնքին...:

Ո՛չ, կարելի չէ ընդունիլ անմեղ գոհերով ու պատերազմական գերիներով հպարտացող ներկայ ժամանակներու ցեղասպանին շարունակուող ոնիրը:

Ո՛չ, կարելի չէ ընդունիլ Հայաստանին հողային ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը բիրտ ոյժի գործածութեամբ վտանգող Ազրպայէյնանի նկրտումները:

Ո՛չ, կարելի չէ ոչ-քաղաքակիրթ միջոցներով մեր ժողովուրդի արժանապատուութիւնը վիրաւորող պետութեան մը անպատասխանատու վերաբերումը:

Արդ, Հայաստանի հանրապետութեան հողային ամբողջականութիւնը ու գերիշխանութիւնը վտանգող ճակատագրական այս կացութեան դիմաց՝

Անհրաժեշտ է դուռը թակել բոլոր բարեկամ եւ ոչ-բարեկամ երկիրներուն, մօտաւոր եւ հեռաւոր դեկավարներուն, շրջանային թէ՛ միջազգային կազմակերպութիւններուն:

Անհրաժեշտ է իրաւական միջոցներով անպատժելիութեան բողբ վար առնել Ազրպայէյնանի վրայէն:

Անհրաժեշտ է հայոց բանակի կողմից համահայկական ու համա-
 ժողովրդային դիմադրութեան զանգը հնչեցնել: Սա մեր ժողովուրդին
 արդար իրաւունքն է: Իր գոյութիւնը, անկախութիւնը, անվտանգութիւնը
 պահելու կոչուած ժողովուրդի մը հաւաքական դիմադրութիւնը մարդ-
 կային իրաւունքներուն անբաժան մասը կը կազմէ:

Ազրպէյճանը պէտք է իմանայ, որ Հայաստանի ու Արցախի կողմից իր
 դիմաց կը գտնուի նաե՛ւ Սփիւռքը, մեր ո՛ղջ ժողովուրդը՝ իր ամբողջ
 կարողականութեամբ. հետեւաբար, ան չի կրնար մեր ժողովուրդին հա-
 ւաքական կամքը ընկնել:

Ազրպէյճանը պէտք է իմանայ, որ մեր ժողովուրդի հին ասացուած-
 քին համաձայն «որ ո՛չ լուիցէ բանիւ, լուիցէ գանիւ» (ան որ խօսնով չի
 հասկնար, գաւազանով միայն կը հասկնայ):

Փաստօրէն ներկայ քաղաքակիրթ աշխարհին մէջ Ազրպէյճանը խօսքի
 լեզուէն չ՛ուզեր հասկնալ: Հետեւաբար, անոր հետ հարկ է խօսիլ գաւա-
 զանի լեզուով՝ դիմելով համաժողովրդային դիմադրութեան բոլոր մի-
 ջոցներով, բոլոր մարզերէն ներս ու բոլոր մակարդակներու վրայ:

Հարկ է դիմել համահայկական դիմադրութեան ամբապնդելով մեր
 ներքին միասնականութիւնը՝ Հայաստան-Արցախ-Սփիւռք դեկավարներու
 շուտափոյթ ու միատեղ հանդիպումով եւ մեր ողջ ազգին մարդուծին ու
 ներուծին համախմբումով:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՒ
 ԵՒՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԻԱՑԵԱԼ ԿՈԶ
 ՈՒՂՂԵՑԻՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ԱԶԵՐԻ ԲԱՆԱԿԻՆ
 ԿՈՂՄԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ
 ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ

*Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպու-
 թեան (Ե.Ա.Հ.Կ.) ուղղած իրենց միացեալ նամակին մէջ, Եկեղեցիներու Հա-
 մաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) եւ Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդի
 (Ե.Ե.Խ.) ընդհանուր քարտուղարները, իրենց խորհուրդներու անդամ եկե-
 ղեցիներու անունով կոչ ուղղեցին՝ միջամտելու ազերի բանակին կողմէ Հա-
 յաստանի Հանրապետութեան դէմ կատարուած յարձակումը անմիջապէս
 կասեցնելու, զինադադար հաստատելու եւ շրջանէն ներս արդար ու մնայուն
 խաղաղութիւն հաստատելու: Անոնք յիշեցին, թէ շաբաթ մը առաջ Գերման-
 իոյ մէջ գումարուած Ե.Հ.Խ.-ի 11-րդ համաժողովը անդրադառնալով Արցա-
 խի հարցին՝ կոչ ուղղած էր խաղաղ միջոցներով ու քաղաքական երկխօսու-*

Թեամբ արդար լուծում մը տալու՝ Ե.Ա.Հ.Կ.-ի Մինսքի խմբակի կողմէ կատարուած նախաձեռնութեան ծիրէն ներս:

Վերոյիշեալ միացեալ նամակը նաեւ անդրադարձաւ, թէ յստակ տեղեկութիւններու ու վերլուծումներու համաձայն Ազրպէյճան, նկատի ունենալով միջազգային համայնքի ուշադրութեան կեդրոնացումը Ուքրանիոյ պատերազմին վրայ է եւ օգտագործելով ներկայ աշխարհաքաղաքական պայմանները, փորձեց իր պայմանները պարտադրել Հայաստանի վրայ՝ զինուորական միջոցներով:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ ԱԶԵՐԻ ԲԱՆԱԿԻՆ ԿԱՏԱՐԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, 18 Սեպտեմբերին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագի աւարտին կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ Հայաստանի դէմ Ազրպէյճանի շղթայազերծած յարձակումներուն հետեւանքով հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած եւ իրենց կեանքը զոհաբերած հայոց բանակի քաջարի զինուորներու հոգիներուն խաղաղութեան համար:

Հոգեհանգստեան արարողութեան ներկայ էին՝ Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեան, ընկերակցութեամբ դեսպանատան անձնակազմին:



Ինչպէս ծանօթ է, ազերի բանակին յարձակումներէն անմիջապէս ետք, Նորին Ս. Օծութիւնը իր դիմատետրի էջին մէջ միասնականութեան եւ համաժողովրդային ու համահայկական դիմադրութեան կոչ ուղղեց՝ Ազրպէյճանի դէմ: Յաջորդ օրը, Վեհափառ Հայրապետին հրաւերով, Անթիլիասի Մայրավանքին մէջ, տեղի ունեցաւ համասփիւղքեան կառոյցներու ներկայացուցչական հանդիպում: Ապա, Վեհափառ Հայրապետը թելադրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերու եկեղեցիներէն ներս հոգեհանգիստ կատարել՝ նահատակ հայորդիներու հոգիներու խաղաղութեան եւ աղօթք՝ վիրաւոր հայորդիներու շուտափոյթ ապաքինման համար:

Ս. Պատարագէն ետք, Հայրապետը պատասխանելով Cilicia TV-ի հարցումներուն, ըսաւ. – «Հոգեհանգիստ՝ նահատակուած զինուորներուն, աղօթք՝ վիրաւորներուն շուտափոյթ ապաքինման եւ դատապարտութիւն՝ Ազրպէյճանի բարբարոսային յարձակումին Հայաստանի Հանրապետութեան եւ իր խաղաղ բնակիչներուն դէմ, բնականաբար իւրաքանչիւր հայուն ազգային պարտաւորութիւնն է: Մեր ազգին համար առաջնահերթն սրբազան պարտաւորութիւնն է մեր միասնականութեան ամրապնդումը, ինչպէս նաեւ հայոց բնակիչ հոգօրացումը՝ մէկդի դնելով ներքին տարակարծութիւնները: Մենք չենք կրնար այլեւս ուրիշներու շահերուն ենթակայ եւ աշխարհաբախական պայմաններուն անճանատու դառնալ: Քաղաքական երկխօսութիւնը, նկունութիւնը եւ իրապաշտութիւնը պէտք է մեզ առաջնորդեն վտանգելու Հայաստանի հողային ամբողջականութիւնը, անվտանգութիւնը եւ անկախութիւնը: Սա մեր ազգին ու հայրենիքին համար կարմիր գիծ է»:



ՏՕՆԱԿԱՆ

**ՎԵՐԱՑՄԱՆ Ս. ԽԱԶԻ ՏՕՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ԵՒ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՉ**

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն 14 Սեպտեմբերի մերձակայ Կիրակին կը նշուի Վերացման Ս. Խաչի տօնը: Տաղաւար տօներուն վերջինը հանդիսացող Վերացման Ս. Խաչի տօնը խաչին նուիրուած ամենաիմաստալից ու նշանակալից տօներէն մէկն է: Պատմական իրողութիւնները կը յայտնեն, թէ Վերացման Ս. Խաչի տօնին սկզբնաւորութիւնը կը հասնի մինչեւ քրիստոնէութեան առաջին դար, երբ Յակոբոս Տեառնեղբայր Յիսուս Քրիստոսի խաչափայտին նմանութեան քառաթեւ խաչ մը կը բարձրացնէ Գողգոթա լեռան վրայ: Հուսկ, Խաչին ու Խաչեալին նկատմամբ հաւատացեալներուն ու եկեղեցւոյ տածած անհուն սէրն ու յարգանքը պատճառ կը դառնան, որ Տեառնեղբօր խաչ բարձրացնելը նուիրագործուի, յիշատակուի եւ մեծ շուքով տօնախմբուի: Առ այդ, Վերացման Ս. Խաչի տօնը կը սահմանուի 335 թուականին: Յետագային, այս տօնին կը կապակցուի 7-րդ դարուն տեղի ունեցած խաչի զերեւարման եւ ազատագրման դէպքը:

Հայ Եկեղեցին, Խաչի տօնին, ոչ միայն կը զարդարուի երկնաբոյր ռեհաններով, այլեւ իր պաշտամունքը կը զարդարէ ու կը ճոխացնէ անդաստան կատարելով, յատուկ շարականներով ու աղօթքներով:

Այս բոլորին հետեւելով, Կիրակի, 11 Սեպտեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի համանուն մատրան մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ եւ կատարուեցան՝ յաւուր պատշաճի հոգեւոր խորհրդածութիւններ: Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին, Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ Աշրգեան խաչին նշանակութիւնը ընդհանուր գիծերով ներկայացնելէ ետք ընդգծեց, թէ «Խաչը կամուրջն է մարդ ու Աստուած եւ մարդ ու մարդ սիրոյ յարաբերութեան: Խաչը կատարելագործումն է այն բոլոր արժեքներուն, զորս օրէնքն ու օրինապաշտութիւնը, բարոյականութիւնն ու մարդկային ջանքերը չկարողացան իրագործել: Հետեւաբար, իւրաքանչիւր հաւատացեալ այս

մօտեցումով պետք է նայի խաչին, ապրի խաչը եւ ընթանայ խաչի քանապարհէն»։ *Իսկ Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան նախ ներկայացուց տօնին դրուագը, ապա յայտնեց, թէ «Խաչը գորութիւնն է մարդ անհատին։ Մեր կեանքի ընթացքին մեր դիմաց բացուած քանապարհներուն ընդմէջէն պետք է մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի նման, ընտրենք խաչի քանապարհը եւ քալենք Գողգոթային խորհուրդով։ Կեանքը իր դժուարութիւններով եւ մոլորեցուցիչ երեւոյթներով կը փորձէ գրաւել մեր ուշադրութիւնը, սակայն հաւատարիմ հաւատացեալը իր հայեացքը միշտ կը սեւեռէ Խաչի խորհուրդին ու Խաչեալի օրինակին»։*

Ս. Եւ Անմահ Պատարագի ավարտին, Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդառաջելով Cilicia TV-ի փափաքին, Ս. Խաչի տօնին խորհուրդն ու պատգամը բովանդակող հայրական իր խօսքը փոխանցեց՝ ըսելով. «Խաչը սոսկ քրիստոնէական կրօնքը բնորոշող նշան չէ, այլ՝ քրիստոնէական կեանքը յատկանշող խորհուրդ, որ իր մէջ կը պարփակէ Աստուծոյ Որդւոյն աշխարհ բերած եւ իր կեանքով քարգմանած արժէքները։ Խաչը սիրոյ, հաւատարմութեան ու նուիրումի քանապարհ է. հարկ է քալել այս ճամբէն։ Խաչը կեանքի որակ է, ուր կը ճառագայթեն Աստուածաշունչի ուսուցումները ու ճշմարտութիւնները. հարկ է ապրիլ այս կեանքը։ Խաչը մեր եկեղեցւոյ շարականին բառերով հօր գէնք է ու ամուր վահան. հարկ է այս գէնքով պայքարիլ ու վահանով պաշտպանուիլ մեզ շրջապատող տեսանելի ու անտեսանելի թշնամիներէն»։



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետության անկախության տօնին առիթով, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Սրբոց Նահատակաց բացօթեայ խորանին առջեւ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ միաբան հայրերու ու Դպրեվանքի աշակերտութեան, կատարուեցաւ Հանրապետական Մաղթանք: Արարողութեան ներկայ էին՝ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեան, ընկերակցութեամբ դեսպանատան անձնակազմին, ինչպէս նաեւ հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

Արարողութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետին ձեռամբ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետության դրօշի օրհնութիւն, որուն աւարտին Նորին Ս. Օծովութիւնը իր աղօթքը բարձրացուց առ Աստուած Հայրենիքին անսասանութեան ու անվտանգութեան, ինչպէս նաեւ հայոց բանակին հզօրացման համար: «Օրհնէ, ո՛վ Տէր, մեր Հայրենի երկիրը: ...Դարերու ընթացքին անողոք քշնամին աւերակի վերածեց գայն, բայց այժմ, Քու ողորմութեամբք եւ շնորհքի առատութեամբք առաւել ծաղկեցուր Հայաստան աշխարհը: ...Ժողովո՛ւրդ հայոց, Հայկի՛ որդիներ եւ մեր Ս. Եկեղեցւոյ զաւակներ, առէ՛ք ձեր հաւատքի զէնքերը, ձեր գլխուն դրէ՛ք յայսի թագը եւ մեր Հայրենիքին ու իրարու հանդէպ ամբողջական սիրով առաջ երթանք՝ միա-



բերան երգելով.– Մեր Հայրենիք, ազատ անկախ, որ ապրել է դարե դար, իւր որդիքը արդ կանչում է ազատ անկախ Հայաստան»:

Յիշենք, որ օրեր առաջ Վեհափառ Հայրապետը 21 Սեպտեմբերը յայտարարած էր «Աղօթքի Օր» եւ Հայրական կոչ ուղղած էր մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն աղօթելու մեր Հայրենիքին եւ իրենց արեան գնով զայն պաշտպանող հայկական բանակի քաջարի զինուորներուն համար: Ստորեւ նորին Ս. Օծութեան հայրական կոչը.-

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան օրը, հեռու ամէն տեսակ տօնախմբութիւններէ ու ցուցական երեւոյթներէ, իւրաքանչիւր հայու համար հարկ է դառնայ ԱՂՕԹՔԻ ՕՐ:

Արդ, եկէք, սիրելի հայորդիներ, անհատաբար թէ հաւաքաբար, իւրաքանչիւրս իր վայրին մէջ եւ իր եղանակով աղօթենք՝

Աղօթենք, մեր զոհուած նահատակ զինուորներուն եւ ազգակիցներուն հոգիներու խաղաղութեան համար:

Աղօթենք, վիրաւորներու շուտափոյթ ապաքինման համար:

Աղօթենք, Հայաստանի եւ Արցախի ժողովուրդին անվտանգութեան պահպանման համար:

Աղօթենք, Հայաստանի ու Արցախի գերիշխանութեան եւ հողային ամբողջականութեան ամրացման համար:

Աղօթենք, հայոց աշխարհի պաշտպանութեան լծուած հայոց բանակին հօրութեան համար:

Աղօթենք, հայ ժողովուրդի միասնականութեան ամրապնդման համար:

Հաւատքով զսպանակուած ու յոյսով շողախոռած աղօթքի ճամբով Աստուած ներկայութիւն կը դառնայ մեր կեանքին մէջ, մենք Աստուծոյ հետ կ'ըլլանք եւ Աստուած՝ մեզի հետ: Եւ երբ Աստուած մեզի հետ է, Դաւիթ մարգարէի խօսքով՝ «Ոչինչ կրնայ զիս սասանեցնել» (Սղ 16.8) եւ Պօղոս առաքեալին հաստատումով՝ «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռ 8.31):

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՍԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ 11-ՐԴ ՀԱՍԱԺՈՂՈՎԻՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ համաժողովը կայացաւ 31 Օգոստոսէն մինչեւ 8 Սեպտեմբերին, Գերմանիոյ Քարլսրուքաղաքին մէջ, մասնակցութեամբ Խորհուրդի անդամ աւելի քան 350 եկեղեցիներու շուրջ 4000 պատուիրակներու: Համաժողովը կը կրէր «Քրիստոսի Սէրը Աշխարհը Կը Մղէ Հաշտութեան Եւ Միասնութեան» խորագիրը: Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութիւնը համաժողովին իր գործօն մասնակցութիւնը բերաւ 12 պատուիրակներով.– Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան, Գերշ. Տ. Մասիս Եպս. Զօպուեան, Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան, փրոֆ. Թենի Փիրի-Սիմոնեան, Սեդա Խտրչեան, Դոկտ. Նորա Գապազեան-Պայրազտարեան, Վանա Կիտցինեան, Թամար Գանարեան եւ Արազ Գոճայեան: Յիշենք, որ Գարլա Խիժոյեան (Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան



նախկին անդամ) կը շարունակէ վարել Ե.Հ.Խ.-ին մէջ Միջին Արեւելքի բաժինի պատասխանատուի իր պաշտօնը:

Ե.Հ.Խ.-ի Համաժողովը գերագոյն ժողովն է Խորհուրդին, որ իւրաքանչիւր 8 տարին անգամ մը կը գումարէ իր նիստերը: Վերջին Համաժողովը տեղի ունեցաւ 2013 թուականին, Պոսանի մէջ, Հարաւային Քորէա, եւ թագաժառնի Համաճարակին պատճառով 11-րդ Համաժողովը տարուան մը ուշացումով գումարուեցաւ այս տարի, Գերմանիոյ Եկեղեցիներու միասնական հրակէրով:

Մասնակիցները, պատգամաւորները, ներկայացուցիչները, երիտասարդները, ուսանողները, հիւրերը եւ դիտորդները Համաժողովին իրենց մասնակցութիւնը բերին զանազան լիակատար նիստերու, միջ-եկեղեցական գրոյցներու, պաշտամունքներու, վարժանիստերու եւ դաւանական ու տարածաշրջանային ժողովներու: Համաժողովի ընթացքին արծարծուեցաւ ու վաւերացուեցաւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան մանտաթը, ինչպէս նաեւ ընտրուեցաւ նոր Կեդրոնական Վարչութիւնը:

Համաժողովի լիակատար նիստերու ընթացքին թէ՛ յանձնախումբերու ժողովներուն մէջ մեր Ս. Աթոռին պատուիրակութիւնը պարզեց Հայ Եկեղեցւոյ ու ազգին արդար պահանջները: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատուիրակութեան անդամները մաս կազմեցին հետեւեալ յանձնախումբերուն.– Հանրային Հարցերու (դոկտ. Ն. Գապագեան-Պայրազտարեան, դիւանի անդամ), Թեկնածութեան (Թ. Գանարեան), Ծրագիրի Ուղեցոյցի (փրոֆ. Թ. Փիրրի-Սիմոնեան), Տնտեսութեան (Ս. Խտըշեան) եւ Պատգամի (հայր Հրանդ): Նշենք, որ հայր Հրանդ կրօնքի եւ հաւատքի ազատութեան վերաբերեալ միջ-եկեղեցական նիստին ատենապետութիւնը վարեց. նիստին կողմէ յառաջացած տեղեկագիրը Ե.Հ.Խ.-ի յառաջիկայ ութ տարուան ուղեցոյցին մաս պիտի կազմէ:

Կարեւորութեան հարկ է նշել, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, որ երկու յաջորդական ընտրաշրջանի համար ատենապետած է Ե.Հ.Խ.-ի Կեդրոնական ու Գործադիր Վարչութիւնները, միաձայնութեամբ ընտրուեցաւ Կեդրոնական Վարչութեան նախագահներէն մէկը՝ ներկայացնելով Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները եւ Միջին Արեւելքը:

Աւելին, Նարեկ Արք. Ալեքմէզեան եւ Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան ընտրուեցան Ե.Հ.Խ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ:


Յատկանշական է, որ մեր պատուիրակութեան անդամներէն եւ Հանրային Հարցերու Յանձնախումբի դիւանի անդամ՝ դոկտ. Գապագեան-Պայրազտարեանի ջանքերով եւ խորհրդակցաբար Վեհափառ Հայրապետին, Համաժողովը որդեգրեց Արցախի հարցին վերաբերեալ բանաձեւ: Բանաձեւին մէջ, որ արդէն իսկ հրապարակուեցաւ, Համաժողովը բարձրացուց հայ ռազմագերի-

ներու վերադարձի հարցը, հայկական կրօնական ու մշակութային վայրերու եւ կոթողներու աւերման ու բնաջնջման խնդիրը, կոչ ուղղեց ԵՈՒՆԵՍԿՕ-ին եւ միջազգային ընտանիքին պատշաճ միջոցներ որդեգրելու պաշտպանելու եւ պահպանելու համար զանոնք, ինչպէս նաեւ՝ Ե.Ա.Հ.Կ.-ի Մ իսնքի խմբակին, որպէսզի յանձնառու ըլլայ քայլեր առնելու Արցախի հակամարտութեան արդար եւ խաղաղ լուծման:

**ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
11-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ
ԱՆԴՐԱՒԱՐՁԱԻ ԱՐՑԱԽԻ ՏԱԳՆԱՊԻՆ**

Գերմանիոյ Քարլսրու քաղաքին մէջ գումարուած Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ համաժողովը, միջազգային տազնապներու մասին իր կատարած հրապարակային յայտարարութիւններու շրջագծէն ներս, յատուկ կերպով նաեւ անդրադարձաւ Արցախի հարցին:

Յայտնենք, որ միջազգային տազնապներու անդրադառնալու կոչուած յանձնախումբի զեկուցաբեր՝ դոկտ. Նորա Պայրազտարեանը, որ անդամ է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան եւ դասախօս՝ Լիբանանեան Համալսարանէն ներս քաղաքական գիտութեանց ու միջազգային օրէնքի, յիշեալ յայտարարութեան խմբագրութեան մէջ կարեւոր դեր ունեցաւ՝ խորհրդակցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ, թէ՛ Գերմանիա մեկնելէ առաջ եւ թէ՛ համաժողովի աշխա-



տանքներու ընթացքին: Դոկտ. Պայրազտարեան Ե.Հ.Խ.-ի միջազգային տաղ-
նապներու յայտարարութեանց շարքին նաեւ համաժողովին ներկայացուց
Արցախի մասին յայտարարութիւնը:

Յիշեալ յայտարարութեան մէջ, համաժողովը կը դատապարտէ Արցախի
44-օրեայ Ազրպէյճանի կողմէ նախադրձակ պատերազմը եւ իր զօրակցու-
թիւնը կը յայտնէ Արցախի բնիկ ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին:
Համաժողովը նաեւ կը դատապարտէ քիմիական զէնքի գործածութիւնը եւ
միջազգային օրէնքին հակասող պատերազմական այլ յանցագործութիւննե-
րը: Ան կոչ կ'ուղղէ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (Մ.Ա.Կ.), Եւրո-
պական Միութեան եւ Ազրպէյճանին անյապաղ ազատ արձակելու բոլոր հայ
քաղաքացիները եւ ռազմագերիները: Համաժողովը իր խոր մտա-
հոգութիւնը կը յայտնէ Արցախի գրաւեալ շրջաններու սրբավայրերուն եւ
հայկական մշակութային ժառանգութեան պահպանման նկատմամբ եւ կոչ
կ'ուղղէ ԵՈՒՆԵՍԿՕ-ին ու միջազգային համայնքին բոլոր միջոցներով
պաշտպանելու ու պահպանելու հայկական մշակութային ու կրօնական կա-
ռուցներն ու վայրերը:

Համաժողովը միաժամանակ կոչ կ'ուղղէ Եւրոպայի մէջ անվտանգու-
թեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (Ե.Ա.Հ.Կ.) Մինսքի խում-
բակի շրջանակներուն շուտով երկխօսութեան սկսելու Արցախի հակամար-
տութեան արդար եւ խաղաղ լուծման համար: Վերջապէս, ան կը թելադրէ
Խորհուրդի անդամ բոլոր եկեղեցիներուն աշխատելու շրջանէն ներս համե-
րաշխութիւն հաստատելու եւ արդար ու կայուն լուծում գտնելու ի խնդիր:

Յայտնենք, որ Արցախի պատերազմի օրերուն, ինչպէս նաեւ յաջորդող
շրջանին, Ե.Հ.Խ.-ը անդրադարձած էր Արցախի հարցին եւ անոր արդար լու-
ծում գտնելու հրամայականին:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Գերմանիոյ Քարլզրու քաղաքին մէջ գումարուող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ համաժողովը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը ընտրեց Խորհուրդի նախագահ՝ ներկայացնելով արեւելեան ուղղափառ եկեղեցիները:

Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը երկու շրջան (1991-1998 եւ 1998-2006) ընտրուած էր Ե.Հ.Խ.-ի կեդրոնական ու գործադիր վարչութեանց ատենապետ:

Արդարեւ, ընդառաջելով միջ-եկեղեցական անձնաւորութիւններու ու շրջանակներու ջերմ փափաքին, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական շարժումին նոր մղում մը տալու հեռանկարով, Նորին Սրբութիւնը ընդառաջեց նախագահ դառնալու անոնց փափաքին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՎԱՀԱԳՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ համաժողովի ընթացքին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահ ընտրուելուն առիթով, Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ Վահագն Խաչատուրեան հետեւեալ նամակը յղեց Վեհափառ Հայրապետին.–



Վեհափառ Տէր,

Ընդունէք ինդրեմ, իմ անկեղծ եւ ջերմ շնորհաւորանքը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ ընտրուելու կապակցութեամբ:

Բարձր եմ գնահատում Ձեր բազմամեայ անձնուէր գործունէութիւնը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում՝ ի նպաստ միջ-եկեղեցական

համերաշխութեան: Դու՛ք մե՛ծ հեղինակութիւն է՛ք վայելում Ձեր էկոմենիկ ծառայութեան շնորհիւ՝ հանդիսանալով մի շարք աստուածաբանական եւ միջ-եկեղեցական կազմակերպութիւնների ու յանձնախմբերի անդամ:

Առանձնայատուկ արժեւորում եմ Ձեր հետեւողական ջանքերը՝ ուղղուած հոգեւոր արժէքների, ազգային աւանդոյթների, լեզուի եւ մշակոյթի պահպանման սուրբ գործին: Ձեր ընտրութիւնը պայմանաւորուած է նաեւ Հայ Եկեղեցու միջազգային ֆանաչելիութեանը միտուած Ձեր տեսլականով: Հետաքրքրութեամբ ընթերցեցի ինձ ուղարկուած Ձեր գրքերը, որտեղ ամփոփուած են անձնական յուշեր եւ կարեւոր ուղերձներ: Լիովի՛ն համակարծիք եմ Ձեզ հետ, որ եկեղեցին հայ մշակոյթի ծննդավայրն է՝ առանցքային դերակատարումով հայ մշակոյթի բոլոր դրսեւորումները խթանելու, հարստացնելու եւ պաշտպանելու գործում:

Մաղթում եմ Ձեզ, Վեհափառ Տէր, Բաշառողչութիւն եւ արեւշատութիւն Ձեր նուիրական առաքելութեան իրականացման ֆանաչարհին:

Խորին յարգանքով՝
ՎԱՀԱԳՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ
ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) 11-րդ համաժողովի ընթացքին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընտրուեցաւ Ե.Հ.Խ.-ի նախագահ՝ ներկայացնելով Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները եւ Միջին Արեւելքը:

Այս առիթով, Վեհափառ Հայրապետը շնորհաւորութիւններ ստացաւ ազգային եւ օտար շրջանակներէ՝ գրաւոր թէ՛ հեռաձայնով: Ստորեւ Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանի շնորհաւորական գիրը՝ ուղղուած Նորին Ս. Օծութեան. –

Վեհափառ Տէր,

Արցախի ժողովրդի, իշխանութիւնների եւ անձամբ իմ անունից ի խորոց սրտի շնորհաւորում եմ Ձեզ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ ընտրուելու կապակցութեամբ:

Արցախում մեծ ուրախութեամբ ու ակնածանքով ընդունեցին այդ բաղձալի լուրը եւ վստահ ենք, որ Ե.Հ.Խ. կենդրոնական եւ գործադիր վարչութիւնների ստեղծապետի պաշտօնում ծաւալած Ձեր երկարամեայ բեղմնաւոր գործունէութիւնը, հարուստ փորձն ու գիտելիքները մեծապէս կը նպաստեն միջ-եկեղեցական կապերի խորացմանն ու զարգացմանը, հոգեւոր եւ մարդասիրական արժէքների տարածմանն ու ամրապնդմանը, իսաղադութեան ու համերաշխութեան հաստատմանը համայն աշխարհում: Թող ամենագոր Աստուած պահապան լինի Ձեզ Ձեր աստուածահանոյ ու կարեւոր առաքելութիւնն իրականացնելու քանապարհին:

Ձեր իմաստուն խօսքով ու գործով Դուք միշտ եղել էք Արցախի կողմին, ըստ ամենայնի սատարել ու նեցուկ էք եղել մեր հաւատաւոր ժողովրդին, ինչի համար անչափ շնորհակալ ենք Ձեզ ու երախտապարտ:

Մէկ անգամ եւս ընդունէք, ինդրեմ, մեր ջերմագին շնորհաւորանքներն ու անկեղծ բարեմաղթանքները: Խաղաղութիւն, արեւշատութիւն ու ամենայն բարիք Ձեզ, մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Խորին յարգանքով՝

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ ՀԱՆՂԻՊՈՒՄ
ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ԱՖՐԱՍ Բ. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ԵՒ ԹԱՈՒԱՏՐՈՍ Բ. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՋԵՒ

17-19 Հոկտեմբերին, Գահիրէէն (Եգիպտոս) քիչ անդին գտնուող Անպա Պիչոյ վանքին մէջ տեղի ունեցաւ Հայ Եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, ասորի ուղղափառ եկեղեցւոյ Անտիոքի Պատրիարքութեան եւ ղպտի ուղղափառ եկեղեցւոյ Աղեքսանդրիոյ Պատրիարքութեան ներկայացուցիչներուն միջեւ հանդիպում: Յայտնենք, որ 1996 թուականին, Վեհափառ Հայրապետին, ասորի եկեղեցւոյ Ջաքա Ա. Պատրիարքին եւ ղպտի եկեղեցւոյ Շնուտա Գ. Պատրիարքին միաձայնութեամբ հաստատուած միջ-եկեղեցական գործակցութեան յանձնախումբը յաջորդաբար հանդիպումներ ունեցած էր Անթիլիասի Մայրավանքին, Գահիրէի եւ Դամասկոսի մէջ: Յիշեալ յանձնախումբին մեր Ս. Աթոռին կողմէ մաս կազմեցին՝

Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ Բերիոյ Հայոց Թեմի Հայրապետական Նուիրակ Գերշ. Տ. Մակար Եպս. Աչգարեան: Հանդիպման ներկայ էր նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջին Արեւելքի միջ-եկեղեցական յարաբերութեան վարիչ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Համաձայնակիւն հետեւանքով թէ՛ յիշեալ յանձնախումբի անդամները եւ թէ՛ երեք հոգեւոր պետերը առիթ չէին ունեցած շարունակելու իրենց հանդիպումներն ու հաւաքական աշխատանքները: Անպա Պիշոյ վանքին մէջ առաջին երկու օրերը հանդիպեցան յանձնախումբի անդամները եւ քննարկեցին միջ-եկեղեցական յարաբերութեանց ծիրէն ներս կաթողիկէ, ուղղափառ եւ անկլիքան եկեղեցիներուն հետ շարունակուող աստուածաբանական երկխօսութիւնները, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին մեր եկեղեցիներուն մասնակցութիւնը, ինչպէս նաեւ յիշեալ եկեղեցիներուն առնչուած յատկանշական դէպքեր ու կարեւոր ծրագիրներ, մասնաւորաբար Միջին Արեւելքի մէջ:

Երրորդ օրը տեղի ունեցաւ յանձնախումբին եւ հոգեւոր պետերուն միջեւ հանդիպում: Յանձնախումբը զեկոյց ներկայացուց իր կատարած աշխատանքներուն մասին, տեղի ունեցան անհրաժեշտ քննարկումներ եւ ապա հոգեւոր պետերը հանդէս եկան միացեալ յայտարարութեամբ: Յայտարարութեան մէջ շեշտուեցաւ միջ-եկեղեցական գործակցութեան, Միջին Արեւելքի մէջ քրիստոնէութեան ներկայութեան եւ եկեղեցւոյ ընկերային ծառայութեան կարեւորութիւնը:

Յանձնախումբին եւ հոգեւոր պետերուն յաջորդ հանդիպումը պիտի կայանայ յառաջիկայ տարի Անթիլիասի Մայրավանքին մէջ:



تم تصوير
مرفئع استحقاق

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ-ԱՆԿԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՕՍՈՒԹԵԱՆ

Արեւելեան Ուղղափառ-Անկլիքան Եկեղեցիներու Աստուածաբանական Երկխօսութեան Միջազգային Յանձնախումբը իր տարեկան հաւաքը կայացուց 24–29 Հոկտեմբերին, Անգլիոյ մէջ՝ վայելելով զպտի եկեղեցւոյ Լոնտոնի թեմի հիւրընկալութիւնը: Յանձնախումբը իր ժողովը գումարեց Էսսէքսի Պոլէյնթրի աւանին մէջ գտնուող զպտի ուղղափառ եկեղեցւոյ «Պէթել» կեդրոնին մէջ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, սոյն յանձնախումբին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը ներկայացնէ՝ միջ-եկեղեցական բաժանմունքի վարիչ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան, որ ներկայ էր այս ժողովին:

Հետեւելով երկխօսութեան օրակարգին, յանձնախումբը շարունակեց 2019 թուականին Եգիպտոսի մէջ սկիզբ առած «Տիեզերական Ժողովներուն Ժառանգութիւնը» թեմայով թղթածրարին աշխատանքները՝ նկատի ունենալով, որ 2020 եւ 2021 թուականներուն կարելի չէր եղած ժողով գումարել համաճարակին պատճառով: «Տիեզերական Ժողովներուն Ժառանգութիւնը» թեմային վերաբերեալ բանաձեւը վերատեսութեան ենթարկուելէ եւ վերջնական ձեւ ստանալէ ետք որդեգրուեցաւ: Քննարկումի առարկայ դարձան նաեւ «Եկեղեցիներու Ընտանիք» նիւթը ու մանրամասնօրէն ուսումնասիրուեցան յառաջիկայ տարուան աշխատանքները՝ հիմնական օրակարգի վրայ դնելով «Եպիսկոպոսներ եւ Սինտոներ» թեմային թղթածրարը:



27 Հոկտեմբերին յանձնախումբը հիւրը եղաւ Ս. Ալպանի Վանքի տեսուչին: Այցելութեան ընթացքին տեղի ունեցաւ Ս. Ալպանի եւ Ս. Սմփիպալոսի մասունքներուն առջեւ աղօթք: Շարունակելով ուխտագնացութիւնը, ժողովականները այցելեցին զպտի եկեղեցւոյ կեդրոնատեղին եւ Սթիվնէճի Ս. Գէորգ մայրավանքը, ուր յանձնախումբին համա-ատենապետները ստորագրեցին «Տիեզերական ժողովներուն ժառանգութիւնը» բանաձեւը՝ յանուն ժողովականներուն:

Յայտնենք, որ յանձնախումբը բաղկացած է տարբեր երկիրներէ ու մշակոյթներէ եկած հոգեւորականներէ եւ կը ներկայացնէ համաշխարհային գետնի վրայ իրենց արտայայտութիւնն ու հասանելիութիւնը ունեցող դաւանանքներ: Որպէս արտայայտութիւն այս գնազանութեան հարստութեան, Գահիրէի մէջ գումարուած ժողովը հիւրընկալուած էր անկլիքան եկեղեցւոյ կողմէ, իսկ Անգլիոյ մէջ՝ զպտի ուղղափառ եկեղեցւոյ Լոնտոնի թեմին կողմէ: Այս համաշխարհային ծիրին մէջ, եկեղեցիներու դիմագրաւած մարտահրաւէրները յաճախ նոյնանման են: Ներշնչիչ եւ ոգեւորիչ էր բաժնեկցիլ եւ լսել աշխարհի չորս ծագերուն մէջ գտնուող մեր եկեղեցիներուն եւ հաւատացեալներուն մասին, յիշել զիրար մեր աղօթքներուն մէջ եւ իրարու նեցուկ կանգնիլ՝ իրականացնելու համար Աստուծոյ կամբը:

Քննարկումներու եւ աղօթքներու մէջ ամէնէն շատ յիշատակուեցաւ Միջին Արեւելքը: Յանձնախումբի անդամները իրենց փորձառութիւնը բաժնեցին Լիբանանի, Սուրիոյ ու Իրաքի տագնապներուն եւ հակամարտութիւններուն լոյսին տակ: Յանձնախումբը յատկապէս ուշադրութիւն դարձուց վերջին հանդիպումէն մինչեւ օրս Կովկասի մէջ տեղի ունեցած արմատական փոփոխութիւններուն, ի մասնաւորի Արցախի ժողովուրդին դէմ Թուրքիոյ աջակցութիւնը վայելող Ազրպէյճանի յարձակումներու լոյսին տակ:

Յանձնաժողովը իր յաջորդ ժողովը պիտի գումարէ Հոկտեմբեր 2023-ին, Յորդանանի Հաշիմեան Թագաւորութեան անկլիքան եկեղեցւոյ Երուսաղէմի թեմին մէջ:



ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 1 Հոկտեմբերին, գլխաւորութեամբ Ս. Աթոռոյս գահակալ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ ներկայութեամբ ուսուցչական կազմէն խումբ մը հոգեւորական եւ աշխարհական դասատուներու, Դպրեվանքի սրահին մէջ տեղի ունեցաւ Դպրեվանքի 2022-2023 կրթական-ուսումնական տարեշրջանի առաջին ուսուցչական ժողովը:

Դպրեվանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր խօսքին մէջ յայտնեց, որ Ամենակալին օրհնութեամբ այս տարի եւս Դպրեվանքը պատրաստ է իր դռները լայնօրէն բանալու դպրեվանեցիներուն դիմաց եւ մեր ժողովուրդին տուած իր խոստումին հաւատարիմ մնալով՝ մեր ազգին, յատկապէս Սփիւռքին մատակարարելու հոգեմտաւոր պատրաստութիւն ունեցող մշակներ: Իր խօսքի ակարտին, տեսուչ հայր սուրբը հրահրեց Նորին Ս. Օծութիւնը իր հայրական ու Հայրապետական յորդորներով ուղեցոյցներ ձեռնարկելու եւ առաջնահերթութիւններ յտակացնելու՝ Դպրեվանքի ուսումնական-կրթական նոր տարեշրջանը լաւագոյնս իմաստաւորելու նպատակով:



Իր կարգին, Վեհափառ Հայրապետը իր հայրական ողջոյնն ու սէրը փոխանցեց Դպրեվանքի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան: Վերջիչեցնելէ ետք Դպրեվանքին առանցքային ու եզակի դերակատարութիւնը մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ՝ ընդգծեց այս սրբազան յարկին տակ հոգեմտաւոր, բարոյական ու ազգային դաստիարակութիւնը ջամբելու կարեւորութիւնը: Ան ըսաւ, որ «Դպրեվանքը տարիներ շարունակ լծուած է մեր ազգին մարդուժ պատրաստելու սրբազան առաքելութեան. առաքելութիւն մը, որ չի նմանիր ազգային վարժարաններուն այլապէս սրբազան կոչումին: Դպրեվանքին մէջ մեր ուսանողները կը պատրաստուին ու կը լիցեաւորուին ապագային մեր ազգի մշակութային, ազգային ու հոգեւոր կեանքը հարստացնելու եւ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու վերատիրացման գործին նուիրուելու: Այս գիտակցութեամբ Դպրեվանքին մէջ մենք կերտուեցանք, կը կերտենք ու պիտի շարունակենք կերտել հայ ազգին ապագայ սերունդները»:

Իր խօսքի ավարտին, Նորին Սրբութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց Դպրեվանքի տեսչութեան, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան տարած աշխատանքին եւ բարի երթ, յաջող տարեշրջան եւ արգասաբեր ուսումնական-կրթական տարի մը մաղթեց Դպրեվանքին:

Յիշենք, որ Վեհափառ Հայրապետը երկար տարիներէ ի վեր Աստուածաբանութիւն կը դասաւանդէ Դպրեվանքի ընծայարանի ավարտական դասարանին:

Յայտնենք, որ տեսուչ հայր սուրբին իբրեւ օգնականներ, տեսչութեան մաս կը կազմեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբաններէն Հոգշ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան, Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան եւ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:

**ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՈԳԻՈՎ ԲԱՑՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵՑԱԻ
ԴՊՐԵՎԱՆՔԻ 2022-2023 ԿՐԹԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԸ**

Կիրակի, 9 Հոկտեմբերին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Կաթողիկոսարանի Վեհարանի ղահլիճին մէջ տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մարդակերտման հնոց Դպրեվանքի 2022-2023 կրթական-ուսումնական տարեշրջանի բացումը:

Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Դպրեվանքի տեսուչ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան: Հայր սուրբը իր քարոզին մէջ յիշեց, որ Սրբոց Թարգմանչաց տօնը նշելով կը յիշատակենք նուիրեալ մեր հայրերը, որոնց շնորհիւ ներկայիս մենք կ'ապրինք մեր ազգային ինքնութեամբ: Անոնց յիշատակը յարգելով եւ անոնց սուրբ գործը վեր առնելով, մենք նաեւ առիթ կ'ունենանք դառնալու մէկական թարգմանիչներ Աստուծոյ խօսքին եւ կամքին, որովհետեւ այսօր չենք տօնախմբեր սոսկ հայ գիրերու գիւտը, այլեւ՝ Աստուծոյ խօսքին հայ տառերով մարմնացումը ու



Քրիստոսի հայոց լեզուով ներկայութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ: Թարգմանչաց տօնակատարութեան առթիւ կատարելով նաեւ Դպրեվանքի կրթական-ուսումնական տարեշրջանի բացումը, աղօթք կը բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Իր օրհնութիւնները անպակաս ընէ Դպրեվանքին վրայէն, որուն հնոցին մէջ կը պատրաստուին մեր ազգին ծառայող հոգեւորականներ ու ազգային գործիչներ:

Ս. Պատարագի աւարտին, Վեհարանի դահլիճին մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ Դպրեվանքի 2022-2023 ուսումնական-կրթական տարեշրջանին: Դպրեվանքի սաները գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին ներկաներուն՝ արձագանգելով «Նմանեալ Մովսէսի» շարականը, «Ով մեծաւախն էր լեզու» եւ «Մեմք սաներն եմք Դպրեվանքի» երգերը, ինչպէս նաեւ Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» քերթուածը եւ աւետարանական հատուած մը: Ապա, տեսուչ հայր սուրբը ընթերցեց տեսչական ուղերձը: Ան ըսաւ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Լիբանան հաստատուելէն ետք, մեր հոգեւորական հայրերը չէին կորսնցուցած Դպրեվանք հիմնելու գիտակցութիւնը՝ քաջաբար դիմագրաւելով յետցեղասպանութեան եւ տարագրութեան բոլոր մարտահրաւէրները: Առանց Դպրեվանքի կարելի չէր պատկերացնել մեր ազգին ու եկեղեցւոյ գոյատեւման պայքարը, որուն հրամայականին առջեւ կը գտնուինք այսօ՛ր եւս: Ան շեշտեց, որ Դպրեվանքը ո՛չ միայն գիտութիւն մատակարարեց, այլ նաեւ՝ շունչ եւ ոգի, որովհետեւ գիտելիքն ու ուսումը առանձնաբար երաշխիք չեն Սփիւռքի գաղութներէն ներս եկեղեցական ու ազգային դիմագիծի ու ինքնութեան պահպանումին եւ ոգեղէն ու հոգեւոր կազմաւորումն է, որ կ'ապրեցնէ ու կ'իմաստաւորէ Դպրեվանքէն ներս հայ երիտասարդին ամբարած գիտութիւնը:

Իր խօսքին մէջ հայր սուրբը նաեւ դիտել տուաւ, որ ներկայ տազնապները ժխտական կերպով կ'ազդեն եկեղեցւոյ եւ ազգին նուիրուելու ու ծառայելու պատասխանատուութեան գիտակցութեան: Եկեղեցին կը գիտակցի, որ մեր ժողովուրդի զաւակները մեծ սպասումներով կը նային Դպրեվանքին:

Ուղերձի ավարտին, հայր սուրբը իր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Դպրեվանքին հանդէպ անոր ունեցած սիրոյն ու բժախնդրութեան համար, որ կը մղէ տեսչութիւնն ու ուսուցչական կազմը նո՛յն գուրգուրանքով եւ նախանձախնդրութեամբ մօտենալու Դպրեվանքի առաքելութեան եւ սաներուն դաստիարակութեան:

Հոսկ, Վեհափառ Հայրապետը ուղղեց իր պատգամը: (Տես Վեհափառ Հայրապետին պատգամը էջ 575):

Հանդիսութիւնը իր ավարտին հասաւ Դպրեվանքին քայլերգով եւ «Կիլիկիա» օրհներգով:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ
ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ԵՒ
ԴՊՐԵՎԱՆՔԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌՑԱՆՑ ԺՈՂՈՎԻՆ**

Երեքշաբթի, 11 Հոկտեմբերին, տեղի ունեցաւ Միջին Արեւելքի Աստուածաբանական Կեդրոններու եւ Դպրեվանքներու Միութեան (Մ.Ա.Ա.Կ. Դ.Մ. – ATIME) առցանց ժողովը: Ժողովի ընթացքին, զանազան նիւթերու առընթեր, յատուկ քննարկումի առարկայ դարձան ստեղծագործ մօտեցումներու, բնապահպանման ծրագիրներու եւ միջ-եկեղեցական շարժումի համագործակցութեան մարզերու առնչուող նիւթեր: Ժողովը նաեւ անդրադարձաւ Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Աստուածաբանական նիւթերուն եւ էքիմէնիք շարժումի գործունէութեան կարեւորութեան:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին օրհնութեամբ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին յիշեալ առցանց ժողովին մասնակցեցաւ Դպրեվանքի հսկիչ՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:

Յայտնենք, որ 2023-ի Մայիս ամսուան ընթացքին, Լիբանանի Պալամանտ համալսարանին մէջ տեղի պիտի ունենայ Միութեան յաջորդ հանդիպումը, քննելու եւ կազմակերպելու Միջին Արեւելքի մէջ գտնուող աստուածաբանական համալսարաններու ուսանողներուն համար կազմակերպուելիք ամառնային ճամբարը, Եգիպտոսի մէջ:



ՍՓԻԻՌԻՔԻ ՏԱՐԻ


ՍՓԻՌԵԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱՌՅԱՆՑ ԵՐՐՈՐԴ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակելուն առիթով, Ուրբաթ, 23 Սեպտեմբերին, տեղի ունեցաւ երրորդ առցանց խորհրդակցութիւն-քննարկումը:

Վեհափառ Հայրապետին նախագահած նիստին իրենց մասնակցութիւնը բերին՝ Միացեալ Նահանգներէն՝ Խաչիկ Թէօլէօլեան, Երուանդ Զօրեան, Հայկ Օշական, Հայաստանէն՝ Ռուբէն Ճանպազեան, Ֆրանսայէն՝ Յովել Շնորհոքեան, Անգլիայէն՝ Հրաչ Գուլյումճեան եւ Հրաչ Զիլիկերեան, Զուիցերիայէն՝ Թենի Փիրի-Սիմոնեան, Արժանթինէն՝ Խաչիկ Տէր Ղուկասեան, Լիբանանէն՝ Սեդա Խտրչեան, Շահան Գանտաշարեան եւ Խաչիկ Տէտէեան:

Նիստի բացումը կատարելով Վեհափառ Հայրապետը, անդրադարձաւ «Սփիւռքի Տարի»ին առիթով մինչեւ օրս տարուած տարբեր խորհրդակցութիւններուն, հանդիպումներուն եւ աշխատանքներուն մասին: Ապա, ան առանցքային երեք ուղղութիւններ նշեց Սփիւռքի հարցերու քննութեան համար ցարդ կայացած քննարկումներուն՝ ախտաճանաչում, հակազդեցութիւն, գործընթաց:

Հայրապետը հաստատեց, որ տարուան յայտարարութիւնն ու կատարուած քննարկումները լայն արձագանգ գտած են մամուլին եւ տարբեր բնոյ-



թի հրապարակումներու մէջ, այդուհանդերձ, ան կարեւոր նկատեց, որ յաւելեալ քննականութիւն եւ ինքնաքննականութիւն պէտք է հաղորդել մեր ախտաճանաչումներուն, զորս կարեւորագոյն մեկնակէտ պէտք է նկատել յառաջիկայ աշխատանքներուն համար:

Ինքնութեան կորուստ, սահմանում, փնտռտուք, ինքնաճանաչման նոր մօտեցում: Մեր կառոյցներու ինքնամփոփութիւն, ժամանակավրիպութեան սպառնալիք, հայկական ինքնութիւն ունեցող օտարացած հայերու թիւի աճ, Արեւմտահայերէնի նահանջի երեւոյթ, մարդու չի նուազում ու հեռացում, երիտասարդութեան լուսանքայնացում ու ինքնայլուսանքայնացում, արժէքափոխութեան արագ ընթացք, ցանցային դրուածք ու հայկական աշխարհի անհամապատասխանելիութիւն, ներգաղութային եւ միջգաղութային թերի համագործակցութիւն, համասփիւռքեան մտածողութեան բացակայութիւն եւ Սփիւռք-Հայաստան կապերու հայեցակարգի չգոյութիւն:

Այս ախտանշումներուն դիմաց Սփիւռքը ներկայ գոյավիճակէն դուրս բերելու կարիքը զգալի է ամենուրեք: Հակազդեցութեան ծիրէն ներս նշմարելի է երիտասարդութեան վերածումը կարեւոր խաւի, որ անյետաձգելի կը նկատէ Սփիւռքի վերակազմակերպումը: Այլապէս, աւելի պիտի խորանայ անջրպետը երիտասարդութեան եւ սփիւռքահայ կեանքին միջեւ:

Նպատակը այս բոլորին զուտ տեսաբանական ուսումնասիրութիւն պատրաստել չէ: Նպատակը տարբեր մարզերու վերականգնումի աշխատանքներուն համար ծրագիր մշակել ու գործի անցնել է:

Նախապէս արծարծուած յիշեալ կէտերը հանդիպման ընթացքին ենթարկուեցան խորքային եւ մասնագիտական քննարկումի: Սփիւռքի գոյութեան, վերականգնման եւ զարգացման կամ ընդհանրապէս նոր աշխատակարգի որդեգրման համար հնչեցին հասկացութեանական նոր բանաձեւեր, նոր ձեւակերպումներ եւ նոր մեթոտներով աշխատելու մասին առաջարկներ, նկատի ունենալով Սփիւռքի համապատկերին յարափոփոխելիութիւնը: Համասփիւռքեան-համահայկական մտածողութիւն եւ համապատասխան օրակարգեր մշակելու համար շեշտուեցաւ անհրաժեշտութիւնը միացեալ համակարգերով աշխատելու:

Նիստի աւարտին Նորին Ս. Օծութիւնը յայտնեց, որ «Սփիւռքի Տարի»-ն չի սահմանափակուիր ընթացիկ տարիով. ան պիտի շարունակուի եւ 2023-ը հռչակուի «Սփիւռքի Տարի Բ. Ինֆլանսնաթեմէ Վերակազմակերպում Առաջադրանքով»: Այս շրջագիծին մէջ մեր յետագայ աշխատանքներուն համար նկատի պիտի առնուին այս քննարկումներու ընդգծած ուղենիշները:

Նիստի մասնակիցները գոհունակութիւն յայտնեցին հարցերու խորքային քննարկումին համար եւ առաջարկեցին շարունակական բնոյթ տալ այս խորհրդակցութիւններուն:

Վեհափառ Հայրապետը ողջունեց այս նիստի ընթացքին ի յայտ եկած խորհրդակցութիւններու որակեալ եւ փորձագիտական էութիւնը եւ ընդգծեց այս խումբով համասփիւռքեան-համահայկական օրակարգերու մշակման համար տարբեր ձեւաչափերով աշխատելու անհրաժեշտութիւնը:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱԽԱՉԱՆ ԿՐԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 15 Հոկտեմբերին, Օրհնություններ եւ գլխավորությամբ Ս. Աթոռոյս ազգընտիր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին եւ ներկայութեամբ վանաբնակ միաբան հայրերու, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութեան Վարդապետութեան աստիճանի թեկնածու վեց երիտասարդ հոգեւորականներու՝ Հոգշ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեանի, Հոգշ. Տ. Անդրանիկ Աբղ. Քիւրիւմեանի, Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեանի, Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօղեանի, Հոգշ. Տ. Յակոբ Աբղ. Եագուպեանի եւ Հոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պրիխանեանի վարդապետական ակադեմիայի ներկայացումը:

Աւարտաճառերը կը բովանդակէին արիւնքային նիւթեր, որոնք դուրս բերուած էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հարուստ արիւններէն: Հայր Աւետիքին ակադեմիայի նիւթն էր «Չանազան Նամակագրութիւններ Բերիոյ Հայոց Թեմին Ուղղուած», Հայր Անդրանիկին՝ «Հ.Բ.Ը. Միութեան Աշխատանքը 1919-1945», Հայր Սարգիսին՝ «Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Թղթակցութիւնը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հետ (1918-1956)», Հայր Գէորգին՝ «Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկո-



սուրբեան եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Միջեւ (1930–1942)», *Հայր Յակոբին՝ «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թղթակցութիւնը Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղերու Հետ 1957-էն Մինչեւ 2004» եւ Հայր Մանուկին՝ «Վանի Ինքնապաշտպանութիւնը – Շապիհ Գարահիսարի Ինքնապաշտպանութիւնը – Սոււտիոյ Ինքնապաշտպանութիւնը – Հայկական Կիլիկիոյ Ազատագրման Անցքերը»:*

Իւրաքանչիւր միաբան իր աւարտաճառը ներկայացնելէ ու իր աշխատելաճիւղին մասին յաւելելէ լուսաբանութիւններ կատարելէ ետք, եզրափակիչ օրհնութեան խօսքը փոխանցեց Վեհափառ Հայրապետը: Ան գնահատեց միաբան հայրերուն կողմէ տարուած ուսումնասիրական արխիւային աւարտաճառերու աշխատանքները եւ կարեւոր ընդգծումներ ու թելադրանքներ կատարեց ակադեմական չափանիշերով ամբողջացնելու եւ հրատարակութեան պատրաստելու համար յոյժ կարեւորութիւն ներկայացնող նիւթերը: Այս առիթով Նորին Ս. Օծովութիւնը անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) միջեւ անցեալին գոյութիւն ունեցած սերտ գործակցութեան ու յարաբերութեան եւ յիշեց Հ.Բ.Ը.Մ.-ին ունեցած ներդրումը մեր Ս. Աթոռի կեանքին ու առաքելութեան մէջ: Աւարտին, Հայրապետը թելադրեց յատուկ կարեւորութիւն ընծայել մեր հոգեմտաւորական կեանքին, իբրեւ անբաժան մասը հայ հոգեւորականի կոչումին, ծառայութեան ու առաքելութեան:

Իսկ Կիրակի, 16 Հոկտեմբերին, Հանդիսապետութեամբ եւ տնօրինութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յընթացս Ս. եւ Անմահ Պատարագին, հինգ երիտասարդ միաբաններ ստացան վարդապետութեան մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները՝ ձեռամբ «Կիլիկիա» մատենա-



դարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի եւ խարտաւիլակութեամբ՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգըլճեանին:

Եկեղեցւոյ ատեանին մէջ, Շահան սրբազանը կատարեց ընծայեալներուն հաւատքի քննութիւն: Հոգշ. Տ. Աւետիք Աբղ. Տէր Կարապետեան, Հոգշ. Տ. Անդրանիկ Աբղ. Քիւրիւմեան, Հոգշ. Տ. Սարգիս Աբղ. Աբրահամեան, Հոգշ. Տ. Գէորգ Աբղ. Գարակէօզեան եւ Հոգշ. Տ. Մանուկ Աբղ. Պրիխանեան ծնրագիր շրջապատած ձեռնադրիչ սրբազանը՝ նզովեցին բոլոր աղանդաւոր հերձուածները ու անոնց ուսուցումները եւ հաստատեցին իրենց հաւատարմութիւնը ուղղափառ դաւանանքին ու անոր ջատագով հայրապետներուն: Ապա, հինգը միասնաբար արտասանեցին Հաւատոյ Դաւանանքը: Արդարեւ, ընծայեալները Վարդապետական չորս աստիճաններու ստացումով, նորոգեցին իրենց ուխտը հոգեւոր ծառայութեան եւ խոստացան ամբողջանուէր քարոզել Տիրոջ Աւետարանը՝ մեր ժողովուրդի փրկութեան համար:

Արարողութեան ավարտին, Շահան Արք. յաւուր պատշաճի քարոզեց: Ան փառք ու գոհութիւն յայտնեց Ամենակալ Աստուծոյ, որ իր շնորհքը կ'առատացնէ մեր սուրբ եկեղեցւոյ զաւակներուն վրայ, ձեռնադրութեանց շնորհաբաշխութեան ճամբով կը լուսաւորէ եկեղեցին եւ նորոգուած ուխտով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան շարքերէն ներս Աւետարանի քարոզիչներ կ'ընտրէ, որպէսզի Տիրոջ խօսքը մեր ժողովուրդին փոխանցէ: Ան երախտագիտութիւն յայտնեց Ս. Աթոռիս ազգընտիր հովուապետին, որուն տնօրինութեամբ ու նախագահութեամբ օր մը առաջ տեղի ունեցած էր վարդապետական ավարտաճառերու պաշտպանութիւն եւ այսօր, դարաւոր մեր եկեղեցւոյ ավանդութեան համաձայն, կը կատարուի արեղայական կուսակիւծն քահանայութենէն ետք, Տիրոջ խօսքը քարոզելու համար Վարդապետական չորս աստիճաններու շնորհում: Սրբազան հայրը մեկնելով Պողոս առաքեալի խօսքէն, թէ «Ամօթ չեմ համարեր Աստուծոյ Աւետարանը քարոզել, որ Աստուծոյ զօրութիւնն է եւ որ կը փրկէ ամէն հաւատացող» (հմմտ. Հռ 1.1, 16), բացատրեց Աւետարանին գիրք հասկացողութենէն անդին փրկագործական նշանակութիւնը՝ ընդգծելով «Տիրոջ խօսքը նոյնինքն Տէր Աստուածն է, իր Արքայութիւնը, Տէր Յիսուս Քրիստոսը՝ մարդկութեան Փրկիչը, Տիրոջ փառքն ու շնորհքն է, Տիրոջ լոյսն ու մեր յոյսն է»: Ան թելադրեց հոգեշնորհ վարդապետներուն վայել ձեւով ապրիլ Աւետարանի ճշմարտութիւնը եւ հաւատքով համարձակօրէն քարոզել, ուսուցանել, պայքարիլ եւ կեանքը զոհաբերել:

Ս. Պատարագէն ետք, Նորին Ս. Օծութիւնը վեհարանին մէջ ընդունեց Հայ Եկեղեցւոյ նորընծայ վարդապետները եւ փոխանցեց իր հայրական օրհնութիւնը:

Յայտնենք, որ վեհափառ Հայրապետին տնօրինութեամբ, Հոգշ. Տ. Յակոբ Աբղ. Եագուպեան նոյն օրը վարդապետական գաւազան կրելու իշխանութիւն ստացաւ իր ծառայութեան կոչուած թեմի Ս. Յակոբ առաջնորդարանիստ մայր եկեղեցւոյ մէջ (Գանատա), ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ.
ՄԻՍԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ 1914-1939» ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

8-9 Սեպտեմբերին, Նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմագիտութեան եւ հասարակագիտութեան բաժանմունքին, տեղի ունեցաւ երկօրեայ գիտաժողով յիշեալ համալսարանին մէջ:

Հինգշաբթի առաւօտ գիտաժողովի պաշտօնական բացումը կատարուեցաւ, ուր համալսարանի տնօրէն՝ Սրբուհի Գէորգեան կարեւորեց գիտաժողովի իրականացումը ներկայ պայմաններուն մէջ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին օրհնութեան խօսքը արտասանեց՝ Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Ժամկոչեան, իսկ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեան խօսքը ընթերցեց՝ Կիլիկիա Մատենադարանի տնօրէն Գերշ. Տ.



Շահան Արք. Սարգիսեան: Նորին Ս. Օծութիւնը կը հրաւիրէր մասնակիցները առարկայական եւ համապարփակ մօտեցումով ուսումնասիրելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առանցքային դերակատարութիւնը մեր պատմութեան ամենավճռորոշ տարիներուն, յատկապէս առաջին համաշխարհային պատերազմին, Հայոց Յեղասպանութեան եւ յաջորդող շրջաններուն:

Առաջին նիստին առաջին զեկոյցը ներկայացուց **Շահան Արք.** եւ անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան՝ արխիւներու ընդմէջէն:

Իր տեսակին մէջ առաջինը եղող սոյն գիտաժողովին կարգացուեցան, վերընթերցուեցան եւ քննարկուեցան 30 զեկոյցներ՝ Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան տարբեր ժամանակներուն եւ երեսներուն վերաբերող հետաքրքրական նիւթերով:

Յայտնենք, որ գիտաժողովը, փաստօրէն, առաջին հանգրուանն է յաջորդող նմանօրինակ համախմբումներու:



«ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

28-29 Սեպտեմբերին, Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան, յանուն Կաթողիկոսութեան, Երեւանի մէջ իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Գրադարանին նախաձեռնած երկօրեայ գիտաժողովին, ուր զեկուցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գրահրատարակչական առաքելութեան պատմական ընթացքին եւ ներկայ իրավիճակին մասին: Զեկոյցը զիրար ամբողջացնող հինգ մասերէ կը բաղկանար՝ սկզբնաւորութիւնը, բաժանմունքները (յաջորդաբար նկարագրելով գիրին ու գիրքին աղբսուած մշակութային գլխաւոր հաստատութիւնները), արդիւնքները, հրատարակչական հիմնադրամները եւ մեր կատարելիքները: Սրբազան հայրը յիշեցուց, որ թեմերը եւս իրենց հրատարակչական աշխատանքները կ'իրականացնեն Կաթողիկոսարանի առաքելութեան նո'յն ոգիով: Զեկոյցը եզրափակելով՝ ան հարց տուաւ. «Ներկայ գիտաժողովի արդիւնքներով պի-



տի հասնի՞նք ընդհանուր պատկերացումով համապարփակ ծրագրի մը, որով թե՛ պահպանութիւնը մեր հոգեւոր-մշակութային հարստութեանց եւ թե՛ անոնց տարածումը (բոլորին դիրութեամբ հասանելի ընելը), իրականութեան վերածուի» *եւ փակեց՝ «յոյսով կը շարունակենք հաւատալ»:*

Յիշեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» մատենադարանին եւ Հ.Հ. Ազգային Գրադարանին միջեւ փոխըմբռնման եւ համագործակցութեան Յուշագրի կնքումէն ետք (2021), աշխոյժ յարաբերութիւններ կը շարունակուին եւ Ազգային Գրադարանը կը համալրուի Կաթողիկոսարանի տպագրած գիրքերով:

Սոյն գիտաժողովին մասնակցող օտարերկրացի ռուսախօս ներկայացուցիչներուն տրամադրուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի հեղինակած «Հայ Եկեղեցին» անգլերէն գիրքին ռուսերէն թարգմանութիւնը:



Հ.Ե.Հ.Ո.Մ.

Հ.Ե.Հ.Ո.Մ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 22 Սեպտեմբերին, Հայ Եկեղեցույ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) անդամները, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, իրենց տարեկան այցելութիւնը տուին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:

Հանդիպման սկիզբը ուղերձ ընթերցեց Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի վարչութեան ատենապետուհի՝ Ռիթա Աստիքեան: Իր ուղերձին մէջ, յանուն Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի մեծ ընտանիքին, ան շնորհակտրեց Վեհափառ Հայրապետը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նախագահ ընտրուելուն առիթով: Ապա, ատենապետուհին ընդգծեց, թէ անցնող տարուան ընթացքին, Նորին Ս. Օծութեան օրհնութեամբ, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ը ընկերային ծառայութեան թափ տալով, միութեան առաքելութիւնը առաւել եւս ծաւալեցուց եւ օգտաշատ ծրագիրներով անդամներուն թիւը բազմացուց:



Ուղերձին անմիջապես ետք, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի հոգեւոր խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան Վեհափառ Հայրապետին ներկայացուց յառաջիկայ տարեչրջանի ծրագիրներն ու աշխատանքները: Հայր սուրբին խօսքէն ետք, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ականներ գեղարուեստական հակիրճ յայտագիր մը ներկայացուցին՝ կատարելով հայ թէ՛ օտար դասական երաժշտութենէն կտորներ:

Նորին Ս. Օծութիւնը ողջունելով Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի այցելութիւնը եւ ընդհանրապէս անոր գործունէութիւնը՝ շեշտեց, թէ «Սփիւռֆի մէջ եւ յատկապէս Լիբանանի հայ համայնքէն ներս, երիտասարդութիւնը, մասնաւորաբար համալսարանական երիտասարդութիւնը, իր յատուկ խօսքն ու դերը պէտք է ունենայ, որովհետեւ ան իր մասնագիտութեամբ ու կազմութեամբ իր ան կը հանդիսանայ հայ ազգին ու եկեղեցւոյ յառաջդիմութեան: Հետեւաբար, հայ երիտասարդը մնայուն ու գործօն ներկայութիւն պէտք է դառնայ հայ գաղութներուն մէջ»: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով Հ.Ե.Հ.Ո.Մ.-ի գործունէութիւնը, վստահեցուց, թէ Միութեան յառաջիկայ ծրագիրները պիտի վայելեն Կաթողիկոսարանի անմիջական աջակցութիւնը:

Հանդիպման աւարտին, երիտասարդները Ս. Աստուածածին մատրան դիմաց հաւաքուելով՝ երգեցին «Կիլիկիա» մաղթերգը, ապա, յիշատակի խմբանկար մը առին Հայրապետին հետ: Վերջապէս, Հ.Ե.Հ.Ո.Մ.-ական երիտասարդները, Դպրեվանքին մէջ, սիրոյ սեղանի շուրջ ունեցան իրենց ընթրիքը:



ՆԱՐԵԿԱՑԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՆԱՐԵԿԱՑԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՆՇԵՑ ԻՐ 5-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Շաբաթ, 3 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ներկայութեամբ, Կաթողիկոսարանի Նարեկացի մանկապատանեկական երգչախումբը նշեց իր հիմնադրութեան 5-րդ տարեդարձը: Հանդիսութեան ներկայ էին՝ երգչախումբի խմբավար Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան, վարչութեան անդամները, խնամակալութիւնն ու երգչախումբի անդամներուն ծնողները:

Հանդիսութեան սկիզբը երգչախումբի անդամներէն երկու պատանիներ արտասանեցին բացման խօսք, ուր յայտնեցին երգչախումբի առաքելութեան նպատակը եւ Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ հինգ տարիներու ընթացքին ձեռք բերուած յաջողութիւնները: Ապա, երգչախումբի անդամները հակիրճ յայտագիրով մը ներկայացուցին Ս. Պատարագի երգեցողութենէն հատուածներ եւ Բարսեղ Կանաչեանի կտորներէն պատառիկներ:

Հանդիսութեան աւարտին, Նորին Ս. Օծովութիւնը իր հայրական խօսքին մէջ իր ուրախութիւնն ու բարձր գնահատանքը յայտնեց երգչախումբին, խմբավար հայր սուրբին, վարչութեան, խնամակալութեան եւ յատկապէս անդամներու ծնողներուն: Վեհափառ Հայրապետը շնորհակալութեամբ, թէ անհրաժեշտ է զանազան միջոցներով մեր ժողովուրդին մշակութային արժէքները պահպանել, ծաղկեցնել ու տարածել:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ
ԴԵՍՊԱՆԸ ԱՆԹՈՒԼԻԱՍԻ ՄԷՋ**

Երկուշաբթի, 5 Սեպտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ դեսպան՝ Մուճթապա Ամանիին:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան Իրանի հայության եւ Լիբանանի յառաջիկայ նախագահական ընտրության հետ աղերս ունեցող հարցեր: Դեսպանը անդրադարձաւ Իրանի հայության գործօն մասնակցութեան՝ երկրին առաւել զարգացման եւ յառաջդիմութեան աշխատանքներուն: Իր կարգին, Վեհափառ Հայրապետը շեշտեց Իրանի հայության եզակի դերը սփիւռքահայության կեանքէն ներս:

Նախագահական ընտրութեան գծով թե՛ Նորին Սրութիւնը եւ թե՛ դեսպանը ընդգծեցին բոլորին կողմէ ընդունելի եւ երկիրը ներկայ ընկերատնտեսական կացութենէն դուրս բերելու կարողութիւնը ունեցող նախագահի մը ընտրութիւնը:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԸ
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երեքշաբթի, 6 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը

Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան՝ Վահագն Աթաբէկեանի:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ արծարծելու Հայաստանի ու Լիբանանի այժմու կացութեան առնչուած հարցեր:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻԻՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
Հ.Բ.Ը.Մ.-Ի ՆԱԽԱԳԱՅԸ**

Չորեքշաբթի, 7 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնազոյն Հայրապետը ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) նախագահ՝ Պերճ Սեդրակեանի այցելութիւնը:

Շուրջ ժամ մը տեւած հանդիպումին առանցքը դարձան Հայաստան-Սփիւռք գործակցութեան հետ աղերս ունեցող խնդիրներն ու մարտահրաւերները:

**Հ.Ս.Ը.Մ.-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ, 10 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Ս.Ը.Մ.) Կեդրոնական Վարչութեան:

Վարչութիւնը Վեհափառ Հայրապետին ներկայացուց անցնող շրջանին իր կատարած աշխատանքները եւ

յառաջիկայ ծրագիրները: Կեդրոնական Վարչութեան անդամները Նորին Ս. Օծութեան յանձնեցին համա-Հ.Ս. Ը.Ս.ական 11-րդ մարզախաղերու առիթով պատրաստուած յուշանուէրը:

Վեհափառ Հայրապետը իր հայրական օրինութիւնն ու գնահատանքը փոխանցեց, Կեդրոնական Վարչութեան ճամբով, Հ.Ս.Ը.Ս.-ի մեծ ընտանիքին՝ յիշեցնելով, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր թեմական կառոյցներով, միշտ զօրավիգ կանգնած է Հ.Ս.Ը.Ս.-ի ազգանուէր գործունեութեան:

**ՈԱՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ
ՎԵՅԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երկուշաբթի, 12 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Ռամկավար Ազատական Կուսակցութեան Լիբանանի Շրջանային Վարչութեան, գլխաւորութեամբ վարչութեան ատենապետ եւ Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ՝ տոքթ. Աւետիս Տազետեանի:

Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան Վեհափառ Հայրապետին հռչակած «Սփիւռքի Տարի»ին, Լիբանանը դիմագրաւող ընկերատնտեսական տագնապին եւ Սփիւռք-Հայաստան-Արցախ գործակցութեան հետ կապ ունեցող շարք մը հարցեր:

**ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՍԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Հինգշաբթի, 15 Սեպտեմբերին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ.

Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Կիպրոսի Նախագահին ներկայացուցիչ՝ Ֆոդիս Ֆոդիուին, ընկերակցութեամբ Լիբանանի մօտ Կիպրոսի դեսպան՝ Փանայոթիս Զիրիաքոսին:

Ներկայացուցիչը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Կիպրոսի Նախագահին եւ կառավարութեան բարեմաղթութիւնները: Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադառնալու Կիպրոսի հայ համայնքին, ինչպէս նաեւ Լիբանանի ներկայ ընկերատնտեսական ու քաղաքական կացութեան:

Նորին Ս. Օծութիւնը ողջունելով պետութեան ներկայացուցիչին այցելութիւնը՝ յիշեցուց, որ Կիպրոսի հայ համայնքը միշտ եղած է պետութեան կողքին եւ զօրակից կիպրական հարցի արդար լուծման: Ան միաժամանակ իր գնահատանքը յայտնեց Արցախին, Հայաստանին ու Հայ Դատին գծով Կիպրոսի պետութեան ցուցաբերած ամուր զօրակցութեան:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀՆԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 16 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Վեհարանին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Բ.Կ.) Լիբանանի շրջանային վարչութեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու Հայաստանի Հանրապետութեան դեմ ազերի բանակին կատարած յարձակումին եւ անոր վտանգալից հետեւանքներուն: Հանդիպման ընթացքին շեշտուեցաւ Հայաստանի ու Արցախի անկախութեան ու հողային ամբողջականութեան ըսպառնացող վտանգին դիմաց մեր ժո-

ղովուրդին միասնականությունը ամուր պահելու եւ հայոց բանակին զօրավիգ կանգնելու հրամայականը:

Յայտնենք, որ օր մը առաջ Անթիլիասի Մայրավանքին մէջ, Վեհափառ Հայրապետին հրաւերով, համասփիւռքեան տարողութեամբ հանդիպում մը տեղի ունեցած էր, որուն ներկայ էին հայ կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր տէրը, հայ աւետարանական եկեղեցւոյ ներկայացուցիչը, ինչպէս նաեւ համայնքներու ու կուսակցութիւններու ներկայացուցիչները:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒԼԵՑ ՀԱՐԱՄԱՅԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ
ՆԱՀԱՆԳԻ ՆԱԽԱԳԱՀ ՌԸՆՕ ՄԻՒՍԵԼԻԵՆ**

Ուրբաթ, 23 Սեպտեմբերին, Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքին մէջ, հարաւային Ֆրանսայի Նահանգի Նախագահ՝ Ռընօ Միւսելիէ այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, գլխաւորելով տասը հոգիէ բաղկացած պատուիրակը եւ թղթակիցները:

Հանդիպումը տեւեց աւելի քան ժամ մը: Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան, Լիբանանի հայութեան, Հայաստանի ու Լիբանանի դիմագրաւող մարտահրաւերներուն, ինչպէս նաեւ Լիբանան-Ֆրանսա եւ Հայաստան-Ֆրանսա իւրայատուկ յարաբերութեան: Այս ծիրէն ներս, Նորին Ս. Օծութիւնը իր խոր գոհունակութիւնը յայտնեց Ֆրանսայի ցուցաբերած զօրակցութեան թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Լիբանանի նկատմամբ՝ այն սպասումով, որ այդ զօրակցութիւնը ըլլայ աւելի ամուր ու գործնական, մանաւանդ ահաւոր դժուարութիւններ ունեցող երկու երկիրներու գծով: Հայրապետը նաեւ իր գնահատանքն ու շնորհակալութիւնը

յայտնեց Ռընօ Միւսելիէին, Մարսէյի ճեմարանին իր կատարած նիւթական օժանդակութեան առիթով եւ մաղթեց, որ այդ օժանդակութիւնը ըլլայ շարունակական: Ապա, Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Հանդիպումէն ետք պատուիրակութիւնը այցելեց հայ ժողովուրդին Ցեղասպանութիւնն ու վերածնունդը մարմնացնող յուշարձան:

**ՀՈՈՍԵՆ ԶԱՐԻԹԱՍԻ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒԼԸ ԱՅՅԵԼԵՑ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Լիբանան կատարած իրենց այցելութեան ծիրէն ներս, Հռոմի Զարիթասի ներկայացուցիչները այցելեցին Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք եւ հանդիպում ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետ: Հանդիպման նաեւ ներկայ էին Լիբանանի Զարիթասի ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետը ընդհանուր գիծերով պարզեց Լիբանանի ժողովուրդին ընկերատնտեսական դժուարութիւնները եւ իր գնահատանքը յայտնեց Զարիթասին՝ անոր կատարած ընկերային օժանդակութիւններուն համար, միաժամանակ ան թելադրեց, որ մեր ժողովուրդի զաւակներուն կատարուած օժանդակութիւնները հեռու ըլլան պարագայական կերպով կատարուող օժանդակութիւններէ եւ ըլլան աւելի կազմակերպ ու ամբողջական:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԶՆԱՐ» ՊԱՐԱԽՈՒՄԱԸ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՕՏ**

Երկուշաբթի, 27 Սեպտեմբերին, Լիբանանի Համագգայինի «Զնար» պարախումբի անդամները, առաջնոր-

դուրեամբ իրենց վարչութեան, այցելեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Յայտնենք, որ անցնող շաբաթներու ընթացքին, ընդառաջելով Քոմոթիկի (Յունաստան) քաղաքապետութեան, պարախումբը ելոյթ ունեցած էր «Հայկական Պարերու Փառատուն»ին՝ արժանանալով բոլորին գնահատանքին: Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց պարախումբին եւ ընդհանրապէս Համազգայինի ընտանիքին ու մաղթեց, որ Համազգայինը իբրեւ մշակոյթի ու կրթութեան նուիրուած միութիւն, վերանորոգ թափով շարունակէ իր առաքելութիւնը Սփիւռքի բոլոր գաղութներէն ներս:

ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Չորեքշաբթի, 29 Սեպտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Ազգային Ծերանոցի տնօրէնին եւ խնամակալութեան: Անոնք եկած էին Վեհափառ Հայրապետին պարզելու հաստատութեան գործունեութիւնը, ինչպէս նաեւ դիմագրաւած մարտահրաւերները:

Առաջին հերթին, Նորին Սուրբ Օծութիւնը իր հայրական գուրգուրանքն ու հոգածութիւնը յայտնեց Ազգ. Ծերանոցին, ինչպէս նաեւ հաստատուած մեր հայրերուն ու մայրերուն եւ բարձր գնահատեց տնօրէնութեան, խնամակալութեան ու պաշտօնեութեան կողմէ կատարուող հոգածութիւնը: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը հրամայական նկատեց Ազգ. Ծերանոցին գործունեութեան եւ կարիքներուն ու ծրագիրներուն օժանդակելու անհրաժեշտութիւնը՝ յատկապէս այս դժուար օրերուն, երբ երկիրը տնտեսական տագնապի մէջ կը գտնուի:

ՎԱՏԻԿԱՆԻ ՄՕՏ ԼԻՔԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 11 Հոկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Վատիկանի մօտ Լիբանանի դեսպան՝ դոկտ. Ֆարիտ Ալ Խազէնին:

Հանդիպման ընթացքին կատարուած քննարկումներուն առանցքը հանդիսացան Լիբանանի ներկայ քաղաքական կացութիւնը եւ նախագահական յառաջիկայ ընտրութիւնները:

ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ ԽԱԶԻԿ ԱՐԺԻՆԵԱՆԸ

Հինգշաբթի, 13 Հոկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մարմնակազմաւորման ախոյեան՝ Խաչիկ Արժինեանը:

Արժինեան, իբրեւ Լիբանանի ախոյեան, զանազան երկիրներու մէջ մասնակցած է մարմնակազմաւորման մրցանքներու եւ՝ յաջողութիւններ արձանագրած: Ան 26 տարի առաջ եղած է Դպրեվանքի աշակերտ եւ շրջանաւարտ՝ Սուրէն Խանամիրեան ազգային քոլէճէն: Այժմ Խաչիկ Արժինեան կը ծառայէ լիբանանեան բանակին մէջ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԿՆԵՑԱՒ ԺՆՆԵՒ

Երկուշաբթի, 24 Հոկտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը չորսօրեայ այցելութեամբ մեկնեցաւ Ժընեւ, Չուիցերիա, ընկերակցութեամբ Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանի:

Ժընեւի մէջ Նորին Ս. Օծութիւնը

յաջորդաբար աշխատանքային հանդիպումներ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան առնչուած կարգ մը ծրագիրներու շուրջ:

**ՍԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇԳԱՐԵԱՆ՝
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՈՒՐԱԿ
ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Բերիոյ Հայոց Թեմի Հայրապետական Նուիրակ նշանակեց Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանը:
Երեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2022-

ին, սրբազանը մեկնեցաւ Հալեպ, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Չաւեն. Վրդ. Նաճարեանի եւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանի:

Հայրապետական Նուիրակ սրբազանը անցնող տարիներուն ծառայած է Դպրեվանքէն ներս իբրեւ հսկիչ եւ ուսուցիչ, Յունաստանի մէջ՝ որպէս հոգեւոր հովիւ, Թեհրանի Հայոց Թեմէն ներս՝ իբրեւ առաջնորդական փոխանորդ, Մայրավանքին մէջ՝ որպէս լուսարարապետ Մայր Տաճարի եւ Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022: Դ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիկեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022: ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան:

ԿԻՐԱԿԻ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022: Բ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան:

ԿԻՐԱԿԻ, 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2022: Գ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի Մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022: Դ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Արտաւազդ Վրդ. Շարոյեան:

ԿԻՐԱԿԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022: Ե. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգւ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022: Զ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգւ. Տ. Օշին Վրդ. Զուպերթանեան:

ԿԻՐԱԿԻ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022: Է. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ՏՕՆ ԳԻԻՏՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգւ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:

ԿԻՐԱԿԻ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022: Ը. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգւ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

